


ՆԵՐՍԵՍ ԿԱԳՐԱՄԱՆՈՎ

բզանային
Զատրոնների
բեմերու




«ԱՆՅԱՆԱԼ ԹԱՏԵՐԱՆԱԼ ԸՆԴԵՐՈՒԹՅՈՒՆ»

ԼԵՐՍԵՆ ԿԱԳՐԱՄԱՆՈՎ

8910
A 10/68



ՐԶԱՆԱՅԻՆ
ԽԱՇՐՈՆՆԵՐԻ
ԲԵՄԵՐՈՒՄ



1968

Н. В. КАГРАМАНОВ

На сценах районных театров

(На армянском языке)

Издание Армянского театрального общества
(АТО)

Ереван, 1968

ՆԱԽԱՐԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Մեր ժամանակներում գիտության և տեխնիկայի բուռն վերելքը, արվեստում ստեղծեց նոր ու բազմազան ձևեր: Կինոն, ռադիոն և հեռուստատեսությունը բացառիկ մեծ ազդեցություն ձեռք բերեցին կյանքի բոլոր ոլորտներում: Այսուհանդերձ, թատրոնը ինչպես հնում, այնպես էլ այժմ, մնաց որպես մեծ շափերի էմոցիոնալ արվեստ, որի անմիջական ներգործությունը մասնանրի վրա անսահման է: Սա վերաբերում է ոչ միայն քաղաքային, այլև շրջանային թատրոններին, որոնց մասին էլ հենց ուզում ենք խոսել մեր գրքում:

Խորհրդային Հայաստանում շրջանային թատրոնները խոշոր դեր են խաղացել գյուղական բնակչության դադափարական-դեղարվեստական դատարարակության գործում: Դա ակնբախ էր հատկապես քսանական թվականներին, երբ գյուղը հիմնականում կտրված էր քաղաքի հախուռն կյանքից: Սովետական իշխանության տուաջին տարիներին, երբ Հայաստանի գրեթե բոլոր գավառներում չկային մուլտուր-լուսավորական հիմ-

նարկներ, էլեկտրականութիւն, ռադիո և կինո, մի քանի էնտուզիաստ արտիստներ կազմեցին թատերական փոքրիկ խմբեր և սկսեցին շրջել լեռնային հեռավոր գյուղերը: Նրանք գյուղական հանդիսատեսներին ծանոթացնում էին Սունդուկյանի, Շիրալանդադեի, Օսորովսկու, Շեքսպիրի, Շիլլերի ստեղծագործութիւնների, ինչպես նաև խորհրդային գրողների առաջին պիեսների հետ:

Թատերական այդ շրջիկ խմբերի կազմակերպման գործում աչքի ընկան Ամո-Խարազյանը, Հասմիկը և նախահեղափոխական թատրոնի մի շարք արտիստներ:

Բաւականին կարճ ժամանակաւնթացքում (10-ից 15 տարի) մեր հանրապետութեան շրջանային համարյա բոլոր խոշոր կենտրոններում ստեղծվեցին մշտապես գործող թատրոններ. այն ժամանակներում դրանք միակ կուլտուրական օջախներն էին գյուղական վայրերում և ջանում էին ըստ հնարավորի քաղաքային հանդիսատեսների գեղարվեստական պահանջմունքները: Երեսնական թվականների վերջերին Հայաստանում արդեն ստեղծվել և գործում էին 20-ից ավելի շրջանային թատրոններ, առանց որոնց անհնար էր պատկերացնել այն ժամանակվա գյուղական բնակչութեան կուլտուրական կյանքը: Դժվարին, բայց պատվավոր աշխատանքի բովում տարիների հետ աճում և արվեստում հասակ էին առնում այդ թատրոնների արտիստներն ու ռեժիսյորները: Նրանցից շատերը ըստ արժանվոյն գնահատվելով՝ արժանացան պատվավոր կոչում-

ների, պարգևատրվեցին շքանշաններով, մեդալներով, ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրերով:

Այս գիրքը նվիրված է շուրս արտիստների, որոնց կյանքը անցել է անիվների վրա: Այդուհանդերձ կցանկանալի հենց սկզբից ընդգծել ռեժիսյորների դերը գյուղական արտիստների ստեղծագործական աճի ու հասունացման մեջ:


Անցած տարիների ընթացքում շատ ռեժիսյորներ են բնագործություններ ունեցել շրջանային թատրոններում, բայց քչերն են հետք թողել նրանց ստեղծագործական կյանքում: Այս առումով հիշատակության են արժանի Ա. Մաթևոսյանը (Աշմաթ), Արամ Խոսրովը, Յ. Սողոմոնյանը, Արամայիս Կալժունին, Աղասի Ալալյանը և ուրիշներ: Շրջանային ռեժիսյորներից շատերն այժմ անցել են թոշակի, ոմանք մահացել են, իսկ մյուսները մինչև այժմ էլ շարունակում են իրենց աշխատանքը ինքնագործունեության մեջ և ժողովրդական թատրոններում:

Դյուրին չէ շրջանային թատրոնի արտիստների կյանքն. ու ստեղծագործական աշխատանքը: Նրանք տարվա մեջ մոտ 300 օր անիվների վրա են: Այլ ալդպես տասնամյակներ շարունակ: Անցնելով լեռնային նեղիկ ուղիներով, գյուղական արտիստներն անընդհատ շտապում են, որպեսզի հասնեն անհամբերությամբ իրենց սպասող հանդիսականներին, որոնք ժամ առաջ կամենում են տեսնել նրանց արվեստը բնից և հաղորդակցվել կյանքի մեծ իրադարձություններին: Գյուղից-գյուղ շրջելով արվեստի այդ ժրաջան մշակ-

ները հաճախ ելույթ են ունենում նեղլիկ, երբեմն էլ բացօթյա բեմահարթակներում, փայտաշեն հյուղակներում, սառը հողի վրա:

Մի ամբողջ կյանք անխնների վրա: Դա առօրյա մի հերոսություն է, արժանի հիացմունքի: Եվ իմ այս գիրքը շրջանային թատրոնների այդ անձնակերպորժիչների մասին է: Թե որքանով է հաջողվել այն, ինձ դժվար է դատել: Բոլոր դեպքերում, հեշտ չէր հեղինակին, հավաքել և ի մի բերել ստեղծագործական կյանքի երեսուն տարվա մի պատմություն, որ ցրված է շրջանային թերթերի էջերում: Հաճախ էի հանդիպում այնպիսի հոգվածների ու թատերախոսությունների, որոնց մեջ դժվար էր գտնել այս կամ այն արտիստի գեղարվեստական դիմանկարը լրացնող կամ բնորոշող որևէ նյութ: Ստիպված դիմում էի նրանց խաղընկերներին, բանիմաց հանդիսականներին, ջանում օգտվել նրանց պահպանած տպավորություններից ու հուշերից: Եվ այս դեպքում էլ միշտ չէ, որ բավարար արդյունքի էի հասնում: Տարիները շատ բան էին ջնջել մարդկանց հիշողությունից: Եվ եթե ստելացնենք և այն, որ ժամանակի ընթացքում շրջանային թատրոնների խաղացանկից դուրս են մնացել գրեթե բոլոր այն բեմադրությունները, որոնց մեջ տարիներ առաջ փայլել են գյուղական նշանավոր արտիստները, իսկ անողորմ ժամանակն այժմ իր կնիքն է դրել նրանց ֆիզիկական և ստեղծագործական նկարագրի վրա, ապա լիովին պարզ կդառնա, թե ինչ անհաղթահարելի դժվարությունների առաջ է կանգնած ևղել այս գրքի հեղինակը: Եվ այն

ամենը, ինչ ասվում է իմ աշխատութեան մեջ ժողո-
վրդական արտիստներ Արուս Խուզանյանի, Վրույր
Փանոսյանի, վաստակավոր արտիստներ Արփիկ Ղա-
ղալյանի, Մելիտոս Ղաղարյանի կյանքի և ստեղծա-
դործական ուղու մասին, դա միայն մի փոքրիկ մասն
է այն մեծ վաստակի ու անգնահատելի ծառայութեան-
ների, որ նրանք մատուցել են հայրենի արվեստին ու
հարնգատ ժողովրդին:



ԱՐՈՒՍ ԽՈՒԴԱՆՅԱՆ

(ՀՍՍՀ ժողովրդական դերասանուհի)

Կիրովականի լայն ու ազատ փողոցներով, դանդաղ քայլում է տարեց մի կին: Նրա դեմքը բարի է, հայացքը՝ մտածկոտ: Նա քայլում է, և թեպետ ոչ աջ է նայում և ոչ էլ ձախ, սակայն հաճույքով նկատում է, թե ինչպես է փոխվել հարազատ քաղաքը: Նրան հիացնում են ասֆալտապատ փողոցները, տուֆակերտ շենքերը, գեղեցիկ հրապարակները, խանութների ցուցափեղկերից ամկայծող լույսերի հրավառությունը, փողոցներով մեկը մյուսի հետևից վազող գեղեցիկ ավտոներն ու ավտոբուսները:

Կողմնակի դիտողին կարող է թվալ, որ փողոցով անցնող կինը պարփակված է ինքն իր մեջ և այն, ինչ տեղի է ունենում շրջապատում, նրան շատ քիչ է հետաքրքրում:

Բայց այդ կարող է միայն թվալ... տարեց կինը քայլում էր և այդ պահին նրա մտքերը թռել էին երիտասարդության տարիների հեռավոր մշուշը, երբ ինքը միայն երեսունհինգ տարեկան էր և ոչ յոթանասուն, ու ամառին

անգամ ոտք դրեց այդ քաղաքը՝ Ղարաքիլիսան... Նրա աչքերի առաջ մեկ վայրկյանում կենդանացան քաղաքի ցածրիկ, մեկ հարկանի փայտաշեն տները, ծուռ ու մուռ, կեղտոտ փողոցները...

Կարծես այդ շատ վաղուց էր... Եվ գուցե ոչ այնքան վաղուց...

Սակայն ուշադրությամբ դիտողը անպայման կնկատեր, որ քայլող կնոջ աչքերում կյանքի անշեջ կրակ կա և չի լվացվում մեկուսացած մարդու տարտամ հայացքը: Փողոցում հանդիպակաց քայլում են համաքաղաքացիք՝ կանայք, տղամարդիկ, ծերունիներ ու պատանիներ, ոմանք դանդաղ, ոմանք արագ և բավական է, որպեսզի նրանցից որևէ մեկը նկատի տարեց կնոջը, որպեսզի անմիջապես հնչի ջերմագին ողջույնը:

— Բարև Արուս... Նման պահերին նուրբ և հրճվագին մի ժպիտ գեղեցկացնում էր կնոջ դեմքը: Նա չէր թաքցնում ուրախությունը, որ իրեն չեն մոռանում, որ հիշում են ամեն ժամ և իրենց հարգանքը մատուցում: Նրանք, ովքեր չեն ճանաչում «անհայտ» տիկնոջը, շտապում են հարցնել և պատասխանը չի ուշանում:

— Նա մեր Արուսն է, հանրապետության ժողովրդական դերասանուհին: Տիկին Խուդանյանը մեր դեպուտատն է ու սիրելի արվեստագիտուհին:

Դանդաղ քայլում է նա փողոցով, սրտում ամուր պահելով մարդկանց ջերմ գուրգուրանքը և ակամա վերհիշելով անցյալի այն անմոռաց պահերը, երբ ինքն ամեն օր բեմ էր բարձրանում իր խաղով հիացնելու հանդիսականներին:

Տասը տարի առաջ էր, որ Արուս Խուդանյանը հրա-
ժեշտ տալով բեմին, գնաց հանգստի: Կիրովականցիները
չեն մոռանում սիրված դերասանուհուն, որի արվեստով
իրենք մի քանի տասնյակ տարիներ հիշվում էին:

Հուշերը տանում են դերասանուհուն դեպի մանկության
օրերը, սիրած Ախալքալաքը, ուր 1897 թվականին նա
ծնվել և հասակ է առել: Հայրենի տունը ոչնչով չէր տար-
բերվում մյուս չքավորների տներից: Արուսին, սակայն,
թվում էր, թե իրենց տունն ավելի աղքատիկ էր, քան
մյուսներինը, քանի որ նրա հայրը՝ Գուսան Սամթին մըշ-
տական եկամուտ չուներ, և ստիպված էր ամեն օր լսել
կնոջ տրտունջներն ու կշտամբանքները:

Արուս Խուդանյանը ամբողջ կյանքում վառ է պահել
իր սիրելի հոր պայծառ հիշատակը, որը նրա սրտում մա-
նուկ հասակից արթնացրել է արվեստասիրության մեծ
զգացմունքը: Գուսան Սամթին ոչ միայն երգում, այլև հո-
րինում էր բալում երգեր: Իր հոր և Ջիվանու ստեղծագոր-
ծական բարեկամությունը, համատեղ ելույթները փոքրիկ
Արուսի տեսադաշտից աննկատ չմնացին: Հաճախ Ջիվա-
նին հյուրընկալում էր Սամթին և երբ նրանք միասին
սկսում էին տարվել իրենց սիրելի գործով, փոքրիկ Արու-
սը կծկվում էր նստած տեղում և ժամերով ունկնդրում
երկու գուսանների ախորժալուր երգեցողությունը: Նա նույ-
նիսկ չնկատեց, թե ինչպես հոր մեղեդիների ազդեցության
ներքո ինքն էլ սկսեց երգել: Դա Արուսի համար մի նոր
երջանկություն էր, որը հոր և աղջկա հոգեկան աշխարհը
միաձուլեց: Երգելով ու արտասանելով ջնորհալի աղջիկը
արժանանում է իր առաջին ունկնդիրների ուշադրությանը

և ծափահարություններին: Դա ոգևորում է Արուսին և դպրոցական երեկուկներում կամ ընկերական շրջապատում նա ավելի հաճախ է սկսում իր շնորհները պարզել իրեն համակրող ունկնդիրներին:

Հետամնաց Ախալքալակում միապաղաղ և տխուր էին անցնում Արուսի երիտասարդական օրերը: Նա ամբողջ սրտով ծագտում էր գնալ դեպի մեծ քաղաքները, ավելի լավ ճանաչել կյանքը, աշխարհը, մարդկանց: Զսան տարեկան հասակում Արուսը մեկնում է Թիֆլիս և աշխատանքի ընդունվում կար ու ձևի արհեստանոցներից մեկում: Թատրոնի նկատմամբ տածած իր սիրո գաղտնիքը նա քչերի հետ էր կիսում, բայց և չէր դադարում մտածել բեմի մասին: Եվ կար ու ձևի արհեստանոցը նրան թվում էր թատրոն, իսկ ընկերուհիները՝ ապագա ներկայացումների մասնակիցներ:

Անհրաժեշտ էր միայն գործն այնպես կազմակերպել, որպեսզի արհեստանոցն ամեն ինչով նմանվեր թատրոնին: Եվ Արուսը սկսեց խաղընկերների դերերն արտագրել, նրանց զգեստներ հագցնել ու ընդմիջումների ժամերին զվարճացնել բանվորուհիներին թատերական բեմադրություններով: Նա երջանիկ էր զգում իրեն, որ հնարավորություն տվեց մարդկանց ծանր իրականությունից կտրվել, սլանալ դեպի ստեղծագործության և թատերական իմպրովիզացիաների հմայիչ աշխարհը:

Հարապատները, ծանոթները, հարևանուհիները սիրում էին Արուսին, լավ երգեցողության համար: Եվ աղջկա ծանր կացությունը թեթևացնելու նպատակով պատեհի առիթով հաճախ հրավիրում էին նրան իրենց խնջույքներին երգելու:

Արուսը ժամանակ առ ժամանակ հաճախում էր Թիֆ-
լիսի հայկական դրամատիկ թատրոնի ներկայացումներին:
Նա բարձրանում էր գալլորկայի ամենավերջին կարգը և
կծկված, սրտի տրոփումով, հետևում պրոֆեսիոնալ ար-
տիստների խաղին, մտքում կրկնելով նրանց խոսքերը,
շարժումները, և իրեն պատկերացնելով իբրև ներկայացման
մասնակից: Այդ ամենը սակայն հեռավոր մի երազանք էր,
և նա ստիպված էր լռել ու սպասել այն ժամին և այն
բարի մարդուն, որը կբռներ իր ձեռքից ու կտաներ դեպի
բեմ:

Այդ ժամը հասավ: Իր հեռավոր բարեկամների տանը
խնջույք էր: Արուսը մեծ հաջողությամբ երգում և բուռն
ծափերի ներքո ուրախ, հուզված նստում է իր տեղը: Այդ
պահին նրան է մոտենում տարիքավոր մի մարդ, որին
խսկույն ճանաչում է. դա ժողովրդի կողմից շատ սիրված
բազմաթիվ տաղերի հեղինակ Վրույրն էր: Անվանի արվես-
տագետին շատ էր դուր եկել Արուսի երգեցողությունը:
Նա հարկ համարեց մոտենալ աղջկան և անկեղծորեն շնոր-
հավորել: Բացի հաճելի ձայնից և ոկալ ընդունակություն-
ներից Վրույրը Արուսի մեջ նկատեց արտիստականություն
և բեմական ծիրքի նշույլ:

Այդ երեկոն Արուսի համար դարձավ բախտորոշ:
Վրույրը նրան անձամբ հրավիրեց տեղի նորակալմ թատ-
րոնը, որի ղեկավարն էր նշանավոր արտիստ Հովսեփ
Ոսկանյանը: Այդ թատերախմբում էին հայ բեմի փառա-
բանված աստղերը՝ Հասմիկը, Արուս Ոսկանյանը և
ուրիշներ:

Վրույրի երաջխավորությունը բավական էր, որպեսզի

բեմական փորձ չունեցող, արվեստի գաղտնիքներից անտեղյակ օրիորդին ընդունեին մի այնպիսի թատրոն, ուր տալիս էին նաև երաժշտական ներկայացումներ: Մեծ փորձ ունեցող դերասաններին Արուսը գրավեց ոչ միայն ծախով, այլև իր խաղարվեստի պարզությամբ, անմիջականությամբ: Նա խաղում էր առանց ավելորդ ճիգի, երբեք չէր կորցնում չափի զգացումը: Հայ բեմի աստղերի շրջապատում էլ Արուսը սկսում է իր բեմական առաջին անհամարձակ քայլերը պրոֆեսիոնալ խմբում: Նա ամեն օր զգում էր իր բեմական ընկերների հոգատարությունը և ստեղծագործական օգնությունը: Ահա թե ինչու արտիստուհին միշտ ջերմությամբ ու երախտագիտությամբ է հիշում իր մեծ ուսուցիչներին, որոնց հետ թեև փոքր դերերում, բայց խաղացել է «Արշին մալ Ալան», «Ուշ լինի, նուշ լինի», «Աշուղ Ղարիբ» և մի շարք այլ երաժշտական ներկայացումներում: Արուսի խաղարվեստը գրավում է Ա. Ծիրվանզադեին, իսկ Հ. Աթեյանը դերասանուհու ապագան տեսնում է դրամատիկական թատրոնում:

1920 թվականին Արուսն ամուսնանում է: Այդ հանգամանքը մի առ ժամանակ նրան ստիպում է կտրվել թատրոնից: Արուսը միայն երբեմն մասնակցում էր պատահական խմբերի ներկայացումներին, որոնց կազմը ներկայացումից հետո ցրվում էր: Նա զրկված էր մշտական խմբերի անդամ լինելու հնարավորությունից: Արուսին շատ էին խանգարում ընտանեկան պայմաններն ու դժվարությունները, որոնք հաղթահարելու համար նա մեծ ջանքեր էր դնում և ջղեր քայքայում:

Թատրոնի նկատմամբ ունեցած բուռն սերը գերում է երիտասարդ դերասանուհուն: Նա այլևս չի ցանկանում ուրիշ կյանքով ապրել: Հրամայական ներքին մի ուժ համառորեն տանում է Արուսին իր մեծ նպատակի ուղիով: Նա չէր մոռացել Աբելյանի խրախուսանքներն ու խորհուրդները: Եվ գնաց մեծ դերասանի նշած ճանապարհով: Արուսը շուտով հայտնի դարձավ թատերական շրջապատում և ռեժիսյորները սկսեցին նրան հրավիրել մասնակցելու իրենց բեմադրություններում:

Արուս Խուդանյանը Թիֆլիսի խմբերում խաղացած իր դերերից շատ բան չի հիշում: Այդ տարիներին արտիստուհուն չվիճակվեց գլխավոր դերերում հանդես գալ, սակայն նրան համակրում էին բոլորը՝ թատրոնի նկատմամբ տածած սիրո և լուրջ վերաբերմունքի համար:

Տարիներն անցնում էին, Արուսը ներկայացումից ներկայացում հասակ էր առնում, ձեռք բերում պրոֆեսիոնալ հասունություն: Ավագ ընկերների բեմական մեծ փորձն ուսումնասիրելով, նա աստիճանաբար վարպետանում էր իր արվեստում:

Արուսը գտնվում էր բեմական աստղերի շրջապատում. դա լավ էր, բայց և նրան անհրաժեշտ էր լինել մի այլ խմբի անդամ, մի այլ քաղաքում, որպեսզի հնարավորություն ունենար արվեստով հավասար ընկերների շրջապատում ավելի լրիվորեն ու անկաջկանդ դրսևորել բեմական իր շնորհները: Այս բանը լավ էր գիտակցում և Արուս Խուդանյանը, որը երազում էր մի նոր, իր ուժերին ավելի համապատասխան թատերախումբ: Նա միաժամանակ շատ էր փափագում լինել մայր հայրենիքում, աշխատել Հա-

յաստանի շրջանային թատրոններից որևէ մեկում և ամբողջ կյանքը նվիրել հայ արվեստին:

Արուս Խուդանյանի երազանքներն իրականացան: 1930 թվականին մի առիթով ռեժիսյոր Աշոտ Մաթևոսյանը (Աշմաթ) տեսնելով դերասանուհուն բեմի վրա, հավանում է նրան և հրավիրում աշխատելու Ղարաքիլիսայի նորաստեղծ թատրոնում: Արուսը մեծ սիրով համաձայնվում է և տեղափոխվում իրեն անծանոթ այդ քաղաքը:

Արուս Խուդանյանի ստեղծագործական ուղին սերտորեն կապված է Կիրովականի թատրոնի հետ, ուր նա աշխատում է շուրջ 35 տարի:

Ղարաքիլիսան իբրև ամառանոցային հանգստավայր, վաղուց հայտնի էր, սակայն հեղափոխությունից հետո ավելի մեծ համբավ ձեռք բերեց: Նշանավոր արտիստներն (Աբելյան, Հասմիկ, Ամո Խարապյան) իրենց խմբերով սկսեցին հաճախակի այցելել և լավագույն ներկայացումներով սպասարկել տեղի թատերասեր հասարակայնությանը: Դրանց այցելությունները, սակայն, մասնակի բնույթ են կրում, և նոր, պրոֆեսիոնալ թատրոնի հիմնադրումը Ղարաքիլիսայում, առաջնահերթ հարց էր: Մանավանդ որ, հարևան քաղաքում՝ Լենինականում վաղուց արդեն հիմնադրվել էր մշակութային մի այդպիսի օջախ: Ղարաքիլիսայում թատրոն կազմակերպելու և այն ղեկավարելու գործը հանձնարարվեց Աշոտ Մաթևոսյանին (Աշմաթ), որը օժտված էր ոչ միայն ստեղծագործական, այլև կազմակերպական ընդունակություններով:

Ականատեսների պատմելով, 1931 թվի հունվարի 28-ին, քաղաքում մեծ աշխուժություն էր տիրում: Այդ օրն



Արուստուկանյան



Մաքիդուլա (աֆառ)



Սալոմե (սեփի մեկ զոհ)

Աւուս Խուղանայանը Կիրովականի քաւարոնի մի խումբ դերասանների հետ



Հ 10168

առաջին անգամ բացվեց նորաստեղծ, պրոֆեսիոնալ թատրոնի վարագույրը և հանդիսատեսները երջանկություն ունեցան տեսնելու առաջին ներկայացումը: Թատրոնի գեղարվեստական մասի վարիչ՝ ռեժիսոր Աշոտ Մաթևոսյանը բեմադրել էր Յու. Յանովսկու «Ցասում»-ը (Նկարիչ Կ. Մինասյան):

Առաջին ներկայացման մեծ հաջողությունը խանդավառում է ամբողջ խմբին և խթանում նրան աշխատելու արվելի մեծ եռանդով ու արդյունավետությամբ:

Կիրովականի թատրոնի 25-ամյակին նվիրված իր հոդվածում, թատրոնի գլխավոր ռեժիսոր Լ. Կարապետյանը 1956 թվականին գրել է, որ առաջին բեմադրությունը մեծ խթան հանդիսացավ երիտասարդության համար. բեմադրվեցին՝ «Սևիլ», «Նավթ», «Դատավճիռ» և մի շարք այլ բեմադրություններ, որոնք նույնպես մեծ ոգևորությամբ ընդունվեցին բաղադրի թատերասեր հասարակայնության կողմից: Առաջին տարիներին թատրոնի գեղարվեստական աճին մեծ օժանդակություն էին ցույց տալիս առանձին բեմադրությունների հրավիրված մի շարք նշանավոր ռեժիսորներ և արտիստներ՝ Ա. Բուրջալյանը, Վ. Աճեմյանը, Տ. Շամիրխանյանը, Ա. Ոսկանյանը, Հասմիկը, Ժասմենը, Լ. Ներսիսյանը, Վահրամ Փափապյանը, որոնք մասնակցում էին երիտասարդ արտիստների ներկայացումներում և իրենց արվեստի խոսքն ասում: Դրանք անմոռանալի ներկայացումներ էին. հաճելի էր տեսնել, թե ինչպես երիտասարդ դերասանները, վարակվելով հայ բեմի կորիֆեյների արվեստով, մոռացության գիրկը նետված, մեծ եռան-



դով կատարում էին իրենց դերերը, ուսումնասիրում նրանց տաղանդի ու բեմական ճշմարտության գաղտնիքները:

Այս իմաստով Կիրովականի թատրոնի ստեղծագործական կյանքում մեծ դեր է խաղացել մեծատաղանդ Հովհաննես Աբեյանը, որը մինչև իր կյանքի վերջը սերտ կապերի մեջ էր իր սիրած թատրոնի հետ: Պատահական չէր, որ մեծ դերասանի մահից հետո Կիրովականի թատրոնին շնորհվեց նրա անունը:

Հ. Աբեյանի անմիջական ղեկավարությամբ Կիրովականում բեմադրվում են «Պատվի համար», «Նամուս», «Չար ոգի», «Տրիլի», «Օթելլո» և այլ պիեսներ, որոնք մեծ նշանակություն ունեցան ոչ միայն առանձին դերասանների, այլև ամբողջ կոլեկտիվի ստեղծագործական աճի համար: Կիրովականի թատրոնը հենց սկզբից գնաց ռեալիստի ուղիով: Դրան շատ նպաստեց Աբեյանի խաղարվեստը: Նրա պահանջկոտությունը, դիտողությունները և ցուցմունքները բխում էին պրոֆեսիոնալիզմի ակունքներից:

Ահա այսպիսի բարենպաստ ստեղծագործական պայմաններում է Կիրովականի թատրոն մուտք գործում Արուս Խոսրոյանը: Նա առաջին անգամ հանդես է գալիս Յանովսկու պիեսում, խարակտերային փոքրիկ մի դերով: Դերասանուհու բնական և ճշմարտացի խաղը աննկատ չի մնում: Նրան հանձնարարում են նորանոր դերեր:

Թատրոնի առաջին խաղաշրջանը Արուսի համար դառնում է բովանդակալից: Նա խաղում է մի քանի գլխավոր դերեր՝ Սևիլ—Սևիլ—ում, Շպպանիկ—«Նամուս»-ում, Շուշան—«Պեպո»-ում, Երանուհի—«Պատվի համար»-ում, Սա-

լումն—«էլի մեկ զոհ»-ում և Ապի—Վ. Վաղարշյանի «Նավթ» պիեսում:

Նախապետական կապանքներից ազատագրված Սևիլի կերպարը, դերասանուհին մարմնավորում է անկեղծությամբ, մայրական քնքշանքով և կնոջ հպարտ արժանապատվությամբ: Այժմեական և դասական շատ ստեղծագործություններում մոր կերպարը գտնում է իր փայլուն դերակատարին՝ հանձին Արուս Խոռանյանի: Թվում է, որ նույնանման կերպարներ կերտելիս դերասանուհին չի կարող վերծ մնալ շտամպից, սակայն նա վարմանալիորեն անկրկնելի էր մայրական դերերում: Նրա Շուշանն ու Երանուհին, Սալոմեն և Ապին երբեք չէին նմանվում, չէին հիշեցնում մեկը մյուսին:

Մի տարվա ընթացքում յոթ դեր կերպարանավորելը ստեղծագործական մեծ քննություն էր դերասանուհու համար: Մեծ աշխատասիրությունն ու վարպետությունը օգնում են Արուսին պատվով դուրս գալ այդ քննությունից: Ներկայացումից-ներկայացում նրա խաղացած մայրերը կատարելագործվում են, դառնում կենսալից և ճշմարտացի, ինքնատիպ:

Անհավատալի է, բայց փաստ է այն, որ դերասանուհին երեսունհինգ տարվա ընթացքում աֆռելի քանակությամբ նոր կերպարներ է ստեղծել և ոչ մի անգամ թատերագիտության կողմից չի քննադատվել: Այս, իհարկե, չի նշանակում, թե Արուս Խոռանյանն իր բոլոր դերերը խաղացել է հավասար մակարդակով կամ առանց թերությունների: Եղել են և թույլ դերակատարումներ, սակայն նա

միշտ աշխատել է վերացնել թերությունները և հասնել առաջադրված նպատակին:

Հ. Աբելյանի մեծ բարեկամությունը Կիրովականի թատրոնի հետ երկար ժամանակ նպաստել է երիտասարդ կոլեկտիվի ստեղծագործական աճին:

Հայ բեմի վետերանը իր կյանքի վերջին տարիներին, սրտանց օգնում էր իր կրտսեր ընկերներին, աշխատում նրանց դերերի վրա, ոգևորում: Հենց միայն նրա ներկայությունը թատրոնում, ստիպում էր դերասաններին միշտ հավաքված և ներքնապես պատրաստ լինել, աշխատել ստեղծագործական ամբողջ կարողությամբ: Երբ Արուսը Աբելյանի օժանդակությամբ որևէ դեր էր մարմնավորում և հասնում հաջողության, կրկնակի երջանիկ էր պզում իրեն: Ներկայացումները տոնի էին վերածվում, եթե խաղում էր և Աբելյանը:

Այժմ Արուս Խուդանյանը հասակ է առել և միայն հուշերով է ջերմացնում իր սիրտը: Ու թեև տարիների հետ շատ բան մոռացվել է, բայց Աբելյանի հետ ունեցած հանդիպումների հիշատակները նա սրբությամբ պահպանում է իր սրտում, փբքև թանկագին մի գանձ:

Արուսի ստեղծագործական հաջողություններում մեծ դեր են կատարել նրա բեմական խաղընկերները և մասնավորապես Աբելյանը. նրա օգնությամբ դերասանուհին մարմնավորեց Զառնիշանին («Զար ոգի») և ուրիշ շատ դերեր:

— Երբ որևէ նոր դեր էին ինձ հանձնարարում, ես պրկվում էի քնից ու հանգստից, նույնիսկ կորցնում էի ախորժակս: Ես բարձրանում էի մեր անտառները և բնու-

թյան ծոցում, առանձնության մեջ ուսումնասիրում իմ դերի հոգեկան աշխարհը, այն դարձնելով իմ սեփականը, մոռացության մատնելով արտիստական իմ «ես»-ը: Ես այնպես էի վարվում, ինչպես իմ ապագա հերոսուհին կվարվեր. այնպես էի գործում՝ ինչպես նա կարող էր գործել, ինչպես հեղինակն էր նրան պատկերացրել...

Տարիներն անցնում էին. Արուսե օր-օրի աճում էր: Մամուլը սկսեց հաճախակի նշել նրա ձեռք բերած հաջողությունները տարբեր դերերում:

1934 թվականին հայ բեմի վետերան Արմեն Արմենյանը բեմադրում է Ջ. Ջաբարլու «Յաշար»-ը և Վահրամովի «Թռիչք»-ը: Այս պիեսներում ևս Արուսը հասնում է լզալի հաջողության:

Այն տարիների մամուլի էջերում, ցավոք, շատ քիչ բան է ասված Արուսի խաղացած դերերի մասին: Թատերախոսները չեն մեկնաբանել, չեն վերլուծել դերասանուհու խաղաոճը, նրա կերտած կերպարների հոգեկան աշխարհը:

Արուս Խուդանյանի և ամբողջ Կիրովականի թատրոնի ստեղծագործական կյանքում Ա. Գուլակյանի «Արշալուսին» պիեսի բեմադրությունը մեծ երևույթ դարձավ: Թատերախմբում Արուսն էր այն միակ դերասանուհին, որին կարելի եղավ վստահել Աննայի բավականին բարդ դերը: Պետք է նշել նաև այն, որ Սունդուկյանի անվան թատրոնում հայ մոր այդ կերպարն արդեն մարմնավորել էր նշանավոր դերասանուհի Հասմիկը, որի համար էլ գրվել էր դերը, ինչպես հայտարարել էր պիեսի հեղինակը: Եվ ահա մի տեսակ հեռակա մրցություն ստեղծվեց երկու թատրոնների միջև: Եվ, չնայած անհավասար ուժերին ու

տեխնիկական հնարավորություններին, Կիրովականի թատրոնի կոլեկտիվը չվախեցավ դժվարություններից: Նա հանդես եկավ պիեսի իր ուրույն մեկնաբանությամբ: Բեմադրությունից հետո մամուլի և հասարակայնության միասնական կարծիքն այն էր, որ «Արշալույսին» բեմադրությունը, ռեժիսյորի և հատկապես դերասանների ցուցադրած արվեստը իրավունք էր տալիս ասելու, թե հանրապետության մեջ հանձին Կիրովականի թատրոնի, ստեղծվել է մշակութային այնպիսի օջախ, որը համարձակ կերպով կարող է ելույթ ունենալ միության բոլոր քաղաքներում և արժանանալ մեծ դրվատանքի:

Պետք է նշենք, որ ներկայացումն այնպիսի մակարդակ ուներ, որ Կիրովականցիները չվախեցան այն ցուցադրել Գ. Սումգուլյանի անվան փառաբանված թատրոնի բեմում: «Արշալույսին» բեմադրության հաջողությունը պայմանավորված էր ոչ այնքան ռեժիսյորական աշխատանքով, (բեմադրություն՝ Ադրբեջանական ՍՍՀ ժողովրդական արտիստ Խորեն Հարությունյանի). որքան արտիստական անսամբլի փայլուն խաղարվեստով: Աննայի դերում Արուս Խուլանյանի տաղանդը շողաց ամբողջ ուժգնությամբ:

Բերենք մի քանի գնահատականներ մամուլից.

Երևանում Կիրովականի թատրոնի հյուրախաղերի առթիվ «Սովետական Հայաստան» թերթում տպագրած իր հոդվածում Ա. Բաբայանը գրում է.

«Արուս Խուլանյանի դերակատարումը գեղջկումի մոր՝ Աննայի դերում, անշնչելի տպավորություն է թողնում»: Զննադատությունը գրեթե միահամուռ նշում էր՝ «2ի կարելի հիացմունքով չխոսել վաստակավոր դերասանուհի

Արուս Խուդանյանի դերակատարության մասին: Նա ստեղծել է ամբողջական ու ավարտված մոր — պարտիվանուհու կերպար: Անջնջելի տպավորություն են թողնում այն տեսարանները, երբ մայրը հրաժարվում է մատնել իր որդուն: Այս կտորում խոսում է մոր սիրտը, հոգին, փոթորկվում նրա ամբողջ ներքինը: Դերասանուհին գերազանց է դաշնակցականների նկատմամբ իր ունեցած ատելության և անհաշտ պայքարի տեսարաններում»:

Զսան տարուց հետո վերհիշելով Արուս Խուդանյանի դերակատարումը «Արշալույսին»-ի առաջին բեմադրության մեջ, հիացմունքի մի Վգացմունք ստիպում է ինձ խորհել այն մասին, թե ինչպիսի վարպետությամբ էր դերասանուհին ստեղծել կերպարը մի մոր, որը չէր հասկանում, թե ինչ էր կատարվում իր շուրջը, ինչ են ցանկանում իրենից կորսել կատաղած խմբապետները: Հանդիսատեսները դերասանուհու աչքերում տեսնում էին ներքին մի մեծ փոթորիկ, այրող կարոտ, հոգեկան կորույթ, ջղերի մենամարտ և մայրական մեծ վիշտ: Արուս Խուդանյանը գերում էր բոլորին իր բնական խաղով: Նրա Աննան բեմում շարժվում էր ծեր կնոջ սովորական քայլվածքով, և իրեն պահում էր այնպես սովորական, որ կարծես նստած է իր խրճիթում և Վբաղված միայն առօրյա հոգսերով: Երբեմն թվում էր ինձ, թե Արուս Խուդանյանի Աննային ոչինչ չի հետաքրքրում, որ նա կամ շատ հեռու է կանգնած իր շուրջը ծավալվող արյունահեղ իրադարձություններից և կամ վիշտը այդ խեղճ կնոջը իր ամբողջ ծանրությամբ այնպես է ճզմել, որ նա կորցրել է իր դատողությունը: Սակայն այդ միայն թվում էր. դահլիճից հանդիսատես-

ները Աննայի աչքերում տեսնում էին նրա հոգեկան փոթորիկը, մայրական սիրո անշեջ կրակը, ծեր կնոջ ներքին տանջալից գոտեմարտը իր որդու՝ նոր կյանքի համար պայքարող զինվորի համար:

Մեծ տառապանքով չեզոքացնելով հոգեկան երկվորյունը, Աննա-Խուդանյանը թշնամիների հետ ունեցած ջղերի մենամարտում ևս հաղթանակ էր շահում՝ իր անկեղծ խաղով դառնալով դահլիճում նստած հանդիսականներից յուրաքանչյուրի հարապատ մայրը: Եվ երբ ներկայացումից հետո դերասանուհին հոգնած քայլերով տուն էր դառնում, փողոցում նրան հարգանքով շրջապատում էին հանդիսականներն ու իրենց շնորհակալությունը հայտնում ազնիվ մի մոր կերպար ստեղծելու համար:

Ա. Խուդանյանին շատ հաճելի էր լսել և ընթերցել կարծիքներ իր դերակատարության մասին և առանձնապես ուրախացավ, երբ պիեսի հեղինակ Արմեն Գուլակյանը շնորհավորեց նրան և ասաց՝ «Մինչև այսօր Աննայի միակ դերակատարը Հասմիկն էր, որի համար ես հատկապես գրել էի այդ դերը, իսկ այժմ ես տեսնում եմ, որ երկրորդ լիարժեք դերակատարը դուք եք»: Իր դրական կարծիքը հայտնեց և Աննայի առաջին փայլուն դերակատարը՝ Հասմիկը: Նա Արուսին նվիրեց իր լուսանկարը մի կարծ, բայց պերճախոս մակագրությամբ՝

«Աննային—Աննայից»:

Գուլակյանի «Արջալույսին» պիեսը Կիրովականի թատրոնում բեմադրվել է երեք անգամ՝ 1939-ին, 1950-ին և 1956-ին: Եվ միշտ էլ Աննայի անփոխարինելի դերակատարը մնաց Արուս Խուդանյանը: Այդ բեմադրությունը

ներկայացվեց 1939-ին Մոսկվայում կայացած միջշրջանային թատրոնների փառատոնում:

Մոսկվայի հասարակայնությունը նույնպես բարձր գնահատեց դերասանուհու խաղարվեստը: Երբ Արուսը վերադարձավ հայրենիք, Հայաստանի կառավարությունը նրան արժանացրեց հանրապետության վաստակավոր արտիստի կոչման:

Տարեց-տարի հարստանում էր դերասանուհու խաղացանկը: Տատիկի մի նոր համուլիչ կերպար է ստեղծում Արուս Խուդանյանը Հացագործյանի և Խուդավերդյանի «Թող բացվեն վարդերը» պիեսում: Դերասանուհու խաղարվեստը աչքի է ընկնում իր պարզությամբ և անկեղծությամբ: Մեծ հաջողության է հասնում դերասանուհին նաև Սոֆիա Բրիստաֆորովնայի դերում («Կույր երաժիշտը» — Մ. Բոչարյան): Դերասանուհին մեկը մյուսի ետևից իր խաղացանկը հարստացնում է նոր դերերով՝ հանդես գալով Լ. Միքայելյանի «Գոջ», Ալ. Շիրվանյադեի «Ավերակների վրա», Բ. Լավրենսի «Հանուն նրանց, ովքեր ծովում են», Կ. Սիմոնովի «Ռուսական հարց» և այլ պիեսների բեմադրություններում:

Գ. Մդիվանու «Բարի կամքի մարդիկ» պիեսի բեմադրության մեջ Արուս Խուդանյանը հասավ նոր հաջողության: «Կոմունիստ» թերթում տպագրած իր հոդվածում Լևոն Խալաթյանը ասում է՝ «Ներկայացման մեջ հաջող է ստացվել Գաբուի կնոջ՝ Կամայի կերպարը: Վաստակավոր դերասանուհի Արուս Խուդանյանը կարողացել է ընդգծել Կամայի մայրական ջերմ զգացմունքները, նրա խորատեղությունը պատերազմի հրձիգների նկատմամբ: Դերա-

սանուհին ռեալիստորեն վերարտադրեց Կամայի հոգեբանության մեջ տեղի ունեցած փոփոխումը, նրա անցումը դեպի խաղաղության կողմնակիցները»:

Փայլուն կատարեց Արուս Խուդանյանը միջնորդ կնոջ դերը հայ մեծանուն գուսան Սայաթ-Նովային նվիրված բեմադրության մեջ:

Արուս Խուդանյանի ստեղծագործական կյանքում հատուկ տեղ են գրավել այնպիսի դերեր, ինչպիսիք են՝ Սալոմեն («Էլի մեկ զոհ»), Խամփերին («Խաթաբալա»), Կաբանիխան («Ամպրոպ»), Էմիլիան («Օթելլո»), Գալչիխան («Անմեղ մեղավորներ») և Շապանիկը («Նամուս»):

Այդ դերակատարումները օժանդակում էին դերասանուհու ստեղծագործական աճին, պրոֆեսիոնալ վարպետության բարձրացմանը:

Արուս Խուդանյանը ստեղծել էր կոլորիտային մի կերպար, որն ընդգծված ձևով ցույց էր տալիս նրան շրջապատող առևտրի փտած աշխարհը:

Դերասանուհին մեծ հաջողության էր հասել նաև արդիական խաղացանկում: Արժանի են հիշատակության նրա Լյուդմիլան («Նրա ընկերուհիները»—Վ. Ռուզով), Ալեքսան («Սերը լուսաբացին»—Յա Գալան), մորաքույրը («Ծուռ հայելիների թագավորություն»—Վ. Գուբարյով): Զննադատ Լ. Խալաթյանը այս վերջին բեմադրության առթիվ գրած թատերախոսականում մորաքրոջ դերակատարման մասին գրել է. «Հատկապես արժի նշել վաստակավոր դերասանուհի Արուս Խուդանյանի ստեղծած բարի մորաքրոջ կերպարը, որն ապրելով խեղաթուրված ու արնախում մարդկանց շրջապատում, կարողացել է

պաշտպանել իր մարդասիրությունն ու մարդկային անկեղծ
բնավորության հատկությունները»:

Անխոնջ աշխատանքի և ստեղծագործական որոնում-
ների ճանապարհով է անցել Արուս Խուդանյանի 25-ամյա
արտիստական կյանքը Կիրովականի թատրոնում, որը
նույնպես բոլորել է իր գոյության քառորդ դարը: Թատ-
րոնն ու դերասանուհին ձեռք-ձեռքի տված քայլել են
արվեստի դժվարին, բայց և պատվավոր ճանապարհներով:
Գնահատելով հալ թատերական արվեստին Ա. Խուդանյա-
նի մատուցած մեծ ծառայությունները, ՀՍՍՀ Գերագույն
Սովետը 1956 թվին նրան շնորհեց ժողովրդական դերա-
սանուհու բարձր կոչում:

Արուս Խուդանյանը Հովհաննես Աբելյանի անվան
թատրոնի այն միակ դերասանուհին է, որ 27 տարի ան-
ընդհատ ընտրվում է Կիրովականի քաղաքային սովետի
դեպուտատ: Իբրև ժողովրդի ընտրյալ, նա բարեխղճորեն
կատարում է իր պարտականությունները քաղաքի բարգա-
վաճման գործում:

Արուսի անունը թե՛ թատրոնում և թե՛ թատրոնից
դուրս, բոլորը քնքշությամբ են արտասանում՝ «Մեր սիրելի
Արուսը», «Մեր քնքույշ մայրիկը»: Այս փառաքջանքներով
նրանք կամենում են ինչ-որ չափով մեղմել նրա վիշտը:
Չէ որ դերասանուհու միակ որդին՝ Ստեփանը, մոտոցիկ-
լային վթարի պահին ծաղիկ հասակում զոհվեց: Ի դեպ,
հարկ է նշել, որ Արուսը 1931 թվին առաջին անգամ ոտք
դրեց Կիրովականի թատրոն իր հինգ տարեկան որդու հետ:
Ստեփանը, երբ դեռ չառ փոքրիկ էր, ժամերով շրջում էր
բեմի ետևում, մինչև մայրն ավարտեր իր դերը և տուն

գնային: Իսկ երբ նույն թվականին պատանու մոտ հայտնաբերվեցին բեմական որոշ ընդունակություններ, նրան հանձնարարվեց Գյուլնդուլի դերը «Սևիլ»-ի ներկայացման մեջ: Եվ պատանին ամուր թելերով կապվում է թատրոնին: Բեմական նման ընկերակցությունը մեծ խաղաղություն էր բերում Արուսի հոգուն: Ներկայացումից հետո տանը, մայր ու որդի սրտագին պրուցում էին իրենց տպավորությունների մասին:

Տաղանդավոր պատանին շատ արագ արժանանում է հանդիսատեսի ընդհանուր հիացմունքին: Նա նորանոր հաջողությունների է հասնում Գիքորի և Վաչիկի («Արշալույսին») դերերում և աստիճանաբար դառնում Կիրովականի պատանիների կուռքը: Հետագայում, երբ Ստեփանը հասակ առավ և դարձավ սովետական բանակի ռազմական դպրոցի ուսանող, կազմակերպեց ռուսական թատերական ինքնագործ մի խումբ, բեմադրեց Օստրովսկու «Ամենը մեղավորները» և ինքն էլ մարմնավորեց Նեվնամովի դերը: Տաղանդավոր երիտասարդին չվիճակվեց բեմական արվեստի երջանկությունը վայելել, հասունանալ իբրև դերասան, բացահայտել իր ստեղծագործական ողջ կարողությունները և սփռվել մորը, ի կատար ածել նրա իղծերը: Գուցե և այդ եղավ պատճառը, որ Արուս Խուդանյանը վաթսուն տարեկան հասակում թողեց բեմը և անցավ թոշակի: Դա, իհարկե, չէր նշանակում, թե նա ընդմիջտ հեռացավ թատրոնից: Բավական տարիներ են անցել այն օրից, երբ Ա. Խուդանյանը թողել է բեմը, բայց հանդիսականի հիշողությունից դեռ չեն ջնջվել այն կերպարները, որ նա ստեղծել էր Հ. Աբելյանի անվան պետական թատ-

րոնում: Հատկապես անմոռաց էր դերասանուհու Աննան և պատահական չէ, որ թատերասերներից շատերը փողոցում հանդիպելիս, շատ հաճախ նրան անվանում էին «Աննա» և հարցնում՝ թե նորից ե՞րբ կարող է նա երջանկացնել իրենց՝ այդ դերակատարումով: Դա ընդհանուրի պահանջն էր:

Եվ ահա թատրոնի գլխավոր ռեժիսյոր Ս. Աքմաբչյանի ղեկավարությամբ նորից բեմադրվում է Ա. Գուլակյանի «Արշալույսին»-ը: Երկար ընդմիջումից հետո Աննայի դերում նորից հանդես է գալիս Արուս Խուդանյանը: Այս անգամ ևս տաղանդավոր դերասանուհին իր արվեստով գերեց հանդիսատեսներին և արդարացրեց նրանց վստահությունը: Այդ հիշարժան ներկայացումից հետո բեմադրող ռեժիսյոր Սոկրատ Աքմաբչյանը ասաց. — «Արուս Խուդանյանը լիովին արդարացրեց արվեստի իր երկրպագուների սպասելիքները: Նա իր դերը խաղաց մեծ արվեստով. նա կարողացավ ստեղծել տանջամահ եղած, կամքի տեր կնոջ մի կերպար, որը մայրական ջերմ սրտով և ամուր հավատով նվիրվեց իր հեղափոխական որդու մեծ գործին»:

Ներկայացումն անցնում է մեծ հաջողությամբ, բոլորի վրա թողնելով խոր տպավորություն:

Ահա բացվում է վարագույրը. բեմի վրա է Աննա-Խուդանյանը: Դերասանուհին դեռ ոչինչ չի ասել, չի արտասանել ոչ մի բառ և հանդիսականներն արդեն զգում են նրա հոգու բուռն փոթորիկները: Նա սիրող ու տառապող մայր է, որ այրվում է որդու ողբերգական ճակատագրով, բայց և միաժամանակ գիտակցում է այն մեծ նպատակը, որի համար հարապատ զավակը զոհասեղանին է դրել իր

կյանքը: Հարց ու պատասխանի տեսարանում դերասանուհին հասնում էր իր արվեստի բարձրակետին, նշմարելի էին դառնում կերպարի նոր գծերը՝ անկոտրուկ կամքը, հոգեկան մեծ արիությունը: Մինչ դերի վերջակետը, մինչև ներկայացման ավարտը դերասանուհին մնում էր կերպարի հոգեբանական խոր ակունքներում, հանդիսատեսներին գերելով մայրական ապրումների պորեղ ու ճշմարտացի վերարտադրությամբ:

Արուս Խոտանյանի գրադարանում պահված են մեծ քանակությամբ թատերախոսականներ, որոնք արտացոլում են նրա երեսունհինգ տարվա ստեղծագործական կյանքի դրվագները: Այնտեղ կան նաև պատվոգրեր և ուղերձներ, որոնք նա ստացել է պանապան հիմնարկներից, քաղաքային սովետից, գործարաններից ու ֆաբրիկաներից: Այդ փաստաթղթերի մեջ դուք կարող եք ընթերցել սիրո, հարգանքի ու դրվատանքի ջերմ խոսքեր՝ ուղղված տաղանդավոր դերասանուհուն, մարդուն և քաղաքացուն:

Իբրև օրինակ մենք ընթերցում ենք նրան ուղղված ուղերձներից մեկը, ուր փայլուն ծնով բնութագրված է Արուս Խոտանյանի ստեղծագործական դեմքը:

«Վարչական, կուսակցական և արհմիութենական կապակերպությունները, Հ. Աբելյանի անվան թատրոնի կոլեկտիվը, քաղաքի աշխատավորության հետ միասին, ամբողջ հոգով հղում են իրենց սրտագին ողջույնն ու շնորհակալությունը մեծատաղանդ դերասանուհուն, մեր բեմական արվեստի լավագույն ներկայացուցչին:

Ձեր ստեղծագործական ուղուն նվիրված այս երեկոն, արթնացնում է Լոռու յուրաքանչյուր աշխատավորի սրը-

տում ջերմ պզգցումներ. թե ով է Արուս Խուդանյանը և որոնք են նրա ծառայությունները բոլորը գիտեն: Դերասաններիս համար նա անփոխարինելի ընկեր է, պահանջկոտ դաստիարակ և հոգատար մայր: Թանկագին Արուս Խուդանյան, մեր թատրոնի տարեգրության մեջ դուք մի երջանիկ բացառություն եք: Հ. Աբեյանի ռեալիստական խոր արվեստի ավանդները դուք օգտագործել եք մեծ վարպետությամբ և գիտակցական ձեր ամբողջ կյանքը նվիրել թատերական մշակույթի հետագա վարճացմանն ու բարձրացմանը:

Մեր հանդիսատեսների սրտերում մինչև այսօր էլ պահպանվել են ձեր Զառնիշանը, Սալոմեն և մանավանդ Աննան, որ ձեր ստեղծագործություններից լավագույնն է:

Սիրելի Արուս, արվեստին և լայն մասսաներին նվիրվածության շնորհիվ, դուք արժանացել եք ժողովրդական դերասանուհու բարձր կոչման և ընդհանուրի մեծարանքին:

Այդ է միակ գաղտնիքը, որ այսօր դուք մեկ անգամ ևս ըստ արժանավույն գնահատվեցիք հասարակայնության կողմից:

Փառք և հարգանք ձեզ, մեր մայր-դերասանուհի, թող ձեր ստեղծագործական անհանգստությունը, պահանջկոտությունը կյանքի և արվեստի նկատմամբ, իբրև լավ օրինակ ծառայի բոլորիս:

Մեր ամբողջ կոլեկտիվը ցանկանում է ձեզ քաջառողջություն, ստեղծագործական արդյունավետ բազում օրեր՝ ի փառս մեր հայրենի արվեստի»:

Իր մի բանաստեղծության մեջ, դերասանուհի Մարգո Տիոտյանը լավ է բնութագրել սիրված դերասանուհուն:

Ինչպես չսիրեմ ես իմ Արուսին,
Երբ գիտեմ նրա հուզվերն անգին,
Երբ մշտածիծաղ իր դեմքով բարի,
Ողջունում է ինձ ու ժպտում բարի —

Ինչպես չսիրեմ ես իմ Արուսին:

Հավատում եմ ես նրա պարզ խոսքին,
Չունի նա կեղծիք իր ջինջ հոգու մեջ.
Իր սրտի հուրն է նա տալիս բեմին՝
Առավել հստակ, առավել թովիչ,

Ինչպես չսիրեմ ես իմ Արուսին:

Տասնամյակներ են անցել իր կողքով,
Եղյամ է նստել գանգրահներ գլխին,
Վշտեր է տեսել, կոշուհատներ անգին,
Բայց սիրտը ջափել... ջափել է կրկին,

Ինչպես չսիրեմ ես իմ Արուսին:

Սիրում են նրան և մանուկ և ծեր,
Նա բոլորինն է, իմը չէ միայն,
Աշուններ տեսած, սակայն աներեր,
Հարապատ է միշտ՝ և քույր է և մայր,

Ինչպես չսիրեմ ես իմ Արուսին:

Որքան ցուրտ լինեն օրերն անցնող,
Գարունն ուշանա, թախծես ու մրսես,
Չթեքվես երբեք հողմերի առաջ.
Գիտցիր՝ մենակ չես, քո շուրջն ենք, քեզ, հետ,
Թանկագին Արուս սիրում ենք մենք քեզ:

Արուս Խուդանյանի ստեղծագործական փառավոր ուղին
երիտասարդ սերնդի համար, արվեստին ծառայելու փայ-
լուն օրինակ է: Տաղանդավոր դերասանուհին իր ստեղ-
ծագործական անսպառ կարողությունները ի սպաս դրեց
Ռայրենի բեմին, իսկ ժողովուրդը նրան վարձահատույց
եղավ իր մեծ սիրով, այնպիսի ջերմ ու գուրգուրոտ վերա-
բերմունքով, որին քչերն են արժանանում:

ԿՐՈՒՅՐ ՓԱՆՈՅԱՆ

(ՀՍՍՀ ժողովրդական դերասան)

— Հայրիկ, ես ուզում եմ դերասան դառնալ...

Այժմ, երբ արդեն բազում տարիներ են անցել, դժվար է ասել, թե ո՞ր տարիքում արթնացավ փոքրիկ Վրույրի սրտում թատրոնին նվիրվելու ցանկությունը: Հիշում է, սակայն, որ դեռ շատ փոքր հասակում, երբ տանը սեղանի մոտ նստած ներկա էր լինում մեծահասակների բուռն պրուպցներին, իրեն մոտ ցանկություն էր առաջանում ընդօրինակել նրանց շարժ ու ձևերը, կրկնել ծիծաղելի արտահայտությունները: Նրա աչքից ոչինչ չէր վրիպում և Հայաստանում Սովետական իշխանության հաստատման բուռն ու փոթորկալից օրերը, մեծ անցուղարձերը, հրապարակային ցույցերն ու միտինգները փոքրիկ Վրույրին թվացել են բացօթյա ներկայացումներ: Աշխարհը թատրոնի մարդու, դերասանի աչքերով տեսնելու ունակությունը շատ վաղ հասակից հատուկ է եղել Փանոյանին: Եվ ամա, երբ նա Ղարաբլիխայի դպրոցի հինգերորդ դասարանի

աշակերտ էր, սկսեց մասնակցել դպրոցական դրամատիկական խմբակին: Նա հրապուրվեց թատերական արվեստով: Հրապուրանք... Անկեղծորեն ասած գուցե դա այն բառը չէ, որ կարող լիներ բնորոշել արվեստասիրությունը. ո՞վ չի ճաշակել այդ զգացումը, որը ոմանց մոտ երկար չի տևում և տարիների հետ անցնում է... Սակայն Վրուլրի հետ այդպես չպատահեց. թատրոնը նրա համար հրապուրանք լինելուց ավելի, կոչում էր, կյանքի իմաստ ու նպատակ:

Բեմական լույսերի հրավառություն, ծափահարություններ, անհայտ հերոսների գոտեմարտեր, դեպքեր, սիրո և ատելության կրակոտ խոսքեր... Այս ամենը հուլում էին պատանուն... Նրա աչքերի առաջ մի ուրիշ աշխարհ էր կենդանանում՝ արվեստի մեծ աշխարհը. նա պատկերացնում էր իրեն այդ աշխարհի մի մասնիկը, որի համար ծնվել էր:

Որքան մոտենում էր ավարտական քնությունների օրը, այնքան ավելի 18-ամյա պատանու գիտակցության մեջ ամրանում էր պրոֆեսիոնալ թատրոնում աշխատելու, իր բախտը ընդմիշտ բեմին կապելու ցանկությունը: Դրպրոցական յուրաքանչյուր ներկայացումից հետո, նրան գովում էին ոչ միայն դասընկերները, այլև ուսուցիչները: Եվ այդպես հինգ տարի շարունակ: Պատանի Վրուլրը, որ սկզբնապես լզաաստ էր մոտենում այդ գովեստներին ու ծափահարություններին և նույն հանդիսատեսների առաջ ներքնապես նորից ու նորից ստուգում էր ինքն իրեն, վերջապես ապատվեց բոլոր կասկածներից և մի օր վստահորեն մոտենալով հորը հուլված շնջաց.

— Հայրիկ, ես ուզում եմ դերասան դառնալ...

Վրուկը հոր միակ զավակն էր. նա գիտեր, որ ծնողները ոչինչ չեն խնայի իրեն, չեն մերժի իր խնդրանքը: Մանավանդ հայրը, որ սիրում էր զավակին, նրա կենսախինդ, պրպտող ու անհանգիստ բնավորության համար:

Հոր պատասխանը ուշացավ: Դա վախեցրեց պատանուն: Մի՞թե հայրը կմերժի: Երկաթուղային վարպետը, որ շատ բան էր տեսել կյանքում ու շատ բան սովորել, չկամեցավ վշտացնել սիրելի զավակին և երկար մտածելուց հետո ասաց.

— Ես չեմ ցանկանում, որ դու կիսաքաղց ապրես կյանքում. ես ցանկանում եմ, որ դու մարդ դառնաս:

Անորոշ այդ պատասխանը կարծես հուսոյ մի դուռ էր բացում Վրուկի առաջ: Նա անմիջապես հասկացավ, որ հայրը չի մերժում, այլ միայն կասկածում է և այդ կասկածները հին արմատներ ունեն: Չէ՞ որ կենսափորձ ունեցող երկաթուղայինը քաջ ծանոթ էր նախահեղափոխական տարիներին Ղարաքիլիսա այցելող դերասանների չարքաշ կյանքին:

Վրուկը որոշեց հարձակման անցնել, իբրև դեռևս չգրված մի նոր պիեսի հերոս.

— Իսկ ո՞վ ասաց հայրիկ, որ խորհրդային թատրոնի դերասանները քաղցած են մնում: Մի՞թե դրա համար են ստեղծվել թատրոնները Երևանում ու Լենինականում: Հայրիկ, ուշադիր նայիր, թե ինչ է կատարվում մեր շուրջը: Շուտով Հայաստանի բոլոր քաղաքներում և շրջաններում թատրոններ կստեղծվեն: Մենք ինչո՞վ ենք պակաս:

Վրուկը խոսում էր մեծ ներշնչումով, խոսում էր բարձ-

րածայն, և նրան թվում էր, թե բեմից է արտասանում իր «մենախոսությունը» և լեփ լեցուն դահլիճի հանդիսատեսները ջնջները պահած, սրտի տրոփությունով լսում են իր խոսքերը... Սակայն հուզված արտիստի «մենախոսությունը» այս անգամ ծափահարությունների չարժանացավ:

— Ես կամենում եմ, որ դու գերազանց գնահատականներով ավարտես դպրոցդ և մարդ դառնաս...

Այս էր Վրուլյրի հոր պատասխանը: Եվ չնայած դրան, նա շուտով ստիպված էր փոխել իր կարծիքը: Վրուլյրը փոխեց իր «տակտիկան»: Նա հիմա ոչ հորն էր համոզում և ոչ էլ մորն էր ստիպում միջնորդել:

Դպրոցի դրամատիկական խմբակը հաճախակի ներկայացումներ էր կազմակերպում: Հերթական ներկայացումներից մեկի ժամանակ առաջին կարգում նստել էին Վրուլյրի հայրը՝ Մարտիրոս Փանոյանը և մայրը՝ Վարսենյանիկը: Ներկայացումը դիտելու ընթացքում նրանք անընդհատ վարմանում էին, թե ինչպես է կարողանում իրենց որդին ամեն անգամ տարբեր բնավորություններ ստեղծել, կամ այդպես թեթև և ազատ զգալ բեմում, երբ դահլիճում հարյուրավոր մարդիկ կան: Նստած, որոնք անկեղծորեն ծիծաղում ու ծափահարում են...

Կարող է արդյոք որևէ հայր չլուրսխանալ իր որդուն հաջողություններով...

Առաջին կարգում նստած, նա հիշեց, թե ինչպես էր իր որդին միշտ տանը փակվելով արտասանում, ծիծաղում, հուզվում... Հիշեց և այն, որ շատ հաճախ ինքն ու կենդանի իրեն խաղակիցներ իրենց որդուն ռեպլիկներն էին մատուցում... Այդ ամենը նրանք անում էին սիրով՝ չցանկա-

եալով ընտանեկան ուրախ շրջապատում իրենց վավակին վշտացնել, իսկ այժմ...

Ու հայրը սկսեց մտածել, որ ինքը սխալվել է... և ըստ երևույթին իրավացի է որդին. նա գիտեր, որ այժմ ժամանակներն ուրիշ են և դերասանները շրջապատված են հոգատարությամբ ու հարգանքով: Հոր վերջին կասկածները ցրվեցին նույն օրը՝ ներկայացման պահին. ներկայացում, որ Վրուլյի համար ողբերգական վախճան պիտի ունենար:

1927 թվականին, ինքնագործ թատերական խմբերից մեկում բեմադրվեց տեղացի դրամատուրգ Ռուբեն Ադամյանի պիեսը՝ «Վոլկովները»: Գլխավոր հերոս Վոլկովի դերը պատրաստում էր բանվոր Թորգոմ Շահինյանը, որը և ճշավիրել էր Վրուլյին մարմնավորելու Վոլկովի որդուն՝ Վալդեմարին: Ըստ պիեսի, վերջինս ներկա է լինում ընդհատակյա ժողովում և բանվորների գաղտնի որոշումը միամղտորեն պատմում է իր համախոհներին: Այդ արարքի համար նրան որոշում են գնդակահարել: Դատավճիռը բեմում պետք է ի կատար ածեր ինքը Վոլկովը՝ Թորգոմ Շահինյանը: Թորգոմը Վրուլյի բարեկամն էր, նրա քրոջ ամուսինը:

Բեմում ստեղծվեց դրամատիկական պահ. հայրը պետք է գնդակահարեր հարապատ որդուն. հանդիսասրահում բոլորը շնչները կտրած սպասում էին ողբերգական վախճանին:

Վոլկովը բարձրացնում է հրացանը, փողն ուղղում որդուն.

— Կանգնիր.

Վրույրը չէր ցանկանում նույնիսկ ըստ պիեսի սյուժեի մեռնել բեմի վրա. աչքը չդարձնելով հորից նա հանկարծ նկատում է, որ հրացանի մեջ մարտական զնդակ է խնցված... Դերից մի պահ կտրվելով — նա կամաց շնջում է.

— Զգույշ եղիր, հայրիկ, կարծեմ հրացանի մեջ մարտական զնդակ է դրված...

— Ի՞նչ, դու ուզում ես ձգձգել մեր արդար դատավճի՞շը, — գոռաց հայր-Վոլկովը, նույնպես խախտելով դերի տեքստը:

— Կանգնիր... Գնդակը մարտական չէ... Կամաց շնջաց Թորգոմը, Վրույրին հանգստացնելու նպատակով:

Նման վիճակի մեջ, երիտասարդ արտիստ Վրույրը առաջին անգամ էր ընկել: Նա ժամանակին օրորվեց և աչքերը փակելով մի կողմ կանգնեց:

Լսվեց հզոր մի կրակոց և բեմը լցվեց վառողի ծխով:

Ամենքի համար պարզ էր, որ միայն երջանիկ պատահականությունը փրկեց Վալդեմարի դերակատարին իսկական մահից: Գնդակը Վրույրից թեքվելով, նրա ձեռքի վրա թողեց հավիտենական մի «հիշատակ»:

Դեպքը ցնցեց բոլորին, վարագույրը շտապ փակվեց. դահլիճում բարձրացավ աղմուկ-աղաղակ, հարավատների աչքերը փայլեցին արցունքներից. նրանք գրկախառնվում էին, շնորհավորում, իրար համբուրում: Վրույրը կորցրել էր իրեն, ամեն ինչ խառնվել էր նրա աչքերում և հենց այդ պահին էլ զգաց, որ կարծես ծերացավ մի քանի տարով, և որ առանց բեմի ալլևա չի կարող ապրել:

Վրույրը հաջողությամբ ավարտեց տասնամյակը: Թատրոնի նկատմամբ ունեցած անմար սիրո կրակը սրտում,

քանամյա երիտասարդը Ձորագէսի կառույցում ընդունվեց իբրև աշակերտ: Աշխատանքային ժամերը նրա համար անցնում էին հեշտ և աննկատելի:


Վրույրը աշխատում էր և չէր մտածում իր հանգստի մասին: Ամեն օր ոտքով Ղարաքիլիսայից մեկնում էր Ձորագէսի կառույցը ու նորից ետ դառնում: Նա ապատ ժամերին ընթերցում էր այն ամենը, ինչ նվիրված էր բեմարվեստի մարդկանց կյանքին: Նա ընթերցում էր Ադամյանի, Սիրանույշի, Աբեյանի, Փափապյանի և ուրիշ նշանավոր արտիստների մասին գրված հոդվածները, լսում նրանց բեմական կյանքից առնված պրույցներն ու լեզենդները...

Այդ ամենից ոչինչ չկար ոչ Ղարաքիլիսայում և ոչ էլ Ձորագէսում: Ինչպե՞ս անել, ինչպե՞ս նորից ապրել բեմի հրապույրներով, մտածում էր Վրույրը և շուտով ելքը գտավ:

Նա Ձորագէսում շտապ կազմակերպում է դրամատիկական մի խմբակ, իր վրա վերցնելով կազմակերպչական և ստեղծագործական բոլոր դժվարությունները: Մեկ տարվա ընթացքում նա հասցնում է բեմադրել Շիրվանշահի «Չար ոգի», Ֆուրմանովի «Խռովություն» և մի շարք այլ պիեսներ:

Վրույրի համար այդ տարին շատ բեղմնավոր եղավ: Փականագործի դավաճանի մոտ աշխատելուց հետո նա իր բոլոր ժամերը նվիրում էր դրամատիկական խմբակին: Նա ինքն էր պատրաստում բոլոր բեմադրությունները և ինքն էլ խաղում բոլոր գլխավոր դերերը:

Նա յուրատեսակ մի դպրոց էր, ուր Վրույրը նախա-



Վրոյր Փանոյան



Միկոլա («Գողաթված հրջանկութիւն»)

պատրաստվում էր ապագայում պրոֆեսիոնալ թատրոն
մտնելու համար...

Աշխարհի բոլոր թատրոնների պատմությունը հաճուստ
է այնպիսի փաստերով, երբ երջանիկ պատահականության,
կամ դերասանի անակնկալ հիվանդության պատճառով մեկ
ուրիշ նոր ու անհայտ դերասանի համար ճանապարհ է
բացվում և կրճատվում դեպի արվեստի բարձունքները տա-
նող մաքառումների ուղին:

Այդպես պատահեց նաև Վրույր Փանոյանի հետ:

1927 թվականին հյուրախաղերով Ղարաբաղիսա (հե-
տագայում Կիրովական) է ժամանում Լենինականի թատ-
րոնը, որի գլխավոր ռեժիսորն էր Վարդան Աճեմյանը:
Թատրոնն իր խաղացնկում ուներ մի քանի բեմադրություն-
ներ, այդ թվում նաև Ֆուրմանովի «Խռովությունը»: Ներ-
կայացման օրը, կամ ավելի ճիշտ ներկայացումից մի քանի
ժամ առաջ, հիվանդացել էր Չեռուսովի դերակատար Սամ-
վել Կաժոյանը:

Թատրոնի ղեկավարությունը ծանր վիճակից դուրս գա-
լու նպատակով տենդագին որոնումների մեջ էր ընկել:
Բոլորովին պատահական ձևով հարցը շուտափույտ լուծում
ստացավ:

Չեռուսովի համար թատրոնը երկրորդ դերակատար
չունեի, իսկ նորը պատրաստելու համար ժամանակ չկար:
Երբ ներկայացման տապալման վտանգն ակնբախ էր,
Վրույր Փանոյանը ամաչկոտությամբ ու անվստահ առա-
ջարկեց իր ծառայությունները:

Այժմ այնքան էլ կարևոր չէ, թե ինչ ասացին Վրույ-
րին, կամ ինչպես նախապատրաստեցին, որպեսզի նա

իրավունք ունենար բեմ բարձրանալ և խաղալ այդ պատասխանատու դերը: Փաստն այն է, որ հիվանդ դերասանին փոխարինեց ոչ թե պրոֆեսիոնալ արտիստը, այլ անհայտ մի սիրող: Բոլորին հայտնի է, որ հին ժամանակներում հայ թատրոնի նշանավոր դերասանները միշտ էլ ելույթներ էին ունենում սիրողների հետ, նրանց ոգևորում իրենց արվեստով, որը հնարավորություն էր տալիս հայտնաբերելու նոր ուժեր:

Վրույր Փանոյանն իր դերն անգիր գիտեր, այդ իսկ պատճառով նա դիմեց ռիսկի. թատրոնը նույնպես համարձակ որոշում ընդունեց, քանի որ ուրիշ ելք չկար: Եվ ամեն ինչ ավարտվեց բարեհաջող: Գոհ էին երկուստեք, թե թատրոնը և թե Վրույրը, մանավանդ Կիրովականի հանդիսատեսները, քանի որ այսպես թե այնպես լենինականցիների ներկայացումը փրկեց իրենց համաքաղաքացին...

Զեուսովի դերը Փանոյանը խաղաց բավարար. այդ բանում նրան օգնում էին խաղընկերները, որոնք բեմի վրա երիտասարդ սկսնակին Վգուշությամբ մտցնում էին ռեժիսյորական մտահղացումների ոլորտը:

Այդ ներկայացմանը ներկա էին նաև Վրույրի ծնողներն ու ազգականները: Երբ հայրն իմացավ, որ Վրույրին աշխատանքի են հրավիրում Լենինականի պետթատրոն, ասաց.

— Դու իմ միակ որդին ես... Լենինականի ծմբոն այնքան սաստիկ է, որ դու անպայման կմրսես...

Սակայն հոր խոսքերի մեջ չէր արտահայտվել նրա գլխավոր միտքը: Այդ գիշեր, երբ նա պառկեց քնելու, կնոջ ականջին Վգուշությամբ շշնջաց.

— Վրույրիս համար այժմ ես հանգիստ եմ և շատ երջանիկ. նա ճիշտ ճանապարհ ընտրեց:

Ամեն ինչ մտավ իր հուռնի մեջ: Վրույրը, սակայն, Լենինական չմեկնեց, քանի որ ամուր թելերով կապված էր ծնողների, աշխատավայրի և իր սիրած թատերախմբի հետ:

Կյանքն առաջ էր շարժվում իր բնական հունով, իսկ Վրույրը չգիտեր, թե երբ կգա այն օրը, երբ ինքը ամբողջապես կնվիրվի թատրոնին և կվայելի ստեղծագործական աշխատանքի հաճույքը:

Լենինականից հետո հերթական հյուրախաղերի ժամանեց Ամո Խարապյանի անվան շրջիկ թատրոնը: Նա ներկայացրեց Յուրի Յանովսկու «Ցասում»-ը: Տիգրան Հախումյանի փոխադրությունը նպաստում էր պիեսի հնչեղությանը, քանի որ այն հայացված էր, և շատ զորեղ տպավորություն էր թողնում հանդիսատեսների վրա: Ինքը՝ Վրույրը ցնցված էր այդ ներկայացումից:

Ներկայացման ժամանակ նա անընդհատ հետևում էր Վասիլ բիծայի դերակատարին և ինքն իրեն մտածում.

— Կարո՞ղ եմ այդ դերը անձնավորել:

Այդ միտքը մի քանի օր հետապնդում է նրան: Դա՛կ-գահի մոտ կանգնած, Վրույրը հաճախ մտովի կրկնում էր Վասիլ բիծայի դերը, լուռ պրուցում պիեսի մյուս գործող անձանց հետ: Եվ այս լուռ, երևակայական «փորձերից» հետո, Վրույրը սկսում էր մտածել, որ ինքը լավ կխաղար Վասիլ բիծայի դերը և գուցե ավելի լավ, քան նրա դերակատարը... Սակայն մինչև Վրույրը կվճռեր խոսել Ամո Խարապյանի հետ, թատրոնի կոլեկտիվն ավարտելով Կի-

րովականում իր հյուրախաղերը, մեկնեց հանրապետության հեռավոր անկյուններից մեկը:

Չորագէսի շինարարության ավարտից հետո, շատ բանվորների, այդ թվում նաև Վրույրին, տեղափոխեցին Երեւան՝ Զանաքեռգէսի կառույցում աշխատելու: Մայրաքաղաքում Վ. Փանոյանը կարող էր ամեն օր հաճախել Սուրբուկյանի անվան թատրոն և վայելել՝ Գրիգոր Ավետյանի, Հասմիկի, Միքայել Մանվելյանի, Արուս Ոսկանյանի, Հրաչյա Ներսիսյանի, Վաղարշ Վաղարշյանի, Ավետ Ավետիսյանի, Սյուլան Գարագաշի, Համբարձում Խաչանյանի և Ռուպաննա Վարդանյանի արվեստը...

Ծակատագրի կամքով Վրույր Փանոյանը նորից հնարավորություն ունեցավ հանդիպելու Ամո Խարապյանի անվան թատրոնին: Կարծես անտեսանելի մի ձեռք մղում էր նրան դեպի այդ կոլեկտիվը: Զանաքեռգէսի բանվորների համար Խարապյանի խումբը ներկայացրեց Բորիս Լավրենյովի «Բեկում»-ը:

Ներկայացման հետևյալ օրը Ամո Խարապյանը գալիս է Զանաքեռգէս խաղացված ներկայացման վարձը ստանալու:

Վրույրն այդ ժամանակ գրասենյակում էր: Նա խընդրում է Զանաքեռգէսի ղեկավար ընկերներին հաշվարկի պրոցեսը քիչ երկարացնել, որպեսզի հնարավորություն ունենա Ամո Խարապյանի հետ լուծել իր հարցը: Չորագէսի ղեկավարները վաղօրոք տեղյակ լինելով Վրույրի նպատակներին, համաձայնվում են:

Նշանավոր ռեժիսյոր և դերասան Ամո Խարապյանի և սկսնակ դերասան Վրույր Փանոյանի միջև տեղի է ունենում հետևյալ պրույցը.

— Ընկ. Խարապյան, ես շատ եմ սիրում թատրոնը, խնդրում եմ ինձ ընդունեք ձեր թատերախումբը:

— Իսկ կարո՞ղ ես աշխատել. դժվարությունների մասին մտածե՞լ ես: Ձեր կյանքն այստեղ խաղաղ է անցնում, իսկ մենք ամիսներով գյուղից գյուղ ենք շրջում: Ձեռ դիմանա:

— Դուք որ դիմանում եք, ես էլ կդիմանամ...

— Ձե, չեք դիմանա...

— Դե եթե չեմ դիմանա, այդ դեպքում ես կխնդրեմ մեր ղեկավարներին, որպեսպի նրանք երեկվա ձեր ներկայացման վարձը չվճարեն:

Վրույրն, իհարկե, կատակեց, բայց դա ստիպեց Ա. Խարապյանին այլ աչքերով վննել խնդրող երիտասարդին: Ջգալով նրա ներքին հուլմունքը, և թատրոնում աշխատելու անպուսպ ցանկությունը, Խարապյանը հիշեց իր երիտասարդությունը, երբ ինքը ամբողջ հոգով ծագում էր նվիրվել բեմին, իսկ ծնողները չէին համաձայնվում: Նա լռեց, ժողովեց իր մտքերը և ասաց.

— Լավ, վաղը մի դիմում կգրես ու կգաս թատրոն. թող դերասանները լսեն քեզ:

Հետևյալ օրը թատրոնում Վրույրին քննության ենթարկեցին:

Նա ընթերցեց Չեռսովի դերը Ֆուրմանովի «Լնռովություն» պիեսից: Զննությունն անցավ հաջողությամբ: Վրույրը հասավ իր նպատակին: Ընդունվեց թատրոն... երիտասարդ դերասանի առաջ բացվեց նոր կյանքի մի ճանապարհ, լի հույսերով ու անակնկալներով:

Առաջին անգամ պրոֆեսիոնալ խմբի մեջ մտնելով,

Վ. Փանոյանը, որ դեռևս չէր տիրապետում բեմական արվեստին, թեթև ու ջառ հանգիստ մերվում է կոլեկտիվին: Չէ՞ որ նա երկար տարիներ աշխատելով ինքնագործ թատրոնում և հետևելով Հարաթիլիսա հյուրախաղերի եկած մեծատաղանդ արտիստների խաղին, «հեռակա» կարգով անցել էր դերասանական արվեստի նախապատրաստական դպրոցը, և այժմ վերակառուցվելու դժվարություններ չէր ապրում:

Վ. Փանոյանը երբեք չի կարողանում մոռանալ՝ Հ. Աբելյանի Բարխուդարն ու գիծ Դանիելը, Վ. Փափապյանի Օթելլոն ու Կորրադոն, Լևոն Զոհրաբյանի Միլլերը («Սեր և խարդավանք»), Սուրեն Սուրենյանի Ֆերդինանդը, Բարկեն Գաբրիելյանի Կարավանը («Խռովություն») և Գոդունը («Բեկում»), դերասանական գլուխգործոցներ, որոնք մեծ ու բարերար ավոյեցություն են թողել երիտասարդ արտիստի վրա, որը երբեք չի մոռանում բեմի այդ վարպետների խաղը:

Հաջող ընկությունից հետո, Ամո Խարապյանը կարծես կռահելով Վ. Փանոյանի ներքին ցանկությունը, առաջարկում է նրան «Ցասում» ներկայացման մեջ խաղալ Վասիլ բիծայի դերը: Դա այնքան անակնկալ էր Վրույրի համար, որ նա մի պահ վարմացավ: Գուցե ինքը խոսել է այդ մասին իր շրջապատում, կամ գուցե ավագ ընկերները կատակում են:

Յու. Յանովսկու «Ցասում» պիեսը իր կենսական կոնֆլիկտով ու գաղափարով ուղղակի պատասխանում էր օրվա հուզող հարցերին, սուր դրամատիկմով պատկերելով կուլակների դեմ մղված դասակարգային պայքարի դրվագ-

ները: Եվ պատահական չէ, որ գլուղական հանդիսականը այնպիսի խանդավառությամբ ընդունեց պիեսի բեմադրությունը: Երեսունհինգ տարի՝ է անցել այն օրից, երբ Արտաշատի Յուզա գլուղում Վրույր Փանույանը հանդես եկավ իր Վասիլ բիծայով: Նա հպարտությամբ է հիշում այդ երեկոն: Պատահեց այնպես, որ ներկայացման ժամանակ 11 տատանվող գլուղացիներ դիմում գրեցին և բեմ բարձրանալով խնդրեցին Վասիլ բիծայի դերակատարին միջնորդ լինել կոլխույ մտնելու համար: Ներկայացումը միառժամանակ խանգարվեց: Գլուղացիները թախանձագին խընդրում էին Վրույր-Վասիլ բիծային համոզել դահլիճում նըստած կոլխույի նախագահին, որ իրենց որոշումը վերջնական է:

Վրույր Փանույանի խաղի հմայքը պարզության մեջ է: Նա գրեթե բոլոր դերերում էլ ճշմարտացի է և բնական, երբեք չի կորցնում չափի պահումը:

Բազմազան և լայնածավալ է Վրույր Փանույանի խաղացանկը: Նա կարողանում է հավասար ուժով խաղալ թե խարակտեր ու կենցաղային և թե կոմիկական ու դրամատիկական դերեր: Արտիստը մեծ հաջողությամբ անձնավորեց Լարրիի («Գործավարկին արգելված է սիրել»), Կոմսի («Հյուրանոցի տիրուհին»), Բալաբեկի («Աղբյուրի մոտ»), Շեյխ Ալիի («Վագիֆ»), Իսայու («Խաթաբալա»), Զինգերի («Կամո»), Միկոլայի («Գողացված երջանկություն»), Ոսկանի («Չար ոգի»), Հեթումի («Սոս և Վարդիթեր»), Բաղդասար ամու («Ժայռ») Պըլը-պուղիի («Պըլը-պուղի») կերպարները:

Լմու Խարապյանի թատրոնը երիտասարդ դերասանի

համար դառնում է մի իսկական դպրոց, որտեղ նա կարողանում է հարստացնել իր գիտելիքները և բարձրացնել պրոֆեսիոնալ մակարդակը:

Ամո Խարապյանը հայ բեմի հնագույն վարպետներից մեկը լինելով, սովետական թատրոնում պաշտպանում էր Սիրանուշի, Աբելյանի ռեալիստական բարձր արվեստի սկզբունքները և այն փոխանցում երիտասարդ դերասաններին: Նա ուշի-ուշով, հոգատարությամբ հետևում էր Վրույր Փանոյանի և մյուս երիտասարդ դերասանների ստեղծագործական աճին, գործնականում հաստատում թատերական արվեստի ռեալիստի ու ժողովրդայնության սկզբունքները, անդադար կրկնելով, թե թատրոնի կոչումը հասարակությանը ծառայելն է: Այդ խնդիրը նա իրականացնում էր անդադար շրջագայություններով, հանրապետության յուրաքանչյուր «թիվ» հողահարթակի վրա ներկայացումներ կազմակերպելով:

Թատրոնի համար կարևոր էր ոչ թե բեմահարթակը, այլ հանդիսատեսը: Շրջագայելու հետ միասին Ամո Խարապյանի թատրոնը պատրաստում էր նոր բեմադրություններ և դրանց միջոցով գյուղ էր տանում քաղաքի կյանքի մի մասնիկը, նրա մեծ շնչառությունը:

Ամենից դժվար և բարդ հարցը խումբը հեռավոր վայրեր տանելն էր, քանի որ այն ժամանակ ոչ մեքենաներ կային և ոչ էլ բարեկարգ ճանապարհներ:

Դերասանները, սակայն, հաղթահարելով բոլոր դժվարությունները, ժամանակին հասնում էին այս կամ այն լեռնային գյուղը և խրճիթներից մեկում խաղում իրենց ներկայացումները, մեծ ուրախություն պատճառելով հանդի-



Չուգունով («Գալլեր և ուխարներ»)



Իշխան Սյունի («Կարապետ»)



Տիկի (ալեգորիա ձիավորը)



Բժիշկ Պյոտր («Փոստականի տեսուչը»)

սատեսներին: 1930 թվականին լեռնային գյուղերում ներկայացումներ կազմակերպելը բացառիկ գործ էր, քանի որ ամենից ոչ էլեկտրականություն կար, ոչ ռադիո և ոչ հեռախոս, իսկ հեռուստատեսության մասին երազել անգամ չէր կարելի:

Հայաստանում չկար մի գյուղ, որտեղ եղած չլիներ Ամո Խարապյանի թատրոնը, ուր 1930 թվականներից սկսած, Վ. Փանոյանը ծավալեց իր ստեղծագործական գործունեությունը, դառնալով նրա սյուներից մեկը:

Երեսնական թվականների շրջանային մամուլի էջերում մենք ծանոթանում ենք Վրույր Փանոյանի ստեղծագործական անցած ուղուն և որոշ պատկերացում ստանում նրա խաղացած դերերի մասին: Այսպես՝ «Կոլխուզնիկ» թերթը 1934 թվին գրել է. «Առանձնապես պետք է նշել երիտասարդ դերասան Վրույր Փանոյանի կենսուրախ խաղը, որը չնայած իր երիտասարդությանը, շատ հաջող է կատարում դերը: Երիտասարդ դերասանը թատերական իր կրթությունը Ամո Խարապյանից տանալով, տարեց-տարի կատարելագործում է իր արվեստը, հարստացնում իր ստանձնած դերերը նոր գույներով»: Դերասանի մասին գովասանական խոսքեր են տպվում և 1936-ին: Այս անգամ ջերմորեն էր արտահայտվել «Սոցիալիստական անասնապահություն» թերթը, Ամո Խարապյանի աճեցրած դերասանական ընդունակ և հուսալի ուժերի մեջ առաջին հերթին հիշելով Վրույրին: Օժտված արվեստագետին տարբեր տարիներ դրվատական գնահատականներ են տվել նաև «Կարմիր Զանգեզուր» (1936 թ.), «Բայազետի կոլխուզնիկ» (1938), «Բոլշեիկյան կոլխուզ» (1941), «Հարվածային կոլխուզնիկ»

և այլ շրջանային թերթեր: Հոդվածագիրները միահամուռ
նշում են դերասանի խաղի ճշմարտացիությունը, վարպե-
տությունը, գրավչությունը, թե մեծ և թե փոքր դերերում
նրա ունեցած հավասար հաջողությունը, խոսքի նկատմամբ
արվեստագետի հայտնաբերած մեծ հոգածությունը:

Ամո Խարապյանի թատրոնի հետ Վրույր Փանոյանը
հյուրախաղերի է մեկնում ոչ միայն մեր հանրապետության
շրջանները, այլև եղբայրական Վրաստանի ու Ադրբեջանի
հայաբնակ վայրերը, սպասարկում նրանց և արժանանում
դրվատական գնահատականների: Շրջիկ թատրոնի դժվա-
րություններից դերասանները չէին վախենում: Նրանք ոտ-
քով երբեմն հարյուրավոր կիլոմետրեր էին կտրում և կամ
երբեմն էլ պատահած փոխադրական միջոցներով տեղ
հասնում: Հիշենք մի բնորոշ դեպք: 1930 թվականին Ղա-
փանի գյուղերից մեկում ներկայացումն ավարտելուց հե-
տո, թատերախումբը պետք է տեղափոխվեր Մեղրի: Լեռ-
նային նեղ արահետներով կարելի էր շարժվել միայն եր-
կանիվ սալներով, որոնց սպասում էին դերասանները:
Նրանք, սակայն, շատ վարժացան, երբ սալերի փոխարեն
տեսան մեղրեցիների ուղարկած 17 ջորիներին... Դժվար
չէ պատկերացնել այդ տեսարանը: Ալեհեր Ամո Խարապ-
յանի գլխավորությամբ ջորիների վրա նստած թատերա-
խումբը 75 կիլոմետր ճանապարհ կտրելով հասնում է
Մեղրի, որպեսզի ներկայացումներով սպասարկի գյուղա-
ցիներին:

Մենք արդեն խոսել ենք Վրույր Փանոյանի անկեղծ և
անմիջական խաղի, ճշմարիտ արվեստով հանդիսատեսնե-
րին գրավելու կարողության մասին: Դերասանը իր բնա-

կան խաղով կարողանում էր ստիպել հանդիսատեսներին մոռանալ, որ բեմում կանգնած է դերասանը, և խորապես համալսող նրա տնօնապետած հեղուսի հավաստիությանը։ Կերպարանափոխվելու այդ զարմանալի ունակության պատճառով դերասան Վրույրը քիչ մնաց նորից վրկվեր կյանքից...

Դա պատահեց Դավալուում, 1932 թվականին, երբ նոր էր սկսել ցեմենտի գործարանի կառուցումը։ Ներկայացնում էին Վ. Հարությունյանի «Ռապամճակատու» պիեսը։ Վրույր Փանոյանը խաղում էր դաշնակցական սպայի դերը։ Հանդիսատեսները տարվել էին բեմում ծավալված դեպքերով։ Դեռևս շատ թարմ էր մարդկանց հիշողության մեջ 12—14 տարի առաջ խաղաղ բնակչության նկատմամբ դաշնակցականների կողմից կատարած վայրագությունների ծանր տպավորությունները։ Բեմում վերակենդանանում էին մոտիկ անցյալի դաժան պատկերները, խորապես հուզելով հանդիսատեսներին։ Մեծ ոգևորությամբ էր խաղում Վրույր Փանոյանն իր դերը, մինչև վերջ մերկացնելով բացասական հերոսի արգահատելի էությունը։ Եվ հանկարծ ներկայացման լարված տեսարաններից մեկի ժամանակ լսվում է հրացանի կրակոց... Կրակոցը ոչ թե բեմից էր, այլ դահլիճից... Երիտասարդ մի հայ սահմանապահ, ինքնամոռացության մեջ կրակում է բեմական դաշնակ սպայի վրա, հիշելով որ այդպիսի մեկը տարիներ առաջ կործանել էր իրենց ընտանիքը։

Այս անգամ ևս երջանիկ պատահականությունը Վրույրին փրկում է ճամփից։

Վ. Փանոյանը ստեղծագործական իր ճակատագիրը

վերջնականապես կապելով Ամո Խարապյանի թատրոնի հետ, ամենայն լրջությամբ էր մոտենում իր գործին։ Աշխատանքի ժամերին նա շատ կարգապահ է և բարեխիղճ։ Շրջիկ կյանքը, հոգնածությունը, աշխատանքային ոչ նորմալ պայմանները, իհարկե, իրենց կնիքն են դնում արտիստի ստեղծագործական կյանքի վրա։ Երբեմն ոմանք ժամանակի սղության պատճառով կիսատ-պռատ գրիմներով են բեմ բարձրանում, կամ գրիմները երեսներին տեղից տեղ շարժվում, և այսպիսով աղճատում ստեղծած կերպարը։ Վրույր Փանոյանը, սակայն, երբեք, ոչ մի պարագայում չէր կորցնում արվեստի նկատմամբ ունեցած լուրջ վերաբերմունքը։ Որտեղ և երբ էլ որ ներկայացումը տեղի ունենար, խրճիթում թե բաց երկնքի տակ, ցերեկը թե գիշերը, նա բաց էր անում գրիմի տուփը, բեմական արդու-վարդի իր փոքրիկ ճամպուրակը, հագնվում, կեղծամը կպցնում, գրիմ անում, մի խոսքով կատարում այն ամենը, ինչ անհրաժեշտ է կերպարը բեմ տանելու համար։

— Նորի՞ց գրիմ անեսք,— հանկարծ տրտնջում էր որևէ մեկը։

— Այո, նորից...— պատասխանում էր Վրույրը և նրա այդ խոսքը բավական էր, որպեսզի մյուսները լուռ ու մունջ հետևեին իր օրինակին։

Հայրենական պատերազմի տարիներին և հետագայում աստիճանաբար աճում և հասակ է առնում Վ. Փանոյանի արվեստը։ 1949 թվականին Ամո Խարապյանի թատրոնը հիմնավորվում է Էջմիածնում։ Այդ տարիներին Վրույրը ստեղծում է մի շարք կերպարներ, որոնք տարբերվում են նախորդ դերակատարումներից իրենց խորությամբ և վար-

պետությամբ: Մինչև այսօր էլ Էջմիածնի աշխատավորները հիշում են Վրույր Փանոյանի ստեղծած Շմագան («Անմեղ մեղավորներ») և Բալաբեկը («Աղբյուրի մոտ»):

Շմագային կերպարանավորելիս Վ. Փանոյանը չի ջանացել շեշտել դերի կոմիկական առանձնահատկությունները, չի ներկայացրել նրան իբրև հարբեցող, իբրև կյանքում ամեն ինչ տեսած ու վայելած մի ցինիկ: Նրա Շմագան կարծես ուզում էր ասել՝ տեսեք, թե ինչ շրջապատում եմ ես գտնվում, ովքեր են ինձ հասցրել ծանր աղքատության, հրել ինձ կյանքի հատակը:

Այսպիսի մեկնաբանությունը և արտիստի անկեղծ խաղը խորապես հուզում էր դահլիճին: Շմագա-Վրույրը տպավորիչ էր հատկապես պիեսի վերջին տեսարանում, երբ միայնակ հերոսի քարացած անջքերում հանդիսատեսը տեսնում էր մարդկային մի մեծ ողբերգություն:

Արտիստը բոլորովին նոր մեկնաբանությամբ բացահայտեց Բալաբեկի կերպարը: Նրա առաջ ծառացել էր գերագույն մի խնդիր: Որքան կարելի է շատ ծաղրել իր հերոսին, մերկացնել նրա բացասական էությունը, ավելի շատ ցույց տալ նրա այլանդակությունը, քան ծիծաղելիությունը:

1952 թվականից Ամո Խարապյանի թատրոնը վերջնականապես հիմնավորվում է Արտաշատում, ուր մինչև օրս էլ իր արդյունավետ աշխատանքն է շարունակում Փանոյանը:

Արտաշատում հրատարակվող «Կոլտնտեսային կյանք» թերթը տարբեր համարներում բազմիցս նշել է Վ. Փանոյանի կոլորիտային, ներքնապես հագեցված, տպավորիչ խաղը «Կրեչինսկու հարսանիքը» (Կրեչինսկի), «Յասա-

մանի այգում» (Շիշկին), «Գոշ» (Ալավկեցի), «Գողացված երջանկություն» (Միկոլա) և այլ պիեսների բեմադրություններում:

Արարատ Բարսեղյանի «Կամո»-ի բեմադրության առթիվ 1956 թվականին, հանրապետական «Կոմունիստ» թերթը գրել է. — «Թատրոնը ստեղծել է հեղափոխական պաթոսով, պրոլետարական ինտերնացիոնալիզմով հագեցված մի ներկայացում, որի ջատագովն էր ինքը՝ Կամոն, հայ ժողովրդի ավնիվ վավակներից մեկը: Երևանի հանդիսատեսների հանդիպումը արտաշատցիների հետ հաճելի տպավորություն թողեց: Արտաշատի թատրոնը ամուր և շատ հավաքված մի կոլեկտիվ է, ուր շատ շնորհալի արտիստներ կան»: Թատերագետ Սերգեյ Բարսեղյանը հատկապես ընդգծում է Վ. Փանոյանի կոլորիտային խաղը Բակլաշկայի էպիլոգիկ դերում:

Ս. Ռիվանը «Սովետական Հայաստան»-ում տպագրած իր թատերախոսականում նույնպես դրական կարծիք է հայտնում Փանոյանի խաղի մասին:

Իվան Ֆրանկոյի «Գողացված երջանկություն» ներկայացման կապակցությամբ տպագրած թատերախոսականում «Կոմունիստ» թերթը Վ. Փանոյանի կերպարանավորած Միկոլայի մասին գրել է. «Վ. Փանոյանը ճշմարտացի և մարդկային հարուստ գույներով է օժտել Միկոլայի կերպարը: Միկոլայի բնավորությունը նկարագրված է շարժման մեջ, ուր պարզ վզացվում է վիրավորված ամուսնու ինքնասիրությունը, որը և հասցնում է Միխայլո Գուրմանի սպանության ծանր վախճանին»:

«Միկոլայի կերպարը Վ. Փանոյանի համար ստեղծա-

գործական մեծ հաջողություն է... Սպանության տեսարանը նա խաղում է մեծ վարպետությամբ» — գրում է Գ. Զարեյանը «Սովետական Հայաստան»-ում:

Վ. Փանոյանի Միկոյան համընդհանուր ուշադրության արժանացավ: Այս դերակատարման մեջ ի հայտ եկան արտիստի արվեստի դրամատիզմը, նրա բեմական ներկայակի նոր գույներն ու նրբերանգները: Իր «Ճիշտ մեկնաբանում» հոդվածում, որը տպագրվել էր 1957 թվին «Սովետական Արվեստ» ամսագրում, Լ. Հախվերդյանը Վ. Փանոյանի Միկոյանի մասին գրում է.


«Այդ դերը խաղում է Վրույր Փանոյանը, մի դերասան, որ միշտ կռիվական դերեր է մարմնավորել. սակայն Միկոյանի դրամատիկական այս դերը նա խաղում է ներքին մի այնպիսի խորությամբ, որ կարծես բեմում երբեք չէր մարմնավորել կենսուրախ դերեր. թվում է, թե տարիներ շարունակ արտիստը նախապատրաստվել է կերպարանավորելու Միկոյանին, մռայլ, վշտից վհատված մի մարդու, որի դեմքին բացակայել է ժպիտը, մի մարդու, որին կյանքը երբեք հնարավորություն չէր տվել աչք բանալու ու շուրջը դիտելու: Այս կերպարանքով է բացահայտված Վ. Փանոյանի Միկոյան: Այս, իհարկե, չի նշանակում, որ Միկոյանի բեմական նկարագիրը տվյալ դերասանի կողմից ներկայացված է միևնույն գույներով և գուրկ է ներքին պացուցմից: Հարցն այն է, որ դերասանը ոչ միայն ներքին ջերմությամբ և ինտելեկտով է խաղում իր դերը, այլև, ինչպես ընդունված է ասել՝ «խելոք է խաղում»: Այս իսկ պատճառով արտիստն իր դերում գտել էր նոր նրբերանգներ և ճիշտ էր վերադարձնում նրա տրամադրությունն ու

ներքին ապրումները: Իր այս հարուստ մեկնաբանությամբ դերասանը լիովին հասկանալի է դարձնում ստեղծված այն վիճակը, թե ինչու՝ «Միկոլան սպանեց Միխայլովին»:

Վ. Փանոյանի ստեղծագործությունների մասին մամուլում արտահայտված բոլոր գնահատականները բերում են մի հետևության, որ հանձին նրա, Հայաստանի թատերական արվեստն ունի ճեպիստական խաղաոճի մի տաղանդավոր արտիստ:

Արվեստի նկատմամբ նման անսահման նվիրվածությունը աննկատ չէր կարող մնալ: Եվ հասարակայնությունը, մամուլը, կուսակցությունն ու կառավարությունը արժանին հատուցեցին արտիստին: Թատերական արվեստի վարձացման գործում ցուցաբերած մեծ ծառայությունների և հասարակական արդյունավետ աշխատանքների համար 1939 թվականին Վ. Փանոյանը ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով արժանանում է պատվոգրի, 1954 թվին՝ վաստակավոր արտիստի և 1961 թվականին հանրապետության ժողովրդական արտիստի բարձր ու պատվավոր կոչման:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 46-ամյակի կապակցությամբ ՀՍՍՀ Կուլտուրայի մինիստրությունը Երևանում կազմակերպում է դրամատիկական թատրոնների փառատոն, որին մասնակցում է նաև Արտաշատի թատրոնը՝ Ֆրանկոյի «Գողացված երջանկություն» պիեսի բեմադրությամբ: Արտաշատցիների թատրոնն արժանանում է երկրորդ աստիճանի դիպլոմի, իսկ Վ. Փանոյանը՝ փառատոնի առաջին կարգի դափնեկրի կոչման: Արվեստի աշխատողների ՍՍՀՄ արհեստակցական միու-



Հերոս (սուս և Վարդիթեր)



Հովնանես կաթողիկոս (Եղևորդ Մարգարետունի)

թյունների կենտրոնական կոմիտեն և Զին-շեֆական կենտրոնական կոմիտեն Ռայբենական պատերազմի տարիներին կարմիր բանակի, ռազմածովային ուժերի և ներքին գործերի պինվորական մասերում կուլտուրական սպասարկման գերազանց աշխատանքների համար Վ. Փանոյանին արժանացնում է շնորհակալական պատվոգրի:

Արտաշատի աշխատավորությունը և թատերական հասարակությունը լայն կերպով նշեցին սիրված արտիստի՝ Վ. Փանոյանի ծննդյան 50 և բեմական գործունեության 30-ամյակը:

Հորեյարին ջերմագին ողջունում են Արտաշատի կուսակցական և սովետական կազմակերպությունների ներկայացուցիչները, մտավորականները, նրա հարավատ ստեղծագործական կոլեկտիվը, ինչպես նաև հանրապետության թատրոններն ու հասարակական կազմակերպությունները: «Արտաշատ» թերթի երկու համարներում «Սիրելի արտիստը» և «Հրաշալի մարդն ու գործիչը» խորագրով լույս տեսած ջերմ հոդվածներում բնութագրվում է արտիստի անցած 30-ամյա ստեղծագործական ուղին և բարձր գնահատվում նրա ստեղծագործական վաստակը:

Հորեյանական երեկոները ոմանց համար դառնում են բեմից իջնելու, հանգստի մեկնելու տարեթիվ, բայց այդպիսին չէ Վ. Փանոյանը: Ինչպես կարող է նա հանգստի մասին մտածել, երբ ամեն լուրջ պզուկ է շրջապատի սերն ու հարգանքը և նոր սպասելիքները, երբ իրեն դիմելիս ասում են՝ «սիրելի Վրույր», «Մեր Վրույրը»:

Բեմից նա շատ անգամներ է զգացել հանդիսատեսների սերն ու հարգանքը: Մինչև նրա մուտքը բեմական

գործողությունները սովորաբար չեն գրավում հանդիսականներին, բայց բավական է, որ հայտնվի սիրված արտիստը ու արտասանի առաջին ռեպլիկը և դահլիճում արդեն աշխուժություն է տիրում... մարդիկ սկսում են ժպտալ...

Անկեղծ սիրո նման պզտիկություններով են մարդիկ շրջապատում Վրույրին նաև կյանքում: Կոլխուսիկները միշտ էլ սիրով շրջապատում են նրան ներկայացումից առաջ և հետո, պրուցում հետը, բաժանում իրենց տպավորությունները:

Մի քանի տարի առաջ Շամշադինի շրջանի Մովսես գյուղի կոլտնտեսության նախագահը կազմակերպում է գյուղի աշխատավորների ու աշակերտների հանդիպումը Վրույրի հետ: Հանդիպման մեկնելիս, Վ. Փանոյանը ճանապարհին հանդիպում է Շամշադինի շրջանի շրջգործկոմի նախագահ Դանիելյանին, որը տեղեկանալով, որ ակումբում հանդիսատեսներն արդեն սպասում են, բայց պեկուցող չկա, սիրով համաձայնվում է բեմ բարձրանալ և համագյուղացիներին պատմել սիրելի արտիստի խաղից ստացած իր տպավորությունները:

Չնայած Ամո խարապյանի անվան թատրոնն այժմ ունի աշխատանքի իր կայուն վայրը, բայց շարունակում է հաճախակի հյուրախաղերի գնալ: Ստեղծագործական կոլեկտիվի բեմադրություններին քաջ ծանոթ են ոչ միայն մեր հանրապետության գյուղերի և քաղաքների, այլև Ադրբեջանի ու Վրաստանի հայաբնակ վայրերի հանդիսատեսները: Սակայն թատրոնի կոլեկտիվը չի բավարարվել միայն հարևան հանրապետությունները մեկնելով:

Վերջին տարիներին նա երեք անգամ հյուրախաղերի

է գնացել Ռոստով, Արմավիր քաղաքներն ու նրա շրջանները և սպասարկել այդտեղ ապրող հայ հանդիսատեսներին:

Ամո խարապյանի անվան թատրոնի ներկայացումները բարձր են գնահատվել հասարակության և տեղական մամուլի կողմից: Բոլոր թատերախոսություններում զրվատանքի է արժանացել հատկապես Վ. Փանոյանի խաղը:

«Արմավիրի կոմունա» թերթում «Սոս և Վարդիթեր» ներկայացման մասին, 1960 թ. մայիսի 16-ին գրված է. «Հաջող էր ավելի և յուրովի իր աղջկան սիրող գյուղացի Հեթումի դերում ՀՍՍՀ վաստակավոր արտիստ Վ. Փանոյանը»:

Արտաշատցիների առաջին ներկայացման՝ «Անահիտ»-ի բեմադրության առթիվ «Երեկոյան Ռոստով» թերթում մենք ընթերցում ենք մանկավարժական ինստիտուտի դասախոս ընկ. Պ. Թաբուկյանի թատերախոսությունը: Վերլուծելով դերակատարների խաղարվեստը, նա գրել է. «Վաստակավոր արտիստ Վրույր Փանոյանը ներկայացման մեջ մեծ աշխուժություն է մտցնում: Նրա պալատական ծաղրածուն կենսուրախ է, հնարամիտ ու ձեռնահաս: Գործող անձերից մեկը նրան բնութագրելով ասել է՝ «Նա խելոք հիմար է» և արտիստը լրիվ արդարացնում է իրեն վերագրված այդ ածականը»:

Վ. Փանոյանի վարպետությանը ավելի հիացական գնահատական է տալիս Ռոստովի Մյասնիկյանի անվան շրջանի «Կոմունիստ» թերթը իր 1960 թ. հունիսի 29-ի համարում, «Անահիտ» ներկայացման առթիվ տպագրած թատերախոսականում. ուր մասնավորապես ասված էր. «Պա-

լատական ծաղրածուի դերում, Վրուլյո Փանոյանին մեր հանդիսատեսները երբեք չեն մոռանա»։ Մյասնիկյանցիներին քաջ ծանոթ էր Արտաշատի թատրոնի արվեստը, սակայն այս այցին նրանք ավելի հմայվեցին իրենց սիրելի դերասանների և հատկապես Վրուլյոի խաղով։

Երեք տարի անց, 1963 թվին, Արտաշատի Ամո Խաբալյանի անվան թատրոնը նորից հյուրախաղերի է մեկնում Ռոստով, այս անգամ ավելի ընդլայնված խաղացանկով։ Վրուլյո Փանոյանը նորից մեծ հաճույք է պատճառում արվեստի իր երկրպագուներին։ «Մուլոտ» թերթի 1963 թվի հուլիսի 11-ի համարում «Նամուս» ներկայացման առթիվ տպագրված հոդվածում ասված է. «Մեր հիշողության մեջ շատ երկար կապրի ժող. արտիստ Վրուլյո Փանոյանի՝ Սեյրանի հոր—Հալրապետի ստեղծած կերպարը»։ Մամուլը մեծ գովեստով արտահայտվեց նաև արտիստի կերտած մյուս հաջող բեմական կերպարների՝ Գարուշ բիծայի («Սիրտը կանչում է»—Ա. Բաքայան) և Իշխան Սյունու («Վարապդատ»—Լ. Միքայելյան) մասին։

• • •

Երբ Արտաշատում օրը երեկոյանում է, մարդիկ աշխատանքից տուն դառնալով երբեմն կանգ են առնում թատրոնի հրապարակում և աշխույժ կրուցում։ Այդտեղ միշտ մարդաշատ է լինում. ահա փոքրիկ ճամպրուկը ձեռքին, գլխիկոր, մտածկոտ հայացքով, միջին հասակի մի նիհար մարդ, մտնում է հրաառակ. ժուրը նրան հարգանքով

բարևում են: Հարգալից ողջույններին մարդը պատասխանում է գլխի զսպված մի շարժումով և աճապարանք-հեռանում է, ասես վախենալով կտրվել իր մտքերից:

Վրույր Փանոյանին ուղղված արտաշատցիների բարի և հարգալից ժպիտները ջերմացնում են արտիստի սիրտը, բայց աշխատանքի գնալիս նա ոչ մի տեղ չի կանգնում. նրա մտքերն արդեն թատրոնում են, և թեպետ քայլում է, բայց ամբողջապես կերպարի մեջ է, որին քիչ հետո պետք է բեմում մարմնավորի: Միշտ ներկայացումից երկու ժամ առաջ նա իր հարդասենյակումն է լինում, առանց շտապելու հագնվում է, գրիմ անում, մտքում կրկնում դերը և «շփվում» բեմական անտեսանելի խաղընկերների հետ:

Հաճախ այնպես է պատահում, որ ներկայացումները Վրույրին ուրախություն և հաճույք չեն պատճառում. նա անկեղծորեն հուզվում է, երբ չի տեսնում, չի Վզում դահլիճի ջերմ վերաբերմունքը այն տեսարաններում, որտեղ դա սպասելի էր: Ո՞վ է հանցավոր... Հանդիսատեսը... Ոչ, նա ինքը... Բայց ինչո՞ւ... Եվ այդ «ինչո՞ւ»-ի մասին արտիստը պետք է մտածի տանը, որպեսզի կարողանա գտնել իր և դահլիճի միջև առաջացած խզման պատճառը, վերականգնի այն հավասարակշռությունն ու փոխըմբռնումը, որ գոյություն է ունեցել բեմի և հանդիսասրահի միջև, հավասար չափով հրճվանք պատճառելով թե՛ դահլիճում նստածներին և թե՛ իրեն:

Դերասանը ստեղծագործում է և դա նրա համար դժվար ու տանջալից ընթացք է: Ահա նա նոր դեր է ստացել բաշկիրական հեղինակ Մուստայ Զարիմի «Լուսնի խավարման գիշերը» պիեսում: Նման տիպեր մեծ կյանքում չկան:

ինչպիսի՞ն են եղել Բաշկիրիայում դերվիշ բաբաների պես մարդիկ հեռավոր անցյալում, անհայտ է իրեն: Չէ՞ որ արտիստը պետք է լավ իմանա, թե ինչպես են նրանք հագնվել, քայլել, խոսել և խենթությունների դիմել: Դա շատ անհրաժեշտ է դերի վրա աշխատելու շրջանում: Վրույր Փանոյանը հանգստացավ միայն այն ժամանակ, երբ նամակ ուղարկեց Բաշկիրիա և ցանկացած նյութերը ժողովեց:

Դերվիշի կերպարը Վրույր Փանոյանի ստեղծագործական հաջողությունն է: Առաջին երկու գործողություններում արտիստը համարյա անելիք չունի: Մյուս գործող անձանց հետ առանց որևէ շփման, համարյա «անգործ» կանգնած է բեմում: Երբեմն միայն գաղտագողի նայում է շրջապատի մարդկանց, անցնում նրանց կողքով, երբեմն էլ քիչ նշանակություն ունեցող խոսքեր նետում: Սակայն վարմանալին այն է, որ հանդիսատեսներն աչք չեն հեռացնում նրանից, զգաստ հետևում են նրա յուրաքանչյուր շարժ ու ձևին, նրա մեջ տեսնելով գլխավոր գործող անձին, որը պատրաստվում է կամաց-կամաց հարված հասցնել...

Դերասանն իր կերպարը քանդակել է խոշոր վրձնահպումներով: Նա արտաքինապես իրեն հանգիստ է պահում, սակայն դա մեծ անհանգստություն և սարսափ է առաջացնում նրա շրջապատողների մեջ: Վ. Փանոյանը ներկայացման երկրորդ կեսում գերապանց է վարում իր դերը: Ցուցադրում է խաղի բարձր արվեստ, մեծ լարվածություն հաղորդելով Դերվիշի և Թանկաբիկեի տեսարանին:

Երբ Վրույրին հանձնարարում են մի այնպիսի դեր, որը նրան չի հուպում, արտիստը չի շտապում հրաժարվել: Նա

նորից ու նորից է ընթերցում իր դերը, լսում տնեցիների՝ իր «խիստ» քննադատների կարծիքը և բոլորովին նոր ակնոցներով տեսնում կերպարը:

Խաղացված բազում դերերի լուսանկարների մեջ կա մեկը, որը կարծես ի մի է բերում Վ. Փանոյանի ստեղծագործական 30-ամյա ուղին: Արտիստը հիսունական թվականներին նկարվել է իր ստեղծած դերերում: Վերջին տարիներին Վ. Փանոյանը հանդես է եկել շատ նոր ստեղծագործություններով, բայց այդ լուսանկարում անմահացած բեմական անմոռաց կերպարներն էլ բավական են, որպեսզի մեզ հիշեցնեն նրա անցած մեծ ու արգասավոր ճանապարհի մասին: Արտիստը հիմա էլ լի է ստեղծագործական եռանդով: Երազում է Արտաշատի բեմում մարմնավորել մեծ Լենինի, Սվերդլովի և հայ ժողովրդի սրտին մոտ ուրիշ մեծ մարդկանց կերպարները:

Շրջանային թատրոնի առաջատար վարպետը, ժողովրդական արտիստ Վրույր Փանոյանը ունի ստեղծագործական փայլուն կարողություններ և կարող է իրագործել իր այդ նվիրական երազանքը:

1966 թվականին «Սովետական արվեստ» ամսագրի էջերում ասված է. «Ժողովրդական արտիստ Վրույր Փանոյանը իբրև դերասան կարող է իր արվեստով հնչել ոչ միայն արտիստական ուժեղագույն խմբերում, այլև ակադեմիական թատրոնում»:

Արժանի գնահատական:

ԱՐՓԻԿ ՂԱԶԱԶՅԱՆ

(ՀՍՍՀ վաստակավոր դերասանուհի)

Երբ անցնում ես Սևան տանող ճանապարհով, թվում է քեզ, որ ընկել ես հայ ժողովրդի հեռավոր անցյալի գիրկը, երբ լճի դարպասները պաշտպանված էին երկնասլաց պարիսպներով: Կամո քաղաքը տանող ճանապարհը հյուսված է լճի ոլորապտույտ ավերին և մեկ մոտենում է նրա ջրերին, մեկ հեռանում՝ աստիճանաբար բաց անելով իր դարավոր պատմության գաղտնիքները:

Սակայն, այս ճանապարհը մեզ ոչ այնքան տանում է դեպի անցյալի պատմությունը, որքան նոր խոսք է ասում մեր ժողովրդի այսօրվա մասին, Սևանի ավին բարձրացած նոր քաղաքի մասին, ուր չորս հազար տարվա պարիսպների փոխարեն վեր են խոյացել հարյուրավոր բնակելի շենքեր, ֆաբրիկաներ ու գործարաններ: Այդպիսին է այսօրվա Կամո քաղաքը, որի թատրոնի գոյության 30-ամյակը նշվեց երկու տարի սրանից առաջ: Այստեղ էլ տասնհինգ տարի անընդմեջ աշխատում է վաստ. դերասանուհի Արփիկ Ղազապյանը:

Թատերական նոր շենքի դռները բացվեցին:

Այսօր առաջին անգամ բեմադրվում է Բ. Սեյրանյանի «Ամպրոպը լեռներում» դրաման: Արփիկ Ղազապյանը կատարում էր Ապի Նաբաթի դրամատիկ դերը:

Տեքստի տեսակետից սա էպիկոդիկ հերոս է: Ամբողջ ներկայացման ընթացքում նա բեմում միայն երեք անգամ է հայտնվում, այն էլ երկու անգամ առանց խոսքի և գրեթե ակնթարթային ձևով:

Առաջին անգամ հանդիպելով Արփիկ Ղազապյանի հետ: Ապի Նաբաթի դերում, ես մտածում էի, թե նա ինչպիսի ծիրք ու վարպետություն ունի, որ կարողացավ համարյա անխոս այդ կերպարը բեմում դարձնել կենտրոնական: Նրա անձնավորած հերոսուհու աչքերում մենք տեսնում ենք թաքնված մի թախիծ, հուժկու մի ատելություն Յուլվանի նկատմամբ և իր մայրական դատավճիռն ի կատար ածելու անպուսպ ցանկություն: Բեմի վրա նա իրեն պուսպ է պահում՝ խնամքով թաքցնելով սրտում փոթորկած վրեժի կրակը: Գուցե Արփիկ Ղազապյանի Ապի Նաբաթը միայն անձնական վշտի հարկադրանքով Յուլվանին սեփական ձեռքով չոչնչացնեք, եթե նրա մեջ չտեսներ սոցիալապես վտանգավոր մի մարդու, որը հիմա էլ շարունակում է թունավորել մթնոլորտը:

Դերասանուհին բեմական իր կերպարը խնամքով թաքցնում է շրջապատի տեսադաշտից: Ա. Ղազապյանի Ապի Նաբաթը աննկատելի երևում և անհայտանում է: Տպավորությունն այն է, որ տառապած ու իր վրեժին հետամուտ այդ կինը, ցանց է գործում իր թշնամու շուրջը, փոս փորում նրա ոտքերի տակ: Դերասանուհին ցանկացել է

հոգեբանորեն արդարացնել իր դաժան որոշումը Յուվանի նկատմամբ և չարագործի սպառնալից ակտը իմաստավորել ոչ թե իբրև անձնական վրձ, այլ որպես սոցիալական չարիքի դեմ մղվող պայքար:

Արփիկ Ղազալյանը ծնվել է 1919 թվականին, Լենինական քաղաքում: Մոր անժախտակ մահից հետո, նա հոր հետ տեղափոխվում է Թիֆլիս: Այստեղ նրա հայրը՝ Չնիկ Ղազալյանը զբաղվում է կոշկակարությամբ, որպեսզի կարողանա պահել իր ընտանիքը: Աշխատանքից հետո, ապառ ժամերին նա հաճախում է Թիֆլիսի դրամատիկական խմբակներից մեկը: Անցնում է մի քանի տարի և Արփիկի հոր համար թատրոնը դառնում է կենսական մի պահանջ, անպայելի մի կիրք:

Կոշկակարի արհեստը Օնիկ Ղազալյանի համար դառնում է այլևս երկրորդական գործ և նա վերջնականապես տեղափոխվում է պրոֆեսիոնալ թատրոն. դերասանի առաջին քայլերը պսակվում են հաջողությամբ:

1930 թվականին նա հրավիրվում է Լենինականի թատրոն, ուր աշխատում է մինչև օրս: Արփիկն այդ ժամանակ տասնմեկ տարեկան էր: Նա միշտ անբաժան է եղել հորից, իսկ Լենինական տեղափոխվելուց հետո ապրում է իր տատիկի մոտ, որը նրա երկրորդ մայրն է դառնում: Հոր երկրորդ ամուսնությունից հետո էլ աղջիկը չի կտրվում նրանից: Արփիկը ամեն օր գնում էր թատրոն և հորը տեսնելով տարբեր դերերում, հրճվում էր ու հպարտանում: Կարճ ժամանակամիջոցում նա իր տատիկի հետ միասին դիտում է թատրոնի բոլոր բեմադրությունները: Արփիկը անգիր գիտեր, թե որ դերասանը երբ պետք է բեմ մտնի, ով երբ

պետք է սկսի խաղալ, երգել, տանջվել, սեր բացատրել և կամ մերժել: Թատրոնը դարձավ դեռահաս աղջկա երջանկությունը, այն վայրը, ուր նա կարող էր մոռացության գիրկն ընկնել ու լի հույսերով երազել: Կարո՞ղ էր արդյոք տատիկը իմանալ, թե ինչ է կատարվում իր սուսիկ-փուսիկ թոռնիկի սրտում, երբ վերջինս ամեն ինչ մոռանալով, կլանված դիտում էր Արմեն Արմենյանի, Եկատերինա Դուրյան-Արմենյանի, Յոլակ Ամերիկյանի, Լևոն Զոհրաբյանի, Սուրեն Սուրենյանի և Արուս Ասրյանի խաղը: Արփիկի համար այս նշանավոր արտիստները պաշտամունք էին դարձել, և մտքում աղջիկը խաղում էր նրանց նման, երազում հաճախ տեսնում նրանց, վեր թռչում անկողնուց և երկար մտածում՝ արդյո՞ք կարող է ինքը դերասանուհի դառնալ:

Թատրոն գալով Արփիկը մոռանում էր և քաղցը և մայրական ընթշանքի բացակայությունը և վերջապես իր տխուր մանկությունը... Բայց որքա՞ն կարելի է կիսաքաղց ապրել. և ահա փոքրիկ աղջիկը 15 տարեկան հասակում ստիպված թողնում է դպրոցը, և իբրև աշակերտ աշխատանքի ընդունվում տեքստիլ կոմբինատում: Հեշտ է պսել ընդունվեց աշխատանքի: Արփիկն այն ժամանակ արտաքնապես փոքրիկ էր, թույլ ու նիհար և ֆիզիկական աշխատանքի համար անհամապատասխան: Եվ նրան մերժեցին աշխատանքի ընդունել: Արփիկը խիստ հուզվեց, արցունքները առատորեն թափվում էին աղջկա աչքերից: Նա հազիվ թե կադրերի վարիչի մերժումից այսպես լցվեր և արցունքներ թափեր: Գաղտնիքն ավելի խորն էր՝ նա միայնակ էր կյանքում, բոլորովին անօգնական: Եվ գուցե Արփիկը շատ հրկար առտասվեր, եթե հանկարծ չզգար իր մազերը

շոյող ձեռքի մտերիմ ջերմությունը: Տեքստիլ կոմբինատի դիրեկտորը հանգստացնում էր դեռատի աղջկան և թաշկինակով սրբում նրա աչքերից թափվող արցունքները: Երբ վերջապես դիրեկտորն ասաց, որ այսօրվանից նա ընդունված է աշխատանքի, Արփիկն ուրախությունից ճչաց և վազեց տուն, տատիկին պատմելու իր ուրախության մասին:

Աշխատանքի առաջին օրերին, մեքենաների աղմուկը, նոր միջավայրը, աշխատանքին ընտելանալու դժվարին ընթացքը և լրացուցիչ այլ հոգսերը ժամանակ չէին տալիս Արփիկին մտածելու թատրոնի մասին: Նա աշխատում էր տիրապետել իր արհեստին, ետ չմնալ ընկերուհիներից: Կարճ ժամանակից հետո Արփիկը տիրապետում է իր մասնագիտությանը և վարպետանում: Դեռ մի տարի էլ չէր բոլորել կոմբինատ մտնելու օրվանից և նա արդեն աշխատում էր 24 դպագահների վրա, իբրև հարվածային աշխատավորուհի: Միաժամանակ հաճախում էր տեքստիլ գործարանի տեխնիկումի դասընթացներին և վերադվում գեղարվեստական գրականության ընթերցանությամբ:

Իսկ թատրոնը...

Մի՞թե աշխատանքը մոռացնել տվեց ամեն ինչ... կամ գուցե դա պատանեկական մի հրապուրանք էր... Ոչ իհարկե... Սակայն թատրոն ընդունվելու համար միայն ցանկություն ունենալը բավական չէր: Արփիկը քաջ իմանալով, որ հայրը չի ցանկանում տեսնել իր 18-ամյա աղջկան բեմի վրա, նրանից գաղտնի սկսում է հաճախել առևտրի աշխատողների ակումբի դրամատիկական խմբակը: Ինքնագործ խմբի պարապմունքները նոր ուժով են բոցավառում թատրոնի հանդեպ Արփիկի ունեցած սերը:

Դրամատիկական խումբը սկսեց բեմադրության պատրաստել Յագարելու «Խանումա» պիեսը: Բեմադրող ռեժիսորը՝ Լենինականի պետքատրոնի դերասան Գևորգ Ղազարյանը գլխավոր դերը հանձնում է Արփիկ Ղազարյանին: Այդ օրվանից արվեստի աշխարհը շնորհալի աղջկա առաջ աստիճանաբար բաց է անում իր պրոֆեսիոնալ գաղտնիքները, ուրախություններն ու հիասթափությունները: Գևորգ Ղազարյանը հոգատարությամբ ուղղություն է տալիս սկսնակ դերասանուհու բեմական առաջին քայլերին, բացահայտում նրա ընդունակությունները: Արփիկը կարողանում էր ճիշտ կռահել ռեժիսորի ցուցմունքները և բեմում իրեն գտավ ազատ ու անկաշկանդ:

Ռեժիսորի պարապմունքները, խորհուրդները, Խանումայի մեծանուն դերակատարուհիների փորձը, համառ աշխատանքը, առանց որի հնարավոր չէր հաջողության հասնել, օգնեցին Արփիկին: Աղջիկը պետք է առաջին անգամ բեմ բարձրանար... և այդ գիտակցությունից նրա սիրտը ջերմանում էր: Միայն արտիստները գիտեն, թե ինչ է նշանակում աներևակայելի այդ զգացումը: Խանումայի կերպարը այնպես էր կլանել Ա. Ղազարյանին, որ քնից արթնանալուն պես առավոտից մինչև ուշ գիշեր, անգամ աշխատանքի ժամերին միալար չխկչխկոցի աղմուկում բարձրաձայն կրկնում էր դերը: Ընկերուհիները վարմանը ուղեկցում էին, որ Արփիկը մեկ էլ հանկարծ սկսում է ինքն իրեն խոսել, այնպիսի բառեր ասել, որ ոչ մի կապ չունի աշխատանքի հետ, տարօրինակ շարժումներ անել: Տպավորությունն այնպիսին էր, որ կարծես երևակայական մի մառդ կանգնած է աղջկա կողքին և սա պրուցում է

նրա հետ: Արփիկը ուշքի էր գալիս միայն այն ժամանակ, երբ ընկերուհիներից որևէ մեկը մոտենում և սթափեցնում էր նրան:

Դրամատիկական ինքնագործ խմբի ներկայացումը ընդունվում է մեծ հաջողությամբ: Հանդիսատեսները յուրաքանչյուր գործողությունից հետո այնպես էին ծափահարում դերակատարներին, որ անսպասելի հաջողությունից նրանք չգիտեին, թե ինչ անեն: Հաջողության ամենամեծ թաժինը ընկնում է Խանումայի դերակատար Արփիկ Ղալալյաևին: Շատ բան հիմա մոռացվել է և դերասանուհին հիշում է լույ այն, որ իր շփոթված աչքերի առաջ պարիսպի նման վեր էր խոյացել դահլիճը և բռնան ծափահարությունների ներքո հիացական բացականչություններ էին լսվում: Կուլիսների ետևից բեմադրող ռեժիսորը ժպտալից դեմքով անընդհատ հուշում էր Արփիկին գլուխ խոնարհել հանդիսատեսների առաջ, իսկ նա կարծես ինչ-որ կապանքների մեջ ընկնելով, պրկվել էր մտածելու և տեղից շարժվելու ընդունակությունից: Վարագույրն իջնելուց հետո, երբ ռեժիսորը մոտեցավ հուզված աղջկան, շնորհավորեց և համբուրեց, այն ժամանակ միայն նա կարծես ուշքի եկավ և ուրախությունից արտասվեց:

Այդ օրվանից Արփիկը վերջնականապես որոշում է նվիրվել թատրոնին: Գևորգ Ղալարյանի ղեկավարությամբ գործող խմբում նա մի քանի անգամ ևս խաղում է Խանումայի դերը, մասնակցում մի շարք այլ ներկայացումների, ամեն անգամ արժանանալով հանդիսատեսների ջերմ ընդունելությանը և բեմադրող ռեժիսորի դրվատանքին: Գ. Ղալարյանը, որ եղել է Արփիկի առաջին բեմական

ուսուցիչը՝ չգիտեր, որ իր սանը Լենինականի թատրոնի իր վաճառական խաղընկերներից մեկի դուստրն է:

Տարվա ընթացքում Արփիկը հանդես է գալիս մի շարք բեմադրություններում: «Խանութայից» հետո նա մարմնավորում է՝ Մանանի («Չար ոգի»), Մարգարիտի («Պատվի համար»), Սաթիկի («Սպանված աղավնի»), Մարթայի («Պաղտասար աղբար»), Կեկելի («Պեպո») և Բարբարեի («Էլի մեկ զոհ») կերպարները:

Ինչպիսի սեր պետք է ունենար դեպի արվեստը երիտասարդ մի աղջիկ, որը աշխատանքից հետո իր բոլոր ժամերն ու երեկոները նվիրեր յոթ դեր անգիր անելու ծանր գործին: Նույնիսկ պրոֆեսիոնալ արտիստների համար այդքանակը շատ է: Սակայն դրամիսմբակի անդամ Արփիկ Ղալապանի համար թատրոնից բացի կյանքում ուրիշ ոչ մի նպատակ այլևս չկար: Եվ յուրաքանչյուր նոր դեր ստանալիս նա ավելի համառորեն էր աշխատում, քաջ գիտակցելով, թե ինչպես օր-օրի վրա փորձ կուտակելով, ինքն աստիճանաբար մոտենում է իր լուսեղեն նպատակին:

Վերջապես հասնում է այն օրը, երբ Արփիկի պրոֆեսիոնալ թատրոն գնալու հարցը դառնում է նրա և ռեժիսորի հատուկ վրդովի նյութը:

— Հայրս քի համաձայնվում, որպեսզի ես դերասանուհի դառնամ,— խոստովանում է Արփիկը:

— Ինչպես կարող է չհամաձայնվել, երբ դու մի ամբողջ տարի արդեն պարապել ես դրամիսմբում:

— Նա այդ մասին ոչինչ չգիտե...

Երբ Ղալապանը իմանում է, թե ով է Արփիկի հայրը, երևար ժամանակ ծիծաղում է.

— Ես կհամոզեմ նրան, կասեմ, որ քո տեղը թատրոնն է և անպայման կստանամ նրա համաձայնությունը: Ես կապացուցեմ նրան, որ դու կարող ես դառնալ լավ դերասանուհի:

Այժմ խոսքը տանք Արփիկին, և հնարավորություն ստեղծենք պատմելու մեկ տասնամյակների վաղեմություն ունեցող դեպքերի մասին:

«...Օրերից մի օր, երբ ավարտվեց «Խանումա» ներկայացումը և փակվեց վարագույրը, ես հարդասենյակում նստել և մաքրում էի գրիմս, հանկարծ ներս են մտնում դրամախմբակի ռեժիսյորը, Լենինականի թատրոնի գլխավոր ռեժիսյոր Վարդան Աճեմյանն ու հայրս: Հանկարծակիի գալով ես վեր թռա տեղիցս և ամոթից սարսափած տեղումս քարացա: Աչք չէի հեռացնում հորիցս. նա չբարկացավ ինձ վրա, միայն գլուխը թափահարեց ու ծպտաց: Ես տանջվում էի, չէի կարողանում կռահել, ինչ է նշանակում նրա ծպիտը, բարկանում է իմ վրա, թե հավանություն է տալիս իմ կատարած քայլին. հենց այդ ժամանակ էր, երբ լուրջությունը խախտելով ինձ մոտեցավ Վարդան Աճեմյանը՝ ամուր սեղմեց իմ ծեռքը և դառնալով հորս, կարճ ու կտրուկ ասաց.

— Օնիկ, աղջկանդ վաղը կբերես թատրոն:

— Վարդան Նիկիտիչ, արժե՞ նրա կյանքը տանջանքների ենթարկել:

— Ի՞նչ է, չտեսա՞ր որ նա դերասանուհի է, չե՞ս տեսնում ինչպես է զգում արվեստը...

— Հետո՞, ինչ կստացվի այդ ամենից:

— Այն, որ նրա տեղը թատրոնն է, հասկացա՞ր...

Այնքան էլ հեշտ չէր համոզել հորս: Պրոֆեսիոնալ

արտիստ լինելով հանդերձ, նա դժվարանում էր համաձայնվել: Ես նրան խնդրում էի, աղաչում, համոզում, որ առանց բեմի ես կյանք չունեմ, որ ես համաձայն եմ նույնիսկ տեխնիկական աշխատող դառնալ, միայն թե թատրոնի օդը շնչեմ: Իմ բարի տատիկն իր կողմից նույնպես համոզում էր հորս.

— Մի հակառակի նրա ցանկությանը. եթե այդ աղջկադ սրտովն է, թող զնա աշխատի թատրոնում. նրա ճակատագիրն էլ դա է...

Վերջապես հայրս զինաթափ եղավ ու համաձայնվեց: Այդ օրն իմ կյանքի ամենաերջանիկ օրերից էր:

Քննություններիս նախօրեին տանը ես մեկ լաց էի լինում, մեկ ծիծաղում: Տատիկս աշխատում էր ամեն կերպ հանգստացնել ինձ:

— Ջնիր, առավոտն ավելի բարի է, քան երեկոն:

Ջնիր, որ չտապալվես քննության ժամանակ... Ես կաղոթեմ քեզ համար...»:

Եվ տատիկն իրոք աղոթեց, մինչև որ Արփիկն ապրումներից հոգնելով քնեց. առավոտյան տատիկը ջերմ համուրեց թռնիկին և ճանապարհ դրեց թատրոն:

Ջննական հանձնաժողովի անդամներն էին՝ Վարդան Աճեմյանը, Արմեն Արմենյանը, Եկատերինա Դուրյան-Արմենյանը և ուրիշներ: Արփիկը «Խանումայից» խաղաց մի տեսարան և այնուհետև մի քանի մենախոսություններ կարդաց: Այդքանը բավական էր, որպեսզի նա ընդունվեր Լենինականի պետական թատրոնի օժանդակ կազմում:

Արփիկի երազանքները վերջապես իրականացան: Նա այժմ թատրոնում էր, և հնարավորություն ուներ ամեն օր

շփվել հայ թատրոնի նշանավոր գործիչներ՝ Արմենյանի, Դուրյան-Արմենյանի, Գավրոշի, Զոհրաբյանի, Ամերիկյանի հետ, որոնց վարպետությունը, խաղարվեստը, դպրոց էր նրա համար, և անհասանելի մի երազանք: Արփիկը, սակայն, քաջ գիտեր, որ տարիներ շարունակ սիրողները կարող են սպասել և դեր չստանալ: Սա լրջորեն մտախոհում էր նրան: Ինչ անել,— մտածում էր նա,— մնալ թե տեղափոխվել շրջանային որևէ թատրոն և արագ քայլերով առաջ գնալ:

Այս հարցի լուծմանը օգնեց Արփիկի հայրը՝ համառորեն պնդելով, որ ընտրվի երկրորդ ուղին:

Մեկ ամսից հետո, Արփիկին մենք տեսնում ենք Արթիկի շրջանային պետական թատրոնում: Այդ ժամանակներում թատրոնական շենքերն ըստ էության ակումբներ էին և չունեին տարրական հարմարություններ: Գյուղերի վիճակն ավելի վատ էր, ներկայացումները խաղում էին խրճիթներում, հողե հատակի վրա: Այժմ այդ ամենը պատմության գիրկն է անցել: Սակայն, ինչ պայմաններում էլ աշխատելիս լինեին, շրջանային թատրոնի դերասանները հակառակ քաղաքում աշխատող դերասանների՝ երբեք անգործ չէին մնում: Նրանցից յուրաքանչյուրը տարին 5—6 դեր էր խաղում և այն էլ համարյա ամեն օր: Այս հանգամանքը հնարավորություն էր տալիս դերասաններին բարձրացնելու իրենց ստեղծագործական մակարդակը, փորձ ու վարպետություն ձեռք բերել: Արփիկի համար Արթիկի թատրոնը դարձավ լավագույն դպրոցը:

Ստեղծագործական առաջին իսկ քայլերից սկսած, նա ստանում է առաջնաստիճակ դերեր՝ «Պլատոն Կրեպետ»,

«Խաթաբալա», «Նաժուս», «Պաղտասար աղբար» և ուրիշ շատ բեմադրություններում:

Արփիկն իր դերերը խաղում էր ներշնչումով, բնական հե անկեղծ, այնպես, որ ոչ միայն համոզիչ, այլև մատչելի լինի հանդիսատեսներին: Եվ կարճ ժամանակամիջոցում Արփիկ Ղազարյանը հասնում է ստեղծագործական նշանակալից հաջողությունների: «Սևիլ» ներկայացման մեջ խաղալով Գյուլուշի դերը, դերասանուհին ստեղծել էր հետաքրքիր ու տպավորիչ բեմական կերպար: Արփիկ Ղազարյանին ավելի մեծ հաջողություն բերեց Զեթևանի («Խաթաբալա») դերը:

Տասներեք տարվա ընթացքում Արթիկի թատրոնում Արփիկ Ղազարյանը հասցրեց մարմնավորել դասական և արդիական խաղացանկի մոտ 50 կերպար:

Դրանցից են Բուրաստանը՝ Ս. Պալապատի «Հարսանիք»-ում, Անահիտը՝ Ա. Արաքսմանյանի «Ատելություն»-ում, Էփեմիան՝ Գ. Սունդուկյանի «Պեպո»-ում, Շուշանը՝ Ա. Շիրվանպազեի «Զար ոգի»-ում, Շելավինան՝ Ա. Օստրովսկու «Անտել մեղավորները»-ում, Դոնա-Աննան՝ Ա. Պուլկինի «Քարե հյուր»-ում, Սոֆիան՝ Ա. Չեխովի «Արջ»-ում, Լիդիա Պետրովնան՝ Սուխովո-Կոբելիևի «Կրեչինսկու հարսանիք»-ում, Պալծառը՝ Ն. Զարյանի «Աղբյուրի մոտ»-ում, Էմիլիան՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո»-ում, Խուրամանը՝ Ս. Վուրդունի «Վագիֆ»-ում:

Արփիկ Ղազարյանի ստեղծագործական աճի, պրոֆեսիոնալ վարպետության բարձրացման գործում մեծ դեր են խաղացել մի շարք ռեժիսյորներ, որոնք տարբեր ժամանակներում ռեմադրություններ են ունեցել Արթիկի թատ-

րոնում: Սիանոս Հովհաննիսյանը, Արամ Խոսրովը, Հրանտ Մանվելյանը, Աշոտ Մաթևոսյանը (Աշմաթ), Գևորգ Բժիկյանը, Կոտովը, Բիշմիրյանը, Լ. Մարտիրոսյանը և ուրիշներ Արփիկին սովորեցրել են տիրապետել բեմական ճշմարիտ արվեստին, պայքար մղել կեղծիքի, չափազանցությունների դեմ, նրան ներշնչել են կամք ու համամոթություն, աշխատասիրություն:

Արփիկ Ղազապյանը միշտ հետևում էր ավագ վարպետների բարձրարվեստ խաղին, տարվում նրանց բեմական հնարանքներով, ուշի-ուշով ունկնդրում ռեժիսյորների ցուցմունքներին, խորանում նրանց ասածների մեջ, մտահոգվում, և անընդհատ փնտրում նորը արվեստում: Զանիքանի գիշերներ է լուսացրել, որպեսպի գտնի այս կամ այն կերպարի բնավորության գծերը, հոգեկան ապրումները ճշմարտացիորեն դրսևորելու արտահայտչական միջոցները: Պրոֆեսիոնալ թատրոնում Արփիկը տիրապետեց բեմական ճշմարտության արվեստին: Նա այնքան բնական ու համույիչ էր խաղում իր դերերը, որ հանդիսականները հաճախ դժվարանում էին պանազանել դերասանուհուն իր անձնավորած կերպարից, թեև քաջ գիտեին, որ բեմի վրա Արփիկ Ղազապյանն է: Այստեղից էլ նրանց խիստ անմիջական վերաբերմունքը տաղանդավոր դերասանուհու խաղի նկատմամբ:

Արթիկի թատրոնում Արփիկ Ղազապյանին վիճակվել էր մարմնավորել խորթ մոր՝ Էլենի դերը «Մագդա» պիեսում: Դերասանուհին բացասական այդ դերը այնպիսի ճշմարտացիությամբ է խաղացել, այնպիսի անմիջականությամբ և վարպետությամբ, որ հանդիսատեսները պարզա-

պես ատելությամբ են լցվել ոչ թե կերպարի, այլ հենց դերակատարի նկատմամբ: Ներկայացումը խաղացվեց նաև Ապարանում, աշակերտության համար և այստեղ դարձյալ նույնը տեղի ունեցավ: Ամենից հետաքրքիրն այն էր, որ երբ ներկայացումից հետո անհարմար կացությունից դրդված դերասանները գրիմները հանում էին բեմի վրա, տասնհինգամյա մի աշակերտուհի հանկարծ դահլիճից ետ է քաշում վարագույրը և ատելությամբ լցված գոգում Արփիկի վրա.

— Անեծք քեզ...

Դերասանուհին ցնցվեց. տրամադրությունն ընկավ, բայց քիչ հետո երբ զգաց, որ անեծքն ըստ էության ուղղված էր դերին և ոչ թե իրեն, նա ուրախացավ՝ մտածելով, որ կարողացել է երեխաների սրտում խորթ մոր նկատմամբ ատելություն արթնացնել:

Արփիկ Ղապալյանն իր բեմական գործունեության տասներեք տարին նվիրեց Արթիկին, երկու տարին Ալավերդու թատրոնին, և տասնհինգ տարին Կամոյի Լ. Զալանթարի անվան թատրոնին, ուր աշխատում է մինչև օրս:

Եվ տարիների հետ ավելի է ընդլայնվել դերասանուհու խաղացանկը. նրա արվեստը դարձել է առավել հասուն, կուրովի, դերակատարումների մեջ զգացվում է ավելի խոր ռեալիզմ և հասունություն: Տասնհինգ տարիների ընթացքում Արփիկ Ղապալյանը Կամոյի թատրոնում խաղացել է 70-ից ավելի դերեր: 1955 թվականին նա արժանանում է վաստակավոր դերասանուհու կոչման:

Հանրապետական և շրջանային մամուլի էջերում ան-

ցած տարիների ընթացքում քիչ թատերախոսականների կարելի է հանդիպել, բայց եղածների մեջ պարբերաբար նշվել են Արփիկ Ղազապյանի հաջողությունները տարբեր ներկայացումներում:

Արփիկ Ղազապյանի ստեղծագործական անհատականության մեջ կարելի է նշմարել մի հատկություն, որը ճահեկան ձևով տարբերում է նրան ուրիշներից: Գաղտնիք չէ այն, որ յուրաքանչյուր դերասանուհի, անկախ իր ներքին և արտաքին տվյալներից, ուպում է միշտ հերոսուհիների խաղալ: Սկզբնական տարիներում Արփիկը ևս խաղացել է այդպիսի դերեր: Ոչ ոք չէր ստիպում և պատճառներ էլ չկային ստիպելու, որ երիտասարդ դերասանուհին փոխեր իր ամպլուան: Սակայն Արփիկը ինքը ժամանակին համարձակությամբ դիմեց այդ քայլին՝ հրաժարվեց հերոսուհու ամպլուայից, այժմ հաջողությամբ խաղում է մայրերի և ծեր կանանց դերեր:

«Կոմունիստի համար» թերթում 1961 թվին Ա. Պարսիսի «Աֆրոդիտեի կղզում» բեմադրությանը (բեմադրող՝ Աշմաթ) նվիրած հոդվածում, Մ. Գրիգորյանը գրել է. «Ավելի բարդ է ստացվել վաստակավոր դերասանուհի Արփիկ Ղազապյանի դերը: Նա հանդես եկավ Գլորիա Պատերսոնի դերում: Նա ոչ մի արգելքի առաջ չի կանգնում, որպեսզի պաշտպանի իր տոհմի պատիվը և որդուց չչրկըվելու համար դիմում է քաջագործությունների: Դերասանուհին մեծ ուժով և բեմական համույշականությամբ է բացահայտում Գլորիայի դաժան և ինքնիշխան բնավորությունը և դրանով իսկ ատելություն սերմանում իր հանդեպ: Դերասանուհին ավելի մեծ ուժով է տանում «աստվածա-

շընչով» երգվելու տեսարանը և հասարակ գեղջկուհու առաջ ստորանալու համար ուժեր կուտակում»:

Կամոյի հասարակայնությունն ու մասնավոր մի անգամ չէ, որ դրական գնահատականներ են տվել Արփիկ Ղալալյանի խաղացած դերերին: Հոգվածագիրները գովասանքով են խոսում դերասանուհու կերտած Անուշի («Մեծապատիվ մուրացկաններ»), Շիպին մայրիկի («Թայֆուն»), Վարսիկի («Թղթե մարդիկ»—Գ. Բես), և մի շարք այլ բեմական կերպարների մասին:

1965 թվին «Լենինյան դրոշ» շրջանային թերթը տպագրում է «Սիրված դերասանուհին» խորագրով հոդվածը, նվիրված Արփիկ Ղալալյանին: Մի քանի խոսքով անդրադառնալով Լենինականի թատրոնում դերասանուհու կատարած բեմական առաջին քայլերին, հոդվածի հեղինակ Սեդա Մալմանյանը գրել է՝ «Հեշտ չէր ստեղծել բազում կերպարներ, խաղալ վշտահար մայրերի, ընքուշ քույրերի և հավատարիմ կնոջ դերեր: Անհրաժեշտ էր յուրաքանչյուր կերպարի մեջ փնտրել նոր բովանդակություն, բացահայտել նորի ոգին, արթնացնել հանդիսատեսների սրտերում սիրո զգացմունք դեպի լավը, ատելություն՝ դեպի վատը, խաբեությունն ու ստորությունը: Անցել է երեսուն տարի և այժմ Արփիկ Ղալալյանը ինքն էլ չի հիշում, թե քանի անգամ է բեմից ստիպել մարդկանց երազել, ապրել, ծիծաղել և արտասվել:

Ահա Արփիկ Ղալալյանի հոգեզմայլ Կրուչինինան «Ամենդ մեղավորներ»-ում: Թող որքան ուզում են բամբասեն նախանձոտ և ստոր մարդիկ, նա սիրում է երիտասարդ դերասան Գրիգորի Նեպնամովին, սիրում է, որովհետև

ալոյպես է թելադրում նրա սիրտը՝ վավակին կորցրած մոր սիրտը, նա սիրում է նրան իբրև ժառանգի, իբրև սրբություն: Արփիկ Ղազապյանի Կրուչինինան քնքուշ է, պայծառ, հասարակ ու մարդկային... Դերասանուհին հասնում է դրան իր հանգիստ ու մտածված խաղով, առանց ավելորդ վզացմունքայնության, առանց դես ու դեն նետվելու, առանց էֆեկտավոր կեցվածքի, առանց կեղծ պաթոսի և ծայնին ուժգնություն տալու ճիգերի...

Նրա աչքերում մենք տեսնում ենք լուսյան մատնված հարց... Նա ահաբեկված է, նա պետք է անխուսափելիորեն հանդիպի իր որդուն...

Շատ մայրերի կերպարներ է ստեղծել դերասանուհին, որոնց միջոցով նա խոսել է իր հանդիսատեսների հետ: Եվ այստեղ հարցը շատ մայրեր խաղալու մեջ չէ, այլ կերպարները ճիշտ մեկնաբանելու մեջ, որը միշտ հաջողվել է դերասանուհուն:

Ժամանակից շուտ ճերմակել են Արփիկի մազերը: Սակայն վաստակավոր դերասանուհի Արփիկ Ղազապյանը մինչև այսօր էլ պատանեկական ավյունով է աշխատում Կամոյի Լ. Զալանթարի անվան թատրոնում, գրավում հանդիսատեսներին իր արվեստով»:


Ա. Ղազապյանին սիրում և հարգում են մեծիսյորները և բեմական խաղընկերները, որոնց հետ նրկար տարիներ աշխատել է: Այդ մեծիսյորների թվին պետք է դասել Հ. Մանվելյանին: Նա Ա. Ղազապյանի հետ աշխատել է 1941 թվին Արթիկում, որտեղ բեմադրել է Վ. Մանվելյանի «Լավարի որսը» (Նապան—Ա. Ղազապյան), «Կիսակայանում» (Դունյաշա—Ա. Ղազապյան) ,Լ. Մանվելյանի «Սա-



Արփիկ Ղազազյան



Զառնիշան («Զար սգի»)



Մայր Թինի (աճուղանա)



Մանուշ մայրիկ («Մոր սիրտը չի խաբի») 



Արշակունյի Ասրիկ (Եվադոլոգատ)



Արզումանի մայրը («Արզումանի կռիվը»)



Կարապետ (Արամբի)



Ազաֆիա Բրիդո («Գիշատիչ կինը»)

սունցի Դավիթ» (Դավթի քույրը—Ա. Ղազարյան), Օ. Մե-
տինի «Մադուլապել ֆիֆի» (Պամելլա—Ա. Ղազարյան),
Ի. Պետրովի «Շախմատային խաղ» (Վերա—Ա. Ղազար-
յան), Ա. Ղարազուլյանի «Փոթորիկ մի բաժակ ջրում»
(Աննա—Ա. Ղազարյան), Ա. Կորնեյչուկի «Պլատոն Կրե-
չետ» (Մայա—Ա. Ղազարյան) և այլ պիեսներ:

Հ. Մանվելյանը արտիստուհու մասին գրում է.

«...Նա օժտված է բեմական հմայքով... Նրա բնավո-
րության լավագույն հատկություններն են աշխատասիրու-
թյունը և ինքն իր հանդեպ ունեցած պահանջկոտությունը:
Նա իր ամբողջ կյանքը նվիրեց թատերական արվեստին և
ամենայն նվիրվածությամբ ու բարեխղճորեն ծառայում է
հարապատ բեմին...

Իր փայլուն արվեստով նա կարողացել է իր վրա
կենտրոնացնել հանդիսատեսների սերը և ուշադրությունը:
Ազգային արդի դրամատուրգիայում, ժուսական պիեսների
թարգմանություններում, արևմտաեվրոպական, դասական
դրամատուրգիայում Ա. Ղազարյանի ստեղծած կերպար-
ները միշտ էլ աչքի են ընկել իրենց ավարտվածությամբ և
վարպետ կատարմամբ»: Հ. Մանվելյանը թվարկելով Ար-
փիկի խաղացած դերերը, ընդգծում է, որ դրանք դերա-
սանուհու ստեղծագործական հաջողություններն են: Ավար-
տելով իր խոսքը նա ասում է.—«Արփիկ Ղազարյանը
կյանքում պարզ, պզայուն և շատ նրբանկատ ընկեր է»:

Արփիկի նկատմամբ նրա ընկերների գրավոր և բանա-
վոր կարծիքները շատ են: Բոլորն էլ բարձր են գնահա-
տում վաստակավոր դերասանուհուն իբրև ստեղծագործող
և որպես մարդ:

Որտեղ էլ որ աշխատելիս լիներ Արփիկը, երբեք չէր պարփակվում իր պրոֆեսիոնալ շահերի ոլորտում: Շատ բան կարելի է ասել նաև հայրենական պատերազմի շրջանում նրա կատարած աշխատանքների մասին: Այդ տարիներին Արթիկի թատրոնի դերասանների հետ Արփիկը երբեմն ոտքով գյուղից գյուղ է մեկնել և հայրենասիրական պիեսներում իր խոսքն ասել իբրև ստեղծագործող ու քաղաքացի: Ազատ ժամերին նա օգնում էր գյուղացիներին բերք հավաքել, վանապան հանձնարարություններ կատարում և զբաղվում հասարակական այլ աշխատանքներով: Կամոյի Լ. Զալանթարի անվան թատրոնում կատարած փայլուն աշխատանքի արդյունքը եղավ այն, որ հանդիսատեսների կողմից շատ սիրված դերասանուհին երեք անգամ ընտրվեց իբրև քաղսովետի դեպուտատ:

Արփիկ Ղազապյանը սիրված է ժողովրդի կողմից, մեծ հարգանք է վայելում ընկերների շրջապատում: Երբ հրապարակվեց Հայաստանի գերագույն սովետի հրամանագիրը Արփիկ Ղազապյանին վաստակավոր դերասանուհու բարձր կոչման արժանացնելու մասին, նա չորս կողմից շնորհավորական ջերմ ողջույններ և հեռագրեր ստացավ: Նրան ողջունեցին Լենինականի «Բանվոր» թերթի խմբագրությունը, ժողովրդական դերասանուհի Ժաննա Թովմասյանը, ժողովրդական դերասան Վրույր Փանոյանը, աշխատանքային ընկերները և շատ համաքաղաքացիներ: Հայաստանի թատերական ընկերության նախագահության ողջույնի մեջ ասված է.

«Ձեր ստեղծագործական նվիրված աշխատանքը փայլուն մի օրինակ է ժողովրդին արվեստով ծառայելու գոր-

ծում: Ցանկանում ենք ձեզ երկար տարիների առողջություն
և ստեղծագործական նորանոր հաջողություններ՝ ի փառս
խորհրդային թատրոնի»:

Երեսուն տարին արվեստում մի ամբողջ կյանք է: Այդ
կյանքի մեծ մասը Արփիկը անց է կացրել անիվների վրա,
շրջանային թատրոնների և գլուխական ակումբների բեմա-
հարթակներում: Ընտանեկան հոգսերը, դժվարին պայման-
ները երբեք չէին խանգարում դերասանուհուն, լրջորեն
պրաղվել արվեստով: Այդ գործում նրան օգնում էր ամու-
սինը՝ վաստակավոր դերասան Գ. Հակոբյանը:

Նրանք թատերական արվեստում ձեռք-ձեռքի տված
հաղթահարելով բոլոր դժվարությունները, ստեղծագործա-
կան մի գեղեցիկ ճանապարհով Արթիկից հասել են մինչև
Կամո:

Վաստակավոր դերասանուհի Արփիկ Ղազալյանը չնա-
լած երեսուն տարիների ստեղծագործական երկար ուղուն,
այժմ էլ մեծ եռանդով շարունակում է իր սիրած աշխա-
տանքը: Առայժմ շատ վաղ է վերջնական խոսք ասել նրա
արվեստի մասին: Մենք կարող ենք միայն անկեղծորեն
հարցնել՝ «Այդ ո՞ր դերն է ուղղում ձեզ, որ դեռ չեք հաս-
ցրել մարմնավորել»:

Կա արդյոք այդպիսի մի գլուխ գործոց: Անշուշտ կա, և
դա դերասանուհու գաղտնիքն է, նրա երազանքը: Մենք
չենք կասկածում, որ փր ուժերի ծաղկման շրջանն ապ-
րող Արփիկ Ղազալյանը կիրականացնի այն, ինչ նախա-
գծել է: Նա կգտնի այն կերպարը, որ լինելու է իր խաղա-
ցած կանացի դերերի պսակը:

ՄԵԼԻՏՈՍ ՂԱԶԱՐՅԱՆ

(ՀՍՍՀ վաստակավոր դերասան)

Ինչպես որ նման չեն մարդկանց ճակատագրերը, այնպես էլ տարբեր են դերասանների ստեղծագործական կենսագրության դրվագները, մանավանդ այն ուղիները, որոնք նրանց տարել են բեմ:

Լինում են մարդիկ, որոնք մանուկ հասակում միայն մեկ անգամ թատրոն գնալով, ներկայացումից հետո այնպես են բռնկվում արվեստի սիրով, որ մեկընդմիջտ վճռում են դերասան դառնալ և հաղթահարելով բոլոր խոչընդոտները, ի վերջո բարձրանում են բեմ: Լինում են, սակայն, այնպիսիները, որոնք ոչ ներկայացում են նալել, ոչ էլ երապել արվեստի մասին, այնուհանդերձ կյանքը նրանց բերել է թատրոն:

Դրանցից մեկն էլ վաստակավոր դերասան Մելիտոս Ղազարյանն է:

Մելիտոսը վաթսույն տարեկան է և ընդամենը քսան տարի է բեմի վրա: Դժվար կլինի հասկանալ այս անսո-

վոր հարաբերությունը, եթե մենք չդիմենք դերասանի կենսագրությանը:

Արտիստի կենսագրության մեջ խորանալուց առաջ մենք բախտ ունեցանք հանդիպել նրան Ղափանի Ալ. Շիրվանվադեի անվան թատրոնում Չինգիզ Ալտմատովի «Ալ գլխաշորով բարդենին» պիեսի բեմադրության գլխավոր փորձի ժամանակ: (Բեմադրություն՝ արվեստի վաստակավոր գործիչ Առնոլդ Մարտիրոսյանի):

Պիեսը, մեծիսյորական մեկնաբանությունը, դերասանների խաղը, գրավեցին ինձ իրենց թարմությամբ, անմիջականությամբ, խոր ապրումներով և երիտասարդ մարդկանց կերպարների ճիշտ մեկնաբանությամբ: Ջարմանալի էր այն, որ պիեսը կիրգիզական կյանքից լինելով հանդերձ, դերասանների խաղի շնորհիվ շատ հարավատ էր հնչում և մեզ համար: Այս բեմադրության մեջ Մելիտոս Ղազարյանը անելիք չուներ: Նա կարող էր միայն նստել դահլիճում, դիտել և ուրախանալ իր կրտսեր ընկերների հաջողություններով: Սակայն, նա գերադասել էր թեկուզ և էպիպոդիկ ու անխոս դերով լինել խաղընկերների շրջապատում, բարձրանալ բեմ: Մելիտոս Ղազարյանը խնդրել էր մեծիսյորին իրեն հանձնել միջնորդի փոքրիկ դերը, որն ընդամենը մի քանի խոսք ունի և ամբողջ պիեսում միայն մի տեսարան: Արտիստը բոլորից ծածուկ մասնակցում էր նաև առաջին գործողության մասսայական տեսարաններում: Մելիտոսը աշխատում էր աննկատ մնալ տեսադաշտից, սակայն իր վարպետ խաղով գրավում էր բոլորի ուշադրությունը:

Բնորոշ է, որ երբ էպիպոդիկ դերից վրկվելու ինչ-որ

վտանգ առաջացավ, Մելիտոսը, կյանքում սակավախոս
այդ մարդը, ստիպված եղավ դիմել ռեժիսյորին և համոզել
նրան:

— Այդ կերպարը ինձ համար է ստեղծված: Ես տես-
նում եմ ինձ այդ դերում: Թվում է, որ ես մասսայական
տեսարաններին էլ պետք է մասնակցեմ: Որպեսզի բեմում
չառանձնանամ, ինձ կարող եք մեջքով նստեցնել դեպի
հանդիսատեսները...

Այդպես էլ վարվեց ռեժիսյորը: Սակայն բավական էր,
որ դերասանը, թեկուզ կիսադեմով, դառնար դեպի հանդի-
սատեսը, որպեսզի դահլիճը խսկույն աշխուժանար:

Մելիտոս Ղազարյանի մանկության օրերն անցել էին
ծանր և անհրապույր պայմաններում: Նախահեղափոխա-
կան տարիներին Հայաստանի ո՞ր անկյունում կարելի էր
հանդիպել ապահով ու երջանիկ կյանքի: Նա ծնվել է
1907 թվին Մեղրու շրջանի Ղոտեմնիս գյուղում, չքավոր
գյուղացու ընտանիքում:

Վեցամյա Մելիտոսը, մեծահասակների պրույցներից
կռահում էր, որ կյանքն փրենց գյուղով չի վերջանում, որ
հեռուներում ինչ-որ տեղ քաղաքներ կան, ուր ամեն տարի
համագյուղացիք գնում էին փող վաճառակելու: Երբ տանը
ոչինչ չէր լինում ուտելու, նրա սիրտը ճվվում էր մոր
հոգոցներից և հոր ծանր լուսությունից: Մելիտոսը երբեմն
առում էր, որ ինքը պետք է մեկնի Բաքու փող վաճառ-
կելու, որպեսզի իրենց ընտանիքը սովից չմահանա...

Փոքրիկ Մելիտոսը երջանկություն չունեցավ սովորելու:
Ուսման հենց առաջին օրը, երբ ուսուցչուհին հարցրեց, թե
ով է նրա հայրը, փոքրիկ Մելիտոսը խսկույն հիշեց իրենց

աղքատությունը և այնպես շփոթվեց, որ ստիպված եղավ արցունքներն աչքերին թողնել դպրոցն ու գնալ տուն...

Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի տարիներն էին: Թեև ռազմաճակատը շատ հեռու էր Ղուտեմնիս գյուղից, բայց դրանից չէր թեթևանում Ղապարյանների ընտանիքի հոգսերը:

— Ես պետք է Բաքու գնամ, — վաղուց վճռածը վերջապես կնոջը հայտնեց Մելիտոսի հայրը, դուք մի կերպ յուրա կգնաք, մինչև ես փող կուղարկեմ:

— Բա Մելիտոսին ո՞նց պահեմ, — ամաչկոտ, գլխիկոր շշնջաց կինը:

Հայրը խոր մտածումներին մեջ ընկավ, ապա նայեց իր փոքրիկին, գրկեց նրան ու ծանր հառաչելով ասաց.

— Կտանեմ ինձ հետ. նրա հոգսից էլ կապատվես: Ուտողներից մեկը կպակասի, գուցե հաջողվի ուսման տալ, կամ որևէ տեղ աշխատանքի դնել:

Այդ տարիներին շատ մարդիկ էին Բաքու մեկնում, փող վաստակելու: Նրանք հաճախ երկար տարիներ մնում էին այնտեղ, երբեմն էլ մեռնում օտարության մեջ և կամ խեղանդամ տուն վերադառնում:

Մելիտոսը հինգ տարի հոր հետ մնաց Բաքվում: Փող վաստակելու և ուսում ստանալու երկար տարիների նրանց հույսերը ի դերև ելան:

Մելիտոսը շատ փոքր էր և գլուխ չէր հանում այդ տարիներին տեղի ունեցող դեպքերից: Բայց Բաքվի կոմունայի հաղթանակը, նրա անկումը, անգլիացիների ժամանելը և դավաճանորեն ետ փախչելը, թուրքերի ներխուժումը, խաղաղասեռ հայ ժողովրդի նկատմամբ նրանց կա-

տարած արյունալի ոճրագործությունները, ամուր դրոշմվեցին ինը տարեկան պատանու հիշողության մեջ:

Անքուն գիշերներից հոգնած ու տանջված քաղաքը պատրաստվում էր իրեն հանձնել թշնամու ողորմածությանը, իսկ «հաղթողներ»-ը մարդկային դեմքը կորցրած, այրում էին տները, թալանում անպաշտպան բնակչությանը, ծնողների աչքերի առաջ բռնաբարում աղջիկներին, իսկ երեխաների ներկայությամբ գնդակահարում հայրերին...

Փոքրիկ Մելիտոսը ներքնահարկում թաքնված, նեղիկ լուսամուտից տեսնում էր, թե ինչ էր կատարվում իրենց բակում և ոչնչով չէր կարողանում օգնել ծերուկ Ավագին ու նրա պառավին...

Նրա աչքերի առաջ տեղի էր ունենում արյունոտ մի դրամա...

Ասկյարները մտնում են բակ, նրանք ապշած նայում են տարօրինակ մի տեսարանի. ծերունի Ավագն ու նրա պառավը իրենց տոնական զգեստները հագել ու կանգնել էին տան աստիճանների վրա: Նրանք իրենց մահճակալները, ճամպրուկները, խալիները, աթոռները և ինչ որ տանը կար՝ կապոտել, դուրս էին բերել բակը և գեղեցիկ դասավորել:

— Հեյ, դուք, հաղթողներ, հերոսներ, այս բոլորը ես ձեզ համար եմ պատրաստել. եկեք, տարեք... ինչ ունեմ, չունեմ, բոլորն այստեղ է. այս ամենը ես իմ քրտինքով եմ վաստակել, բոլորը ձեզ... Վերցրեք, ասաց Ավագը և ժպտալով դիմեց ասկյարներին — մտեք բոլոր սենյակները և եթե տեսնեք, որ ալեհեր Ավագը որևէ բան թաքցրել է ձեզնից, գլուխը կտրեք:

Ձինվորները չշարժվեցին իրենց տեղերից: Նրանք Ավագի «հյուրընկալությունից» վարմացած կանգնել էին դարբասի մոտ: Ծերունին մոտեցավ ասկյարներին, բռնեց ձեռքերից, խնդրեց վերցնել իրերը, խուզարկել բնակարանը, բայց նրանք նորից անշարժ մնացին. պինվորներից շատերը պատրաստ էին վերադառնալ, բայց հրամանատարը ետ մղելով բոլորին, ատրճանակը ձեռքին մոտեցավ Ավագին, կանգնեց նրա դիմաց և փամփուշտների ամբողջ պարունակը դատարկեց ծերունու կրծքում...

Ավագը մի քանի վայրկյան քարացավ, նրա ժպիտը դեռ չէր չքացել դեմքից, ծերունին ոչինչ չհասկացավ ու փրփեց գետնին... Լսվեց պառավի սուր ճչոցը, նա մազերը փետելով ընկավ ամուսնու դիակի վրա...

Ատրճանակի կրակոցը ազդարարեց, որ ժամանակն է թալանելու և ասկյարները խուժեցին տները հարուստ ավար հավաքելու: Նրանց մի մասը հարձակվեց Ավագի իրերի վրա, իսկ հրամանատարը լկտի անտարբերությամբ նայում էր գետնին թավալվող խելագար պառավին...

Այս էր Բաքվի ամենօրյա պատկերը: Օրեր ու ամիսներ անցան, ժողովուրդը անհամբեր սպասում էր Կարմիր Բանակի հաղթական այցին. նրանք գիտեին, որ եթե փրկության ժամը ուշանա, ապա թուրք նվաճողները որոշել էին 1920 թվի մայիսի 1-ին բնաջնջել Բաքվի խաղաղ բնակիչներին:

Մելիտոսն իր հոր և հարևանների հետ, թուրքերի ներխուժման հենց առաջին իսկ օրվանից թաքնվել էր ծանոթներից մեկի ներքնահարկում:

վրա հասավ ապրիլի 28-ի գիշերը: Ոչ ոք չէր կարողանում քնել. պատումահանից այն կողմ պինվորեն էին վազվզում, թաքնվում, թալանած իրերը տանում, և այսպես մինչև առավոտ, երբ հանկարծ լավեց ահռելի մի պայթյուն, բնակիչները սարսափած դուրս թռան իրենց տներից և նկուղներից:

— Սկսվում է,— շնչաց Մելիտոսի կողքին կանգնած ռուս մի պատանի:

Բոլորը լուռ իրար էին նայում. կարծես ամեն ինչ քարացել էր աշխարհի վրա: Միայն փողոցում կարծես մի մեծ փոթորիկ էր բարձրացել, որը մեկ-մեկ խաղաղվում էր, հետո նորից ուժեղանում:

— Կյանք... կամ մահ... մտածում էին բոլորը:

Ներքնահարկի մարդիկ ինչ-որ ծայն լսեցին, բայց չհասկացան, թե ինչ են ասում և քանի մոտենում էր այդ ձայնը, այնքան ավելի կրկնվում էր միայն մի բառ.

— Բոլջևիկները...

— Եկան...

Առաջին իսկ լուրն առնելով, Մաքսիմը դուրս թռավ բակից և վազեց դեպի կայարան: Նա ոստիկանության շենքի մոտից վազում էր ներքև: Մելիտոսը լսեց Մաքսիմի ձայնը.

Ոստիկանության շենքի առաջև կանգնած էր մի սպա: Մաքսիմը նրան նկատելով ավելի ուժգին գոռաց բոլջևիկների գալու մասին: Սպան կատաղությունից հանեց սուրը, որը արևի լուսից մի ակնթարթ փայլատակեց օդում և ածելու նման կտրեց ռուս պատանու կոկորդը: Նա մի քանի քայլ վազեց և ծանր հառաչանքով թավալվեց գետին...

Մաքսիմը չտեսավ մարդկանց ուրախությունը, ծով դրոշների ծածանումը, կարմիր բանակայինների հոգնատանջ դեմքերը, պողպատակուռ գնացքները, որոնց հրանոթների շիկացած փողերը ուղղված էին քաղաքին:

Քաղաքը հանձնվեց առանց որևէ կրակոցի, և Մաքսիմն էր վերջինս Վոհլը...

Բաքվի ողբերգական օրերից անցել էր 46 տարուց ավելի, բայց Մելիտոս Ղապարյանը այժմ էլ չի կարողանում առանց շնորհակալության հիշել այն բոլոր անծանոթ մարդկանց, որոնք փրկել են իրեն մահից: Այն, ինչ որ տեսել և Վգացել էր Մելիտոսը, անհետևանք չմնաց. հոգեկան ապրումները վտանգի տակ էին դրել նրա առողջությունը. նա հոր հետ վերադարձավ հայրենի գյուղը և մի ամբողջ տարի չէր կարողանում ուշքի գալ:

Վերջապես Մելիտոսը վերականգնում է իր առողջությունը: Ինը տարի նա նորից ապրում է գյուղական ծանր պայմաններում: 1929 թվին նրան կանչում են Կարմիր Բանակի շարքերը՝ պարտադիր ծառայության: Հայրենիքին ծառայելու պարտականությունն ավարտելուց հետո, Մելիտոսը տեղափոխվում է Թիֆլիս և տպարանում աշխատանքի անցնում իբրև գրաշարի աշակերտ: Նոր աշխատանքը ստիպում է նրան շատ Վգացվել գրականության ընթերցանությամբ և լրջորեն մտահոգվել իր ապագայի հարցերով:

Մելիտոսն արդեն 26 տարեկան էր դարձել, բայց դեռ չէր որոշել, թե ինչ մասնագիտություն պետք է ձեռք բերեր, որպեսզի ապահովեր իր ապագան: Երջանիկ մի պատահականություն օգնում է երիտասարդին տեղափոխվել

Լենինգրադ: Այնտեղ նա աշխատանքի է անցնում գործարանում: Միաժամանակ Մելիտոսը սովորում է երաժշտական դպրոցի փողային գործիքների դասարանում: Երեկոները, ապառ ժամերին, նա հաճախում է թատրոնները, դիտում ներկայացումներ, լսում համերգներ: Լենինգրադում ապրած տարիները կամաց-կամաց Մելիտոսի մեջ արթնացնում են սեր և մեծ հետաքրքրություն դեպի թատրոնը: Նա որոշում է վերադառնալ Հայաստան, փորձել իր ուժերը թատրոնում, սակայն վրա են հասնում ֆիննական, իսկ հետագայում էլ համաշխարհային երկրորդ պատերազմները: Սովետական միլիոնավոր քաղաքացիների հետ Մելիտոս Ղապարյանն էլ պատվով կատարում է հայրենիքի հանդեպ ունեցած պարտքը:

1942 թվի հունվարին հին Ռուսսոյի մատույցներում Մելիտոսը պարտիզանական խմբի կազմում մենամարտի է բռնվում գազապած ֆաշիստների հետ և ծանր վիրավորվում: Նրան տեղափոխում են խոր թիկունք: Վեց ամսից ավել նա պառկում է Սվերդլովի հիվանդանոցներից մեկում և առողջանալուց հետո տեղափոխվում Մեդրի:

Պատերազմից հետո նա ամբողջ լրջությամբ սկսում է խորհել իր ապագայի մասին: Ի՞նչ անել. ինչո՞վ պրաղվել. գնալ գործարան: Տպարանո՞ւմ աշխատել. գուցե շարունակի՞ իր ուսումը երաժշտական դպրոցում... Չէ՞ որ ինքն արդեն երեսունութ տարեկան է. իհարկե, նա հանցավոր չէ, որ չի կարողացել գտնել իր տեղը կյանքում:

Մելիտոսը ոչ ոքի հետ չի բաժանում իր տանջանքները, ոչ էլ որևէ մեկին հայտնում թատրոն գնալու իր ցանկությունը: Ինչպես կարելի է երազել արվեստի մասին.

երբ խոր ակոսներ են փորվել դեմքի վրա, երբ ճերմակ ծլումն է նստել մազերին. նա օրերով լուռ մտածում էր թատրոնի մասին, բայց չէր հանդգնում որևէ մեկին դիմել, գուցե մարդիկ հասկանան, իրենք հրավիրեն... Բայց ո՞ր... Այդ հարցին նա ինքն էլ էր դժվարանում պատասխանել:

1945 թվականին Մեղրիում ստեղծվում է շրջանային թատրոն: Այդ ալնքան անհրաժեշտ էր, որքան լուսից պուրկ մարդկանց համար էլեկտրական կառուցելը: Թատրոնի հիմնադրումը անչափ ուրախացնում է Մելիտոսին, բայց նա նորից լռում է: Իր ուժերի նկատմամբ ունեցած անվստահությունը, բնածին համեստությունը, նրան ետ են պահում վճռական քայլը կատարելուց: Ինչ անել: Գուցե գնալ շրջկոմի քարտուղարի մոտ և պատմել իր նրապանքների մասին:

Մելիտոսը նորից սպասում է հարմար առիթի. նա մեկ-մեկ ներում է թատրոնի մոտերքում, հեռվից նայում նորեկ արտիստներին, լսում առաջին փորձերի մասին նըրանց կարծիքներն ու պրուցները և ոչ մի կերպ չի կարողանում բացել սիրտը: Նա սարսափում է, թե գուցե իր բոլորն զգացմունքները ծիծաղելի թվան ու արհամարհվեն:

Իր մտքերն ու կասկածները նա չի բաժանում ուղևորական հարապատների հետ:

Մեծ եղավ Մելիտոս Ղապարյանի պարմանքը, երբ շրջկոմի քարտուղարը հրավիրեց նրան իր մոտ և առաջարկեց աշխատել թատրոնում:

— Դուք այդ ճի՞շտ եք ասում,— կմկմաց Մելիտոսը, ականջներին չհավատալով:

Քարտուղարը մտափոփվում էր ինչ-որ հարցով և վրույցի պահերին մեկ-մեկ ժպտում էր:

— Հարցն այնքան լուրջ է, որ եթե համաձայն ես, հենց այս րոպեիս այստեղից պետք է գնաս թատրոն և սկսես փորձերդ: Տասը օրից հետո պետք է բացվեն թատրոնի առաջին ներկայացման վարագույրները, իսկ գլխավոր դերակատար դեռ չունենք: Դեհ, համաձայն եք աշխատել:

Մելիտոսը չէր հավատում իր երջանկությանը: Նա տվեց իր համաձայնությունը, բայց վստահ լինելու համար, որ քարտուղարը չի կատակում, նրան ևս մի հարց տվեց.

— Որտեղի՞ց եք իմացել թատրոնում աշխատելու իմ ցանկության մասին. չէ՞ որ ես ոչ ոքի չեմ ասել...

Քարտուղարը ժպտաց և ամենայն լրջությամբ պատասխանեց.

— Որոշ լուրեր հասել էին մեր ականջներին. գուցե դուք անկախ ձեր ցանկությունից խոսել եք այդ մասին երազով, հը՞, այդպես չէ՞...

— Ես ոչ ոքի հետ չեմ խոսել այդ մասին:

— Շատ հնարավոր է, բայց այդ մասին «խոսել են» ձեր աչքերը. դե հաջողություն եմ ցանկանում ձեզ, փորձը սկսվելուն քսան րոպե է մնացել: Խնդրում եմ շտապեք:

Թատրոնի բացման համար խումբը որոշել էր բեմադրել Արամ-Աշոտ Պապայանի «Մեծ հարսանիք» կոմեդիան: Գլխավոր դերը (Տիգրան) հանձնարարում են Մելիտոս Ղազարյանին: Մելիտոսը երբեք բեմ չէր բարձրացել. նույնիսկ ինքնագործ խմբերում ոչինչ չէր խաղացել: Միայն ներկայացումներ նայելիս, նա միշտ հետևել էր դերասանների խաղին, իրեն պզտիկ մեմի վրա, մտքում

կրկնել նրանց խոսքերը և մտել նրանց հոգեվիճակներին մեջ, իբրև ներկայացման «մասնակից»։ Բայց այդ ամենը նա արել էր մտքում, իր համար, և այժմ միայն հասել էր այն ժամը, երբ ինքը պետք է ստեղծագործեր ու խաղար ժողովրդի համար։

Առաջին իսկ օրից, Մելիտոսը բեմում իրեն վարմանալիորեն ազատ ու անկաշկանդ է զգում։ Նա ուրիշների նման չի չարաշահում ծայնը, չի գոռում բեմի վրա, և ոչ էլ երգեցիկ ռիթմերով ունկնդիրներին ծանծրացնում։ Բեմից նա խոսում է պարզ ու բնական մի ջերմությամբ և խաղընկերների հետ անկեղծ փոխհարաբերության մեջ մտնում։ Նրա խաղարվեստը կարծես կյանքի շարունակությունն էր բեմում։

Շրջկենտրոնում թատրոնի տված առաջին ներկայացումը ոչ միայն խոշոր ներույթ էր շրջանի կուլտուրական կյանքում, այլև վճռական մի շրջադարձ Մելիտոս Ղազարյանի ճակատագրում։ Ներկայացման մեծ հաջողությունը, հանդիսատեսների բուռն ծափահարությունները, բարեկամների անկեղծ շնորհավորանքները է՛լ ավելի գոտեպնդեցին Մելիտոսին և նա անվերադարձ որոշեց նվիրվել թատրոնին։

Հանդիսատեսները սիրեցին Մելիտոս Ղազարյանի։ Տիգրանին։

Ներկայացումը մի շարք անգամներ խաղացվեց նաև շրջանի գյուղերում։ Մելիտոսի հաջողությունը ամեն տեղ ակնբախ էր, և դա նորից ու նորից ամրապնդում էր նրա հավատը ընտրած ուղու ճշտության նկատմամբ։

Այժմ նրան անհանգստացնում էր մեկ ուրիշ հարց.

ինչպես կվերաբերվեն հարապատները, ի՞նչ կասի իր նոր մասնագիտության մասին Լենինգրադից արձակուրդի ժամանած մեծ եղբայրը, որի կարծիքը իրեն համար շատ թանկ էր:

Մեծ եղբայրը ներկայացումից առաջ համառորեն համոզում էր Մելիտոսին.

— Զո ինչին է պետք քառասուն տարեկան հասակում բեմ բարձրանալ. եթե այդ քայլին դու դիմեիր քսան տարեկան հասակում, այդ դեռևս հասկանալի կլիներ: Լենինգրադում դու աշխատել ես գործարանում, ծեռք բերել լավ մասնագիտություն, գնա և աշխատիր Երևանում: Այդ հասակում ուրիշներն իրենց հոբբեյանն են տոնում, իսկ դու նոր-նոր բեմ ես բարձրանում. լավ մտածիր այդ մասին:

Մելիտոսը գուցե և լսեր եղբոր խորհուրդները, եթե նրա հետ չպատահեր մեկ ուրիշ դեպք: Որոշ ժամանակից հետո թատրոնը բաց թողեց իր երկրորդ ներկայացումը՝ Սունդուկյանի «Պեպոն» որտեղ Մելիտոսը մարմնավորում էր Զիմպիմովի դերը: Սկսնակ դերասանն այս դերով նույնպես հասնում է զգալի հաջողության: Ներկայացումից մի քանի օր հետո Մելիտոսն իր եղբոր հետ անցնում էր փողոցով, երբ հանկարծ հանդիպեց Ներսես Օհանյանին: Մեծ էր Մելիտոսի վարմանքը, երբ նրա լավագույն ընկերներից մեկը շուռ տվեց դեմքը և չբարևեց:

— Ներսես՝ս, ինչ է պատահել, ինչո՞ւ չես բարևում:

— Շատ էլ լավ եմ անում, որ չեմ բարևում:— Կտրուկ պատասխանեց Ներսեսը և շարունակեց, — չես ամաչո՞ւմ, բա դու մարդ ե՞ս... Ի՞նչ էր արել քեզ էդ խեղճ Պեպոն, որ նամարդ կերպով խաբեցիր նրան. ու էս բոլորից հետո էլ

ուպում ես, որ ես քեզ հետ ընկերություն անե՞մ, հա՛...
մնաս բարով, իմ երեսն էլ չես տեսնի...

Մելիտոսը վրդովվեց. չկարողացավ իր ամենամոտ ընկերոջը որևէ պատասխան տալ, իսկ մեծ եղբայրը, որ լուռ հետևում էր այդ տեսարանին, ծիծաղեց և որոշակի ասաց.

— Դու իրավունք ունեիր դերասան դառնալու... Եարունակիր ընտրած ուղիդ:

Նույն թատերաշրջանում, 1945 թվին, Մեղրու պետական թատրոնը բեմադրում է Նար-Դոսի «Սպանված աղավնին»: Մելիտոսը խաղում է Մարգարյանի դերը և ունենում մեծ հաջողություն: Դրանից հետո վերջնականապես որոշում է, որ թատրոնն է այն տեղը, ուր ինքը պետք է աշխատի մինչև կյանքի վերջը: Նորից ու նորից փոփոխվում աննպատակ կորած տարիների համար, Մելիտոս Ղալարյանը լրջորեն սկսում է զբաղվել ինքնապարզացման հարցերով: Նա կլանված ընթերցում է Կ. Ս. Ստանիսլավսկու «Իմ կյանքն արվեստում» աշխատությունը, ծանոթանում հայ և ալլապգի մեծ դերասանների կենսագրություններին ու հուշերին: Նա գիտակցում է, որ ինքը պետք է աշխատի եռապատկված ջանքերով, որպեսզի կարողանա ծեռք բերել տարիների ընթացքում կորցրածը:

Մարգարյանի դերի վրա աշխատելիս արտիստը մեծ ուշադրություն է դարձնում հոգեբանական կողմի վրա, ամեն կերպ աշխատում է խորանալ կերպարի ներքնաշխարհում, զգալ այն իր ամբողջության մեջ, գտնել հերոսի շարժ ու ձևի նրբերանգները, արժեքավորել նրա յուրաքանչյուր խոսքը և այն հարապատորեն մատուցել հանդիսատեսներին:

1945 թվից սկսած, Մեյխտոս Ղազարյանը Մեղրու թատրոնի ութ բեմադրություններում խաղում է գլխավոր դերերը: Դրանք են՝ Տիգրանը («Մեծ հարսանիք»), Մարգարյանը («Սպանված աղավնի»), Էլիպարովը («Պատվի համար»), Գիժ Դանիելը («Ձար ոգի»), Սեյրանը («Նամուս»), պարտիկանական վաշտի հրամանատարը («Ձույա»), Զիմպիմովը և Կակուլին («Պեպո»):

Այս դերերը Մ. Ղազարյանի համար դերասանական վարպետության մի նոր աստիճան էին նշանավորում և մի հավելյալ անգամ հաստատում նրա ընտրած ուղու ճշտությունը: Սա շատ կարևոր էր, որովհետև չնայած թերթերի բարձր գնահատականներին և հանդիսատեսի բուռն ծափահարություններին, արտիստը չէր դադարում կասկածել և անընդհատ ստուգում էր ինքն իրեն:

Մեղրիում աշխատելու տարիները Մ. Ղազարյանի համար շատ արդյունավետ եղան, և երբ նա 1949 թվականին տեղափոխվեց Գորիսի Վաղարշ Վաղարշյանի անվան թատրոնը, իբրև դերասան նա արդեն կազմակերպված էր և ուներ մասնագիտական հղկվածություն: Այս թատրոնի պայմաններն ավելի գրավիչ էին. նա ուներ փորձված և մասնագետ ռեժիսորներ, որակյալ ստեղծագործական ուժեր և անհամեմատ բարձր ճաշակի հանդիսատեսներ:

Գորիսի թատրոնում իր 13 տարվա աշխատանքի ժամանակամիջոցում դերասանը 45 նոր բեմադրություններում խաղացել է դարձյալ գլխավոր դերերը: Դրանցից հատկապես ուշագրավ են Մինթոնը («Մորզանի խնամին»), Կոմիսարը («Բաթմունքներում»), Բարխուդարը («Նամուս»), Խաչատուր Աբովյանը («Խաչատուր Աբովյան»), որկտորը

(«Վենետիկյան երկվորյակներ»), Սարգիսը («Ավերակների վրա»), Յուրա Հեպը («Դավիթ Կոպերֆիլդ») և ուրիշներ:

Աղավաճողում, «Դավիթ Կոպերֆիլդ» ներկայացման ժամանակ մի հետաքրքիր դեպք պատահեց: Այդ օրը Մ. Ղապարյանը մի առանձին ոգևորությամբ էր խաղում Յուրաեպի դերը: Նա այնպես էր վերափոխվել այդ դերում, որ վարպետությամբ ի հայտ բերեց դավաճանի և խաբեբայի վապրելի էությունը: Կերպարն այնքան է ցնցում հանդիսատեսներին, որ նրանցից մեկը անզուսպ ատելությամբ լցվելով դեպի Յուրաեպի ստոր արարքները, հուկված իր ծանր ծխատուփը շարտում է Մելիտոս Ղապարյանի վրա...

Գոգոլի «Ամուսնություն» պիեսի բեմադրության մեջ Մ. Ղապարյանը վարպետորեն է խաղում Պողկոլյուսինի դերը: Նրան հաջողվում է մեծ ճշմարտությամբ անձնավորել ծուլլ ու անբան պաշտոնյային, որի համար մահն ավելի հաճելի է, քան անբովանդակ կյանքը: Արտիստի խոսելակերպը, շարժ ու ծնը գեղարվեստական մի այնպիսի ամբողջություն էին կազմել, որ հանդիսատեսները պարզապես խեղդվում էին ծիծաղից: Նույնպիսի հաջողություն է ունենում և արտիստի ստեղծած Միլլերը Շիլլերի «Սեր և խարդավանք»-ում:

Գ. Բորյանի «Կամուրջի վրա» պիեսի բեմադրությունը ստեղծագործական նոր հաջողություն է բերում Գորիսի թատրոնին: Բազրատ Տոնյանի դերում հանդես է գալիս Մելիտոս Ղապարյանը: Այս բեմադրության առթիվ Գորիսի թերթը հանդես է գալիս մի հանգամանալից հոդվածով, ուր ասված է.

«Արժե խոսել այն մասին, որ այս բեմադրության հիմնական հաջողությունը պատկանում է դերասաններին: Մ. Ղալարյանի վարպետ խաղը, կերպարի հետաքրքրական վերլուծումը արժանացավ հանդիսատեսի ջերմ ընդունելության. նա ստեղծել է ղեկավար աշխատողի մի այնպիսի կերպար, որը հաշվի չի նստում մեր ժամանակի պահանջների հետ և փորձում է գործել հին, դատապարտված ձևերով: Նա նույնիսկ հասկանում է, որ փլվում է ոտքի տակի հողը և այժմ դժվար է պահպանել իր դիրքն ու հեղինակությունը: Սակայն դերասանը նուրբ մանրամասների միջոցով կարողանում է ստեղծել այն միտքը, որ Տոնյանի պես մարդիկ կարող են գրավել իրենց արժանի տեղը կյանքում: Այդ իսկ պատճառով ներկայացման վերջում հանդիսատեսների համար անսպասելի չի հնչում հերոսի վերափոխումը»:

Մելիտոս Ղալարյանի հաջողությունն այս դերում պատահական չէր: Դա ստեղծագործական համառ ու տքնաջան աշխատանքի արդյունքն էր:

Թատերական յուրաքանչյուր տարի, արտիստին բերում է նորանոր հաջողություններ: Աստիճանաբար նրա խաղացանկը հարստանում է նոր անուններով: Հիշենք Սարգիսը («Ավերակների վրա»), Մոնտանելին («Բոռ»), Եղով, պոսն ու Զսանթոսը («Խաղողն ու աղվեսը»), Պավելը («Ռոմեոն, Ջուլիետը և խավարը»):

Յուրաքանչյուր նոր դեր ավելի հղկում էր արտիստի բեմական տեխնիկան, կատարելագործում նրա վարպետությունը, նոր գույներով հարստացնում նրա ներկայանակը: Մելիտոսը անդուլ կերպով աշխատում է իր վրա, հարրս-

տացնում գիտելիքները: Երբ թատրոնը սկսում է աշխատել Սունդուկյանի, Շիրվանպադեի, Մուրացանի և Բալսակի պիեսների վրա, ապա Մելիտոս Ղապարյանի գրասեղանի վրա շարվում են այդ գրողների ստեղծագործությունները, ինչպես և դրանց մասին եղած գրքերը, հոդվածները: Նա ամենայն լրջությամբ սկսում է ուսումնասիրել եղած ողջ նյութը, որպեսզի հնարավոր չափով խոր ըմբռնի իր դերը:

Մելիտոս Ղապարյանի ստեղծագործական կազմավորման գործում դեր է խաղացել ոչ միայն նրա աշխատասիրությունը, այլև նրա անձնական հանդիպումներն ու շփումը հայ բեմի մեծ վարպետների՝ Վահրամ Փափապյանի, Վաղարշ Վաղարշյանի, Ավետ Ավետիսյանի և ուրիշների հետ: Վաղարշ Վաղարշյանը հաճախ լինում էր Գորիսում. նա հետաքրքիր պրուլցներ էր կազմակերպում դերասանական արվեստի և ռեժիսուրայի հարցերի շուրջը: Արտիստական իր հարուստ փորձը և գիտելիքները նա հաղորդում էր խաղընկերներին: Եվ գուցե ոչ ոք այնպես կլանված չէր լսում ու գրի առնում դերասան, դրամատուրգ և ռեժիսոր Վաղարշ Վաղարշյանի պրուլցները, ինչպես Մելիտոս Ղապարյանը:

Արտիստը բախտ է ունեցել Ռոդրիգոյի դերով խաղընկեր լինել Վահրամ Փափապյանին՝ «Օթելլո» ներկայացման մեջ և «Պեպոլում»՝ Ավետ Ավետիսյանի Պեպոլի կողքին անձնավորել Զիմպիմովին:

Այս հանդիպումները անհետևանք չեղան արտիստի համար:

Մելիտոս Ղապարյանը սկսում է նոր ակնոցներով նայել իր դերերին և ավելի հղկել ու կատարելագործել իր արվեստը:

Այդ տարիների ընթացքում հրատարակված թատերա-
խոսականները չեն կարող տալ Մելիտոս Ղազարյանի
ստեղծագործական ուղու սպառնիչ պատկերը: Այնուամե-
նայնիվ բերենք մի օրինակ:

Ա. Մարտունին Ա. Բաբայանի «Սիրտը կանչում է»
պիեսի բեմադրության կապակցությամբ Մ. Ղազարյանի
Գարուշ բիծայի դերակատարության մասին գրել է. («Որո-
տան», 1959 թ.):

«Շնորհալի դերասան Մելիտոս Ղազարյանը մեծ վար-
պետությամբ է խաղում Գարուշ բիծայի դերը: Նրա ար-
տիստական խառնվածքը հնարավորություն է տալիս
ստեղծել ամբողջական և հուլիչ մի կերպար: Մ. Ղազար-
յանի Գարուշ բիծան ջերմ է, անմիջական ու պարզ. նա
հանդիսատեսներին պռնածնապես հուզում է այն տեսա-
րաններում, երբ անհրաժեշտ է լինում բացահայտել հոգե-
կան ապրումները:

Հանդիսատեսների հիշողության մեջ ընդմիշտ կմնա այն
տեսարանը, երբ Գարուշ բիծան ամբողջ հոգով նայում է
հայրենական պատերազմի տարիներին զոհված իր որդու
դիմանկարին. հանդիսատեսը զգում է, թե ինչ կրակ է
փոթորկվել նրա սրտում, որքան խորն են նրա հայրական
ապրումները:

Գարուշ բիծան մեծ հոգու տեր մարդ է. նա անսահման
սիրում է հարսին և իր թոռնիկին, որոնց մեջ նա տեսնում
է իր կյանքի իմաստը. ահա թե ինչով է բացատրվում Գա-
րուշ բիծայի անբարյացկամ վերաբերմունքը դեպի Միքա-
յելն ու Գևորգը, որոնցից առաջինը ցանկանում է ամուս-
նանալ Հասմիկի հետ, իսկ մյուսը՝ ետ տանել իր աղջկան՝

Սուսաննային: Յուրաքանչյուր քալափոխի մեջ հանդիսա-
տեսը տեսնում է Մելիտոս Ղապարյանի Գարուշ բիծնյի
անընկճելի բնավորությունը, նրա ազգային սովորություն-
ները, որ արտիստն այդպես կարողացել է ներդաշնակել և
ամբողջական մի կերպար ստեղծել»:

Մ. Ղապարյանը արտաքնապես հանգիստ մարդ է. նա
քալում է Ղափանի փողոցներով, հանդիպում մարդկանց,
կանգ առնում, զրուցում իր բարեկամների և ծանոթների
հետ, ուշադրությամբ նայում նրանց դեմքերին, ուսումնա-
սիրում իր շրջապատի կյանքը: Որտեղ էլ լինի արտիստը,
ուրիշ հետ էլ որ զրուցելիս լինի, նա երբեք չի բաժանվում
իր ստեղծած և ստեղծելիք կերպարներից: Պատահում է,
որ փողոցում քալելիս, կամ մեկի հետ զրուցելիս նա հան-
կարծ կանգ է առնում, կտրվում շրջապատից, խոր մտած-
մունքների մեջ ընկնում, մտքով տեղափոխվում բեմ և այն-
տեղ սկսում «խաղալ» իր ապագա դերը:

Մելիտոս Ղապարյանը մտածող դերասան է. ստեղծա-
գործական իր որոնումներում նա հանգիստ չունի: Գուցե
հենց դրանով պետք է բացատրել, որ քսան տարվա ըն-
թացքում ստեղծած նրա կերպարներից և ոչ մեկը չի հի-
շեցնում մյուսին և չի եղել մի դերակատարում, որ սիրով
ու ջերմությամբ չընդունվի հանդիսականների կողմից: Բե-
մում ինքն իրեն չկրկնելու, միշտ նոր մարդ ստեղծելու
սկզբունքը դարձել է արտիստի ստեղծագործական նշա-
նաբանը:

«Մեր սիրելի արտիստը» — այդպես են կոչում Մելի-
տոս Ղապարյանին՝ Մեղրիում, Գորիսում, Սիսիանում և
Ղափանում: Նա միանգամայն արժանի է ժողովրդի այդ

գնահատությանը և վաստակավոր արտիստի կոչմանը, որին արժանացավ 1966 թվին:

Զջերը գիտեն, որ Մելիտոս Ղազարյանը բացի արտիստական գործունեությունից կրավում է նաև արևմտաեվրոպական և ռուսական դրամատուրգիայից թարգմանություններ անելով: Դրանք պայմանագրային հանձնարարություններ չեն, արտիստն այդ գործն անում է ներքին մղումով, սիրով ու անշահախնդիր՝ իր գիտելիքները հարստացնելու նպատակով: Վերջին տարիների ընթացքում նա թարգմանել է՝ Կարամպինի «Խեղճ Լիպա», Բերտոլտ Բրեխտի «Արդարադատություն», «Կավճե շրջանակ» և «Գողը», Էդուարդո դե Ֆիլիպպոյի «Գողն արքայության մեջ», Գ. Ֆիգերեյրոսի «Եզովպոս», Ա. Միլլերի «Սալեմի վնասները», Ալյոշինի «Բոլորը մնում է մարդկանց» և այլ գործեր:

Մելիտոս Ղազարյանն ունի ստեղծագործական բազում մտահղացումներ ու ծրագրեր: Նա նման է այն արտիստներին, որոնք ոչ միայն այսօրվա խնդիրներով են ապրում, այլև վաղվա հեռանկարներով: Արտիստի երազանքներն այժմ ուղղված են դեպի չխաղացված դերերը. դեպի Գրուևովն ու Եգոր Բուլչևովը, և մանավանդ դեպի այն ստեղծվելիք կերպարները, որ պատկերելու են մեր հերոս ժամանակակիցներին: Արտիստը համոզված է, որ շուտով կըստեղծվեն այդ կերպարները և ինքը բեմ կբարձրանա այն մարդկանց դերերում, որոնք ամեն օր շրջապատում են իրեն:

...Երկու ժամից կբացվի հերթական ներկայացման վարագույրը. ոչ ոք չկա, ինչպես դադիճում, այնպես էլ բե-




Մեխիստ Դազարյան



Պոգեբույկո (Վահանյանի անունները տալու)



Ժորժ («Ահալոր ժողովրդ»)




Սաղարիլ («Գառնի համար»)



Ոսկան (Եղաբ որդի)



Պարսիկ զինվոր («Գլուխ-պուլի») 1



(«Ահալուր ծնողներ») ժուր



Դոկտոր Բալանձոնի (սկզբնական երկվորյակներ)

մում. միայն դեկորներն են կանգնել բեմի կիսախավարում:
Մելիտոս Ղազարյանը դուրս է գալիս ճարդասենյակից:
Նա արդեն հագել է իր բեմական զգեստը, կպցրել է կեղ-
ծամը. մտնում է բեմ, զգույշ քայլում է նրա մի անկյունից
մյուսը, ապա մոտենում նախաբեմին և հայացքով դառնա-
լով դեպի հանդիսասրահը մտքում կրկնում է իր դերը...
արտիստը արդեն կերպարի մեջ է. սրտատրոփ, անհան-
գիստ մի զգացումով, նա սպասում է մի նոր հանդիպման
սիրած հանդիսատեսի հետ...

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is arranged in approximately 10 lines, though it is extremely faint and difficult to decipher. It appears to be a formal letter or document, possibly containing names and dates.

ՀԱՍՏ ժՈՂ. ԱՐՏԻՍՏՈՒԶԻ ԱՐՈՒՍ ԽՈՒԴԱՆՑԱՆԻ ԴԵՐԱՑԱՆԿԸ

Հեղինակ	Պիեսի անունը	Թեմադրու- թյան տա- րեթիվը	Դերի անունը
1	2	3	4
Յու. Յանովսկի	Ցասում	1931	Մարգարիտ
Վ. Վաղարշյան	Նավթ	1931	Ազի
Հ. Պարոնյան	Ատամնաբույժն արևելյան	1931	Մարթա
Ա. Շիրվանզադե	Պատվի համար	1931	Երանուհի
Ա. Շիրվանզադե	Զար ոգի	1931	Զառնիշան
Հ. Պարոնյան	Պաղտասար աղբար	1932	Սողոմոն
Գ. Սունդուկյան	Էլի մեկ զոհ	1932	Սալոմե
Գ. Դեմիրճյան	Քաջ Նավար	1933	Ուստիան
Ն. Դոզուլ	Ռեհիզոր	1933	Մարիա Անտոնովնա
Զիակոմեստի	Կորրադո	1935	Ռեզալիա
Ա. Կորնեյլուկ	Պլատոն Կրեչետ	1936	Մայր
Եկվարկին	Ուրիշի երեխան	1936	Մայր
Լ. Միքայելյան	Գոշ	1937	Արմանդուստ
Վ. Գուան	Փառք	1937	Մաթիլդովա
Մ. Գորկի	Քչնամիներ	1937	Պոլինա
Եղբ. Տուր և Եեյնին	Առերեսում	1937	Իդա
Օստրովսկի	Ամպրոպ	1937	Կարանիխա
Օստրովսկի	Անմեղ մեղավորներ	1937	Գալլիխա
Վ. Կատան	Ֆրոնտից եկած զինվորը	1938	Մայր
Շանշիաշվիլի	Արսեն	1938	Մայր
Կարասև	Փարոսի կրակները	1938	Աննա
Ա. Գուլակյան	Արշալույսին	1938	Աննա
Խուզավերդյան և Հաջազորժյան	Քող բացվեն վարդերը	1939	Տասիկ

	1	2	3	4
Եիրվանզագե	Ամերակաների վրա	1939	Մայր	
Սունդուկյան	էլի մեկ ղոհ	1939	Սալոմե	
Ն. Գոգոլ	Ամուսնութուն	1940	Ֆյոկլա	
Բ. Հավրենե	Բեկում	1941	Մայր	
Մելիք Քոչարյան	Մոր սիրտը	1942	Մայր	
Ա. Բարսեղյան	Կամո	1942	Մայր	
Մուրացան	Ռուզան	1942	Մամքան	
Հ. Պարոնյան	Պաղտասար աղբար	1942	Սողոմե	
Մուրացան	Գեորգ Մարգարետունի	1943	Իշխանուհի	
Գ. Սունդուկյան	Խաթարալա	1945	Խամփերի	
Գ. Յաղչյան	Ջույա	1945	Մայր	
Ս. Սարգսյան	Սոս և Վարդիթեր	1945	Մայր	
Ա. Բարսեղյան	Կովածաղիկ	1946	Շողո	
Վ. Շողերյան	Ջավահիր	1946	Ջավահիր	
Ենթսպիր	Օթելլո	1946	էմիլիա	
Հ. Քոչար	Պաշտպանության IV գիծը	1947	Պելագեյա	
Մ. Քոչարյան	Հարազատ մարդիկ	1947	Մայր	
Եիլեր	Սեր և խարդավանք	1947	Միլերի կինը	
Եիրվանզագե	Պատվի համար	1948	Երանուհի	
Ա. Ա. Պապայաններ	Սեր առանց խարդավանքի	1948	Անուշ	
Ն. Ջարյան	Տնամերձ ալգին	1948	Պայծառ	
Ս. Վուրդուն	Վագիֆ	1948	Ֆիրուզա	
Ա. Դարբնի	Երբ բացվում է մանուշակը	1949	Ջար-Նամի	
Կորնելյուկ	Մակար Դուրրավա	1950	Օլենա	
Ա. Բարսեղյան	Քեզ դժվար է մոռանալ	1950	Սաթենիկ	
Գ. Մդիվանի	Բարի կամքի մարդիկ	1952	Կամա	
Սունդուկյան	Խաթարալա	1952	Խամփերի	
Բրաունսկի և				
Կարնաուխովա	Ալվան ծաղիկը	1952	Դայակ	
Ա. Կորնելյուկ	Փռնու պուրակը	1952	Կովչիկ	
Ռոզով	Նրա բարեկամները	1952	Աննա	
Ոսպենսկայա և	Մուռ հայելիների թագավո-			
Գուբարյով	րութունը	1952	Իրար	

1	2	3	4
Յա. Գալան	Սերը լուսարացին	1953	Օլենա
Զ. Դիկկենս	Դավիթ Կոպպերֆիլդ	1954	Տրուրվուդ
Մինկո	Առանց անունները տալու	1955	Պոնմա
Պայազատ	Հարսանիք	1955	Խաթուն
Կ. Սիմոնով	Մի սիրո պատմություն	1955	Կատյա
Յ. Սուլդար	Ցասամանի այգում	1955	Ազաֆոնովնա

ՀԱՍՈՒՆ ԺՈՂ. ԱՐՏԻՍՏ ՎՐՈՒՅՐ ՓԱՆՈՑԱՆԻ ԴԵՐԱՑԱՆԿԸ

Յու. Յանովսկի	Ցասում	1930	Վասիլ բիձա
Վ. Հարությունյան	Թաղմանակատում	1930	Դաշնակցա- կան սպա
Լ. Սաղաթեյան	Երկու կյանք	1930	Տիգրան
Վ. Հարությունյան	Խիզախում	1930	Զալիլ
Բ. Լավրենյով	Բեկում		Ուսպենսկի
Դ. Յուրմանով	Խռովություն	1931	Զեռաով
Դյերով	Երբորդ հերթափոխը	1931	Վոլոցյա
Պ. Պոռյան	Հացի խնդիր	1932	Հաքուլ
Դայրեչյան	Անտառի քույրը	1932	Գրիգոր
Պ. Պոռյան	Ցեցեր	1932	Ուսուցիչ
Հ. Պարոնյան	Պաշտասար աղբար	1933	Երկաթ և Սուր
Դուդոնի	Հյուրանոցի տիրուհին	1934	Կոմա և ղուքս
Ջիակովսկատի	Ոճրագործի ընտանիքը	1935	Մոնսինյոր
Երվանդադե	Զար օգի	1935	Ոսկան
Սունդուկյան	Խաթարալա	1936	Խաչի
Մասս և Կուլիչենկո	Այգիները ծաղկում են	1936	Վարորդ
Վ. Գրինվուդ	Գործազուրկին արգելված է սիրել	1936	Հարրի
Ենթադիր	Օթելլո	1937	Բրաբանցիո
Կ. Գուցկով	Ուրիշ Ակոստա	1937	Մանասե
Օստրովսկի	Անմեղ մեղավորներ	1938	Շմադա

1	2	3	4
Սունդուկյան	Պեպո	1938	Գիքո
Շիրվանզադե	Պատվի համար	1938	Վարդան
Օստրովսկի	Գալլեր և ոչխարների	1938	Զուգունով
Շիրլեր	Ավազակներ	1939	Շպիգելբերգ
Քաջվորյան	Գևորգ Մարզպետունի	1935	Հովհաննես
(ըստ Մուրացանի)			կաթողիկոս
Շկվարկին	Ուրիշի երեխան	1940	Յուսուֆ
Վ. Փափազյան	Ժայռ	1940	Բաղդասար
			ամի
Ն. Օստրովսկի	Փոթորկածիններ	1940	Մեքենավար
Ամո Խարազյան	Հատուցում	1941	Սարգիս րիձա
Գ. Մդիվանի	Պատիվ	1941	Ալմաս Խան
Բաֆֆի	Սամվել	1941	Արբակ
Մոլիեր	Սկապենի արարքները	1942	Արզան
Կ. Սիմոնով	Պարազայի շաղանակներին		
	ների տակ	1943	Ստեֆան
Ա. Ա. Պապայաններ	Մեծ հարսանիք	1943	Սուրեն
Սուխով-Կորիլին	Կրեչինսկու հարսանիքը	1944	Կրեչինսկի
Բ. Հավրենյով	Հանուն նրանց՝ ովքեր ծո- վում են	1944	Մովսիս սպա
Ն. Զարյան	Վրեժ	1945	Վիլի Բոշ
Մ. Քոչարյան	Կույր երաժիշտը	1945	Վարորդ
Ա. Ղարաբաղյան	Գաղտնի գործակալը	1946	Բենո
Վ. Մանվելյան	Հայրը	1946	Հայր
Շիրլեր	Սեր և խարդավանք	1947	Միլեր
Գորկի	Քշնամիներ	1947	Ցակով Բար- դին
Դ. Դեմիրճյան	Քաջ Նազար	1948	Նազար
Ն. Զարյան	Աղբյուրի մոտ	1949	Բալաբեկ
Մովզոն	Կոնստանտին Զասլոնով	1949	Կրոպյա
Ս. Վուրջում	Վազիֆ	1950	Շեյխ

Օստրովսկի	Անտառ	1950	Սշատուլիվցե
Ա. Կոբնեյևսկ	Մակար Դուբրովա	1950	Մակար
Յա. Գալան	Ոսկի արծվի ներքո	1950	Պուկովիչ
Երովանզադե	Մորզանի խնամին	1950	Մինթոն
Դյակոնով	Օժիտով հարսանիք	1952	Մատվեյ
Դ. Յաղչյան	Մախված տունը	1952	Դատախազ
Կարաշալե	Կորսված նամակը	1952	Կացուվենկու
Դուդոնի	Վենետիկյան երկվորյակներ	1952	Արլենկին
Յ. Սոլոգար	Աշխարհի աստղը	1952	Վարպետ
Ա. Գուլակյան	Անհանգիստ մարդիկ	1953	Թաթիկյան
Դուբարյով և Ուսպենսկայա	Մուռ հայելիների թագավոր- բուքյունը	1953	Պարեո
Ն. Ջարյան	Փորձադաշտ	1953	Բալաբեկ
Յա. Գալան	Սերը լուսարացին	1953	Փոստատար
Զ. Դիկկենս	Դավիթ Կոպպերֆիլդ	1954	Նկարիչ
Օստրովսկի	Բանուկ կայանում	1954	Ուսանող
Ետեն	Անձնական գործը	1955	Կոլոկոլչիկով
Յ. Սոլոգար	Յասամանի այգում	1955	Երչկին
Ի. Ֆրանկո	Դողացված երջանկություն	1955	Միկոլա
Ա. Երովանզադե	Նամուս	1955	Հայրապետ
Դուդոնի	Երկու տիրոջ ծառա	1955	Դոկտոր
Ա. Բարմեդյան	Կամո	1956	Բակլաշկա- Ջինզեր
Ս. Վարդանյան	Պատիվ	1956	Սողոմոն Մի- նայիչ
Սլոբոդակոյ	Հանգուցյալի հարուքյունը	1956	Սոխիկյան
Հ. Արրահամյան	Սոս և Վարդիթեր	1956	Հեթում
Բալզակ	Խորթ մայրը	1956	Դատական քննիչ

1	2	3	4
Ս. Աճեմյան	Հաղարան բլրով	1957	Նազիր
Ս. Գրիգորյան	Կշտամբանք	1957	Բարսեղ
Ս. Սարգսյան	Նաիրյան բարդի	1957	Ադրբեջանցի
Հ. Պարոնյան	Մեծապատիվ մուրացկան- ներ	1957	Դերասան
Յառ-Յույ	Բայֆուն	1958	Հու-գույ
Դրայզեր	Ամերիկյան ողորդություն	1959	Դատախազ
Բազիլյակի	Սասանայի աշակերտը	1959	Նոտար
Գ. Յաղչյան	Անահիտ	1960	Անուշավան,
Մ. Քաշարյան	Զումշուդ Վարանգացի	1961	Իսախան
Ֆարր	Գիշատիչ կինը	1961	Ռումի
Ժ. Հարությունյան	Մադիկների աշխարհում	1962	Պողոս
Ա. Բաբայան	Սիրտը կանչում է	1963	Գարուշ բիձա
Լյաբիշ	Մզոտե գլխարկ	1962	Հայր
Լ. Միքայելյան	Վարազդատ	1963	Իշխան
Լ. Արրահամյան	Սայաթ-Նովա	1964	Բավադ
Ժ. Ավետիսյան	Խոտառատի Մատուրը	1964	Մատուր
Մ. Քաշարյան	Տունը նոր փողոցի վրա	1965	Սարգիս
Լևիտինա	Դատավճիռ	1965	Կողովսին
Ա. Բարսեղյան	Պըլը-Պուդի	1965	Պուդի
Կ. Տրենյով	Լյուբով Յարովայա	1965	Զիր
Օստրովսկի	Ուշահաս սեր	1966	Մարգարիտով
Եիլեր	Ավազակներ	1966	Մառա
Մուստայ Քարիմ	Լուսնի խավարման գիշերը	1966	Դերվիշ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԻՍՏՈՒՆԻ ԱՐՓԻՎ ԳԱՋԱՋՅԱՆԻ ԴԵՐԱՑԱՆԿԸ

1	2	3	4
Յաղարհի	Խանում	1937	Խանում
Երվանդադե	Զար ոգի	1937	Մանան
Նար-Դոս	Սպանված աղավնի	1937	Սաթիկ
Երվանդադե	Պատվի համար	1937	Մարգարիտ
Պարոնյան	Պաղտասար աղբար	1937	Մարթա
Գ. Սունդուկյան	Պեպո	1937	Կեկել
Գ. Սունդուկյան	Էլի մեկ զոհ	1937	Բարբարե
Վ. Եկվարկին	Ուրիշի երեխան	1938	Զինա
Երվանդադե	Նամուս	1938	Սուսամբար, Մարիամ բաջի
Գ. Մդիվանի	Հայրենիք	1938	Դատո
Գ. Սունդուկյան	Խաթարալա	1938	Քեթևան
Հացադործյան, Խուզավերդյան	Ուրախության սրինգ	1938	Հասմիկ
Ա. Կորենյուկ	Պլատոն Կրեչետ	1938	Վալլա
Մ. Փոշարյան	Կույր երաժիշտը	1938	Անահիտ
Վ. Հարությունյան	Անհաղթները	1939	Գիլգա
Ս. Աճեմյան	Դատավճիռ	1939	Լենա
Ա. Արաքսմանյան	Ատելություն	1939	Ինեզ
Միրաքյան	Իլլիլի լապտերը	1939	Վարդուշ
Վ. Մանվելյան	Հայր	1939	Յլուրա
Եղբայրներ Տուր և Շեյնին	Առերեսում	1939	Փսենյա
Գ. Սունդուկյան	Պեպո	1940	Էփեմիա
Դ. Դեմիրճյան	Քաջ Նազար	1940	Փերիշան
Զ. Զարարի	Սեիլ	1940	Գլուկուշ

1	2	3	4
Երվանդազի	Նամուս	1940	Գյուլնազ, Սանամ
Երվանդազի	Զար ոգի	1940	Շուշան
Հ. Պարոնյան	Շողոքորթն	1940	Թերեզա
Լ. Միքայելյան	Գոշ	1940	Վազգանուշ
Վ. Շողերյան	Գնացք	1941	Ֆլորա
Երվանդազի	Պատվի համար	1941	Երանուհի
Ա. Օստրովսկի	Անմեղ մեղավորներ	1941	Եկամիկնա
Վ. Մանվելյան	Լավարի որսը	1941	Նազան
Ա. Խարազյան	Կիսակայարանում	1941	Դուռնաշա
Լ. Մանվելյան	Սասունցի Դավիթ	1941	Դավթի քույրը
Օս. Մետինե	Մաղմուկազի Ֆիֆի	1941	Պամելլա
Ի. Պետրով	Շախմատի խաղ	1941	Վերա
Ա. Ղարազյուսյան	Փոքորիկ մի բաժակ շրում	1941	Աննա
Ազայան (բեմ. Վ. Հարությունյանի)	Անահիտ	1942	Սաթենիկ
Գ. Շարբալյան	Սայաթ-Նովա	1942	Սոնա
Կորենյուկ	Պլատոն Կրեշտ	1942	Մայա
Ն. Զարյան	Վրեժ	1942	Ռախսա
Վ. Մանվելյան	Լավարի որսը	1942	Ալվարդ
Լ. Միքայելյան	Վարազդատ	1943	Թամար
Ու. Հաչիբեկով	Արշին մալ ալան	1943	Գյուլշարա
Հ. Պարոնյան	Պաղտասար աղբար	1943	Անուշ
Ս. Պայազատ	Հարսանիք	1943	Բուրաստան
Գ. Սոմգոմյան	Բաղնիսի բոխշա	1943	Էլիզաբեթ
Հ. Պարոնյան	Ատամեարդյան արևելյան	1944	Սոֆի
Հ. Պարոնյան	Երկու տիրոջ ծառա	1944	Մարթա
Լ. Միքայելյան	Վարազդատ	1944	Աշխեն
Ա. Բարսեղյան	Կովածաղիկ	1944	Արև
Ա. Պապայան	Մեծ հարսանիք	1944	Գոհար
Լ. Մանվելյան	Մազա	1944	Էլեն
Ա. Մաշխատով	Պարտիզանուհի	1945	Պաշկա Կո- վալյուկ

1	2	3	4
Ա. Բարսեղյան	Մակիշ և Մացիկ	1945	Մանյակ
Հ. Ոսկանյան	Սոս և Վարդիթեր	1945	Վարդիթեր
Գ. Երեցյան	Ուշ լինի՝ նուշ լինի	1946	Եռդիկ
Ա. Յազարեյի	Բայդուշ	1946	Սալմահ
Գ. Յաղչյան	Ջոյա	1946	Գրեհախեն Բուշ
Երվանդազի	Զար ողի	1946	Ջավահիր
Երվանդազի	Պատվի համար	1947	Ռեզալիա
Երվանդազի	Նամուս	1947	Շապանիկ
Կորենյան	Պլատոն Կրեչետ	1947	Հիդա
Մ. Քոչարյան	Հարազատ մարդիկ	1947	Արփինե
Անտոնով	Մեր երիտասարդությունը	1947	Լյուբա Ջալ- ցևա
Ի. Նազարով	Կրտսեր քույրը	1948	Մարֆա
Ա. Օստրովսկի	Անմեղ մեղավորներ	1948	Կորինկինա
Ս. Վուրդուն	Վազիֆ	1948	Խուրաման
Ն. Ջարյան	Տնամերձ ալդի	1949	Պայծառ
Պուշկին	Քարե հյուր	1949	Դոննա Աննա
Մ. Քոչարյան	Հին հիմնդրություն	1949	Վարդանուշ
Օ. Վասիլև	Երկրային դրախտ	1949	Ռայնա
Ֆյոդորով	Ժանապարհներ	1950	Ուստինա
Ա. Պապյան	Մարդակերներ	1950	Միսիա Բուլ
Հ. Բելերյան	Հազարան բլրով	1951	Կախարդուհի
Եիլլեր	Սեր և խարդավանք	1951	Տիկին Միլլեր
Օստրովսկի	Արդյունավոր պաշտոն	1951	Վիշնևսկայա
Ա. Չեխով	Արջ	1952	Սոֆյա
Մ. Քոչարյան	Ուսողիլներով կինը	1952	Սոսաննա
Գ. Գազարյան	Խաչատուր Արուսյան	1953	Թադուհի
Գ. Յաղչյան	Ծախված տունը	1953	Նաչիրա
Հ. Պարոնյան	Պաղտասար աղբար	1953	Սողոմոն
Ա. Գուլակյան	Անհանդիստ մարդիկ	1953	Հեդինե
Զ. Դարյան	Ջնծադիկ	1953	Նազանի

1	2	3	4
Գ. Սունդուկյան	Պեպո	1953	Շուշան
Ն. Զարյան	Աղբյուրի մոտ	1953	Պայծառ
Օ. Վասիլե	Երկրային դրախտ	1954	Սլավկա
Շեքսպիր	Օթելլո	1954	Էմիլիա
Մուրացյան	Ռուզան	1954	Թենի
Ն. Զարյան	Փորձադաշտ	1954	Մարգո
Ցա. Գալան	Սերբ լուսարացին	1954	Օլենա
Սուխոդո Վորիլին	Կրեչինսկու հարսանիքը	1954	Լիդա Պետ- րովնա
Ա. Ղարազյուլյան	Գաղտնի գործակալը	1954	Փայլուն
Բալարան և Սոբկո	Հարյուր միլիոն	1954	Մարիա
Շիրվանզադե	Զար ոգի	1955	Զառնիշան
Զ. Դիկկենս	Դավիթ Կոպպերֆիլդ	1955	Տրուդուդ
Օստրովսկի	Անմեղ մեղավորներ	1955	Կրուչինինա
Կ. Կրապիվա	Ով վերջինն է ծիծաղում	1955	Աննա Պավ- լովնա
Վ. Շկվարկին	Ուրիշի երեխան	1956	Օլգա Կարա- ուզովա
Ջիակոմոտտի	Կորբագո	1956	Ռոզալիա
Ա. Բարսեղյան	Սիրո երգը	1956	Եկատերինա Ալեքսանդրով- նա
Մուլեր	Ակամա բժիշկ	1956	Լյուսինդա
Ե. Ֆարր	Գիշատիչ կինը	1957	Ազաթա
Սումարոկով	Մամա	1957	Շուշանիկ
Լ. Ներսիսյան	Նշանդրեք	1957	Զարեկ
Գ. Բես	Աղյուսե մարդը	1957	Սաթո
Գոգոլ	Ամուսնություն	1957	Ֆյոկլա
Ա. Արաքսմանյան	Վարդեր և արյուն	1958	Սաթո
Փ. Հարությունյան	Սրտի արատ	1958	Բերբերյան
Ֆլետչեր	Ինչպես կառավարել կնոջը	1958	Ստեֆանիա

1	2	3	4
Ա. Բարայան	Սիրտը կանչում է	1959	Թամարա
Մ. Օվչիննիկով	Ուրբշի հետքերով	1958	Թամարա Ավետիսյան
Ա. Շիրվանզադե	Ավերակների վրա	1959	Նոյեմզար
Գոլդսոնի	Դոն Գրիգորիոս	1959	Ջիլզա
Բ. Նուշիշ	Փիլիսոփայության դոկտոր	1959	Սպասեիշ
Ի. Սաֆարյի	Աչքի բժիշկ	1959	Սանամ
Բ. Շուռ	Սատանայի աշակերտը	1960	Միսիս Դաշեն
Սալինսկի	Թմբկահարուհին	1960	Տուրիկովա
Գ. Տեր-Գրիգորյան	Դարնան անձրե	1960	Սիրան
Գ. Սունդուկյան	Ավերակների վրա	1961	Սալոմե
Ա. Պարենիս	Աֆրոդիտեի կղզին	1961	Գլորիա Պա- տերսոն
Շիրվանզադե	Արամի	1961	Կատո
Յան-Յույ	Թայֆուն	1961	Շի-պին
Ա. Բարայան	Մոր սիրտը չի խաբի	1962	Մանուշ
Ա. Պապայան	Անվանակոչություն	1962	Նինա Համ- բարձումովյան
Սումարոկով	Ես, իմ հարսնացուն ե...	1963	Սիրուշ
Կրոնին	Բրոուդիի ամբողջը	1963	Մարգրետ
Գ. Դեմիրճյան	Քաջ Նազար	1963	Ուտիան
Գ. Տեր-Գրիգորյան	Իմ սիրելի ժորժ	1964	Գոհարինե
Լ. Միքայելյան	Վարադզատ	1964	Աստինե
Ժ. Հարությունյան	Հիվանդ № 199	1964	Մորաքույր
Պապաս	Պահանջում է ստախոս	1964	Նիցա Կիցա
Հ. Պարոնյան	Մեծապատիվ մուրացկան- ներ	1965	Շողակաթ
Գ. Տեր-Գրիգորյան	Թռչնակը վանդակում	1965	Փայլիկ
Հր. Ղափանյան	Հեկլերի Ֆիննի արկածները	1966	Պոլի մորա- քույր
Ա. Աֆինոզենով	Մաշնեկա	1966	Վերա Մի- խայլովնա
Ր. Սեյրանյան	Լեռներում ամպրոպ է	1966	Ազի Նարաթ

ՀԱՍՆԱԿԱՆ ՎԱՍՏԱՆԻ ԱՐՏՈՒՄՆԵՐԻ ՄԵԼԻՏՈՍ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԳԵՐԱՑԱՆԿԸ

1	2	3	4
Ա. Պապայան	Մեծ հարսանիք	1945	Տիգրան
Նար-Դոս	Սպանված աղավնի	1945	Մարգարյան
Շիրվանզադե	Պատվի համար	1946	Էլիզբարով
Շիրվանզադե	Զար ոգի	1946	Գիտ Դանիել
Շիրվանզադե	Նամուս	1947	Սեյրան
Գ. Ցաղչյան	Զոյա	1947	Պարտիզանա- կան ջոկատի հրամանատար
Գ. Սունդուկյան	Պեպո	1947	Զիմզիմով, Կակուլի
Ա. Բարսեղյան	Քեզ դժվար է մոռանալ	1949	Մակար
Տ. Շամիրխանյան,			
Հ. Ղափլանյան	Հետախույզներ	1949	Սմիլին
Շիրվանզադե	Մորգանի խնամին	1949	Մինթոն
Մ. Քոչարյան	Ուսողի ինքնուրույն կինը	1949	Արզար
Հ. Պարոնյան	Առաջնաբերության արևելյան	1949	Թովմաս
Ն. Զարյան	Աղբյուրի մոտ	1950	Համբարյան
Գ. Սունդուկյան	Էլի մեկ զոհ	1950	Սարգիս
Դ. Գազարյան	Խաչատուր Աբովյան	1950	Խաչատուր Աբովյան
Շանշիաշվիլի (ըստ Ա. Ղազարբեկի)	Ձորի նահապետ Գոչան	1950	Օնիսե
Գ. Բորյան	Բարձրագույն դաս	1950	Կոմիտար Ա- վայան
Լ. Հարութ (ըստ Դիկկենսի)	Դավիթ Կոպալերֆիլդ	1950	Ցուրա Հեյ
Ց. Սուրբար	Աշխարհի աստղը	1950	Դերեֆ
Գ. Գաբրիելյան և Մ. Զամանյան	Արարատյան դաշտի աղ- ջիկը	1951	Կոլտնտեսութ. նախագահ

1	2	3	4
Երթմանզադե	Նամուս	1951	Բարխուդար և ծիպլի Մատուր
Երթմանզադե	Ավերականների վրա	1951	Լևոն
Գուղոնի	Վենետիկյան երկվորյակներ	1951	Դոկտոր Բա- լանձոնի
Մուրացան	Ռուզան	1951	Զուլա
Զ. Զարարի	Ալդըն	1952	Դովլաթով
Ս. Վուրդուն	Վադիֆ	1952	Ենյա Ալի
Հ. Պարոնյան	Պաղտասար աղբար	1952	Պաղտասար աղբար
Դոզուլ	Ամուսնություն	1952	Պողկոլյասին
Գ. Տեր-Գրիգորյան,			
Լ. Կարապոզյան	Այս աստղերը մերն են	1952	Աթանես
Ա. Օստրովսկի	Անմեղ մեղավորներ	1952	Միլովորով
Ենթապիր	Օթելլո	1952	Ռոդրիգո
Երվանդ	Սեր և խաղաղությանը	1953	Միլեն
Երթմանզադե	Զար ոգի	1953	Ոսկան
Երթմանզադե	Պատվի համար	1953	Սադաթել
Ա. Գուլակյան	Արշալույսին	1953	Քյոխավա
Ա. Կորնեյուկ	Պլատոն Կրեշտ	1953	Բուրլիկ
Գ. Սունդուկյան	Էլի մեկ զոհ	1954	Սարգիս
Վ. Մինկո	Առանց անունների տակու	1954	Պոցելուկո
Բ. Բալարան և	Հարյուր միլիոն	1954	Պրոֆեսոր
Վ. Սորկո			Կրատով
Դորրոժինսկի և	Մեծ հերետիկոս	1955	Գալիլեո Գա- լիլեյ
Պերսոնով			Գիթո
Գ. Սունդուկյան	Պեպո	1956	Պրոֆ. Եահ- րազով
Ի. Սաֆարի	Ալթի բժիշկը	1956	Ենյա Ալի
Ս. Վուրդուն	Վադիֆ	1956	Հեթում
Լ. Արրահամյան	Սոս-և Վարդիթեր	1956	

1	2	3	4
Գ. Բորյան	Կամուրջի վրա	1956	Տոնյան
Ա. Բաբայան	Սիրտը կանչում է	1956	Գարուշ րիձա
Է. Ֆաբր	Խորթ մայր	1956	Ռուսին
Էդուարդոս դե Ֆի- լիպպո	Գողը դրախտում	1956	Դոն Զիրո
Գ. Բորյան	Կամուրջի վրա	1962	Հուսիսյան
Ժ. Կոկտո	Սարսափելի ծեղկներ	1962	Ժորժ
Ժ. Հարությունյան	Հիվանդ № 199	1962	Մանթաշյան
Շիրվանզադե	Ավերակների վրա	1964	Աթանես Ֆե- րանդույան
Գ. Ֆիգերեյդո	Աղվեսն ու խաղողը	1964	Եզովպոս
Գ. Ռոզիգաստ	Ֆեդերալ ոստիկանության կոմիսարը	1964	Ցեսեն
Վ. Փափազյան	Ժայռ	1964	Սահակ
Լ. Աբրահամյան	Սայաթ-Նովա	1965	Հերակլես
Վոյնիշ	Բոռ	1965	Մոնտանելի
Ե. Ստյան	Զարչուլը Արթին աղա	1965	Արթին աղա
Ա. Բաբայան	Նրանք նորից են հանդի- պում	1966	Ենգոյան
Վ. Դանիելյան և	.		
Զ. Տատինցյան	Ռոմեոն, Զուլիհտան և		
(ըստ Օտլենաչեկի)	խավարը	1966	Դերձակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախարարների գիտարան	.	.	.	.	.	.	3
Արուս հուլանյան	.	.	.	.	.	.	9
Վրույր Փանոյան	.	.	.	.	.	.	34
Արփիկ Ղազազյան	.	.	.	.	.	.	64
Մելիտոս Ղազարյան	.	.	.	.	.	.	84
Արուս հուլանյանի գերացանկը	.	.	.	.	.	.	107
Վրույր Փանոյանի գերացանկը	.	.	.	.	.	.	109
Արփիկ Ղազազյանի գերացանկը	.	.	.	.	.	.	118
Մելիտոս Ղազարյանի գերացանկը	.	.	.	.	.	.	118



Ներսես Ոսկանի Կազրամանով

ՇՐՋԱՆԱՑՈՒ ՔԱՏՐՈՆՆԵՐԻ ԲԵՄԵՐՈՒՄ

Խմբագիր՝ Ա. Հունանյան
Նկարիչ՝ Ս. Ստեփանյան
Գեղ. և տեխ. խմբագիր՝ Վ. Աղաջանյան
Վերստուգող՝ սրբագրիչ՝ Ս. Բարայան

ՎՅ 08959

Գատվեր 2555

Տիրած 1000

Հանձնված է արտադրության 20/X 1968 թ.:

Ստորագրված է տպագրության 25/XII 1968 թ.:

Քուլթ տպագրական Ն 2, 70×108¹/₂տ: Տպագրական 7,75 մամ. =
4,58 պայմ. մամ., հրատ. 3,9 մամ. + 14 ներդիր: Գինը 37 կոպ.:

ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր մամուլի կոմիտեի
պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության Ն 6 տպարան,
Երևան, Քումանյան փ. Ն 51:

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0047627

A ^T
10168